



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

52

Թարգմանություն № 3

Փ. Վ. ԲԵԼՈՐՈՒՍ

# ԹԱՓԱՌԱԿԱՆ ԲՈՒԼՆԱՐ

Ք Ր Ն Ե Լ Յ Օ Կ Ո Պ

Պ Լ Տ Մ Ի Լ Ծ Ք

ԲԱՆԿԱՆԱՆ ԱԶԳԵՐԻ ԱՊՍՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

— 1925 —

Թարգմ.


ԵՐԵՎԱՆԻ ՓՈԼ. ՆԱԼԲԱՆԳԵՐՈՒՆ

— 20 —


Տպարան „ՇԻՐԱԿ“ Ալեքսանդրապոլ

1005

(27)







1032-I

2005

8-3

Փ. Վ. ԲԵԼՈՐՈՒՍ

12 OCT 2009

բ-43

ւ

# ԹԱՓԱՌԱԿԱՆ ԲՈՒԼՆԱՐ

1001  
1948



ՊԱՏՄԻԱԺ



Թաղմ.

ԵՐԵՎԱՆԻ ՓԱՆ. ՆԱԼԲԱՆԿԱՆ

Տպարան „ՆԻՐԱԿ“ Ալեքսանդրապոլ.

1905

(27)



8805

Дозволено Цензурою С.-Петербургъ. 19 Января 1905 г.

ԹԵՓԵՌԵԿԱՆ ԲՈՒԼՆԵՐ



## ԹԵՓԵՌԵԿԵՆ ԲՈՒԼՂԱՐ

1816 թվին, հէնց այն րոպէին, երբ սկսում է մեր պատմութիւնը, փառահեղ Դուհայի ափին մտախօհ կանգնած էր մի երիտասարդ, կամ աւելի ճիշտն ասած, գեռ պատանի, Գիրջալի անունով: Նորա շրթունքների վերայ գեռ նոր էր սկսել երեւոյ ազլամազը, բայց գէմքն արդէն առնացել էր և հոգսերով ծածկել: Նորա ածխի պէս սև աչքերը փայլում էին, իսկ թուխ մազերը, դուրս թափւած չալմայի տակից, կարծես ամաչում էին իրենց ծածկող թուրքական այդ զարդարանքից: Նորա հագին կար թուրքական շորեր, որոնք այլանդակում էին նորա ճկուն կազմւածքը: Նա ծնւել էր Բուլղարիայում. մայրը նորան կեանք տալով



մեռաւ, իսկ հօրը նա չէր էլ յիշում: Փանդախտի  
ժամանակ մեռան նորա վերջին բարերարները,  
որոնք նորան վերցրել էին սնուցանելու: Գեռ  
ևս չօրս տարեկան հասակում նա օտգ էր արտ-  
ծացնում, ուտում էր շոր հաց և ընում չոր  
գետնի վերայ: Թէև նա ծնւել էր գիւղում, բայց  
նորան դուր չէր գալիս գիւղական կեանքը.  
այդ պատճառով, հէնց հագիւ էր սկսել մեծա-  
նալ, նա սկսեց թափառել անցնելով խրճիթից  
խրճիթ, գիւղից գիւղ, սկսեց գրգել սլաւոն-  
ներին տուել թուրքերին:

Տասներեք տարեկան հասակում նա վճռեց  
գնալ Իսմայիլ քաղաքը. տեղ հասնելով թախան-  
ձեց Մահամեդ փաշային տալ իրեն ձի և զէնք:  
Փաշան զարմացաւ տղայի պարզութեան վերայ,  
բայց և այնպէս հրամայեց տալ նրա խնդրածը:  
Երբ նա տեսաւ զէներն, ամենից առաջ խից  
եաթաղանը և պինդ սեղմեց կրծքին, ինչպէս  
մի թանկագին խաղալիք, իսկ երբ բերին ձին,  
ուրախութիւնից վեր ցատկեց կախ ընկաւ վզից  
և համբուրեց հրեղէն աչքերը: Տեսնելով պա-  
տանու յնձութեան նշանները, փաշան վերցրեց  
նորան իւր մօտ ծառայութեան և հրամայեց  
հաղարապետին պարապել նորա կրթութեամբ:

Մինչև տասնեկէց տարեկան հասակը նա  
յաջողութեամբ սովորեց զինւորական արհեստը  
և ձի նստելն, այնպէս որ շատերը նորան նա-  
խանձում էին. ինչ որ նուցա համար մեծ գրծ-  
ւարութիւն էր, այդ նորա համար խաղալիք էր:  
Փրինակ, նա ձին զիլ ըշած ժամանակ ցած էր  
բերում նիզակով ձողի ծայրից բաշ արած օղա-  
կը, ատրճանակի հարւածով անշեղ խփում էր  
նետած զրաւին, եաթաղանի մէկ հարւածով  
թոցնում էր կիստուկի (манекенъ) գլուխը  
և տիրապետում էր այն բոլոր զէնքերին, որոնք  
նորա ձեռքն էին ընկնում: Նորան, այդ ճար-  
պիկութեան համար փաշան տեղաւորեց պա-  
տառական լծիկնապահ ալբանացիների մէջ: Սա-  
կայն, չնայելով փաշայի սիրելուն և նորան  
սպասող փառքուն ապագային, Կիրճալին անտար-  
բեր էր զէսդ այդ բոլորն և միշտ հակառակ էր  
վարւում մահմեդական սովորութիւններին:

Ահա այս գրութեանն էր այդ պատանին  
մինչև մեր նորա հետ ծանօթանալը Գունայի  
ափին: Արևն արդէն խոնհարւում էր զէպի լեռ-  
ները, ցոլացնելով իւր ծիրանի ճառագայթները  
ջինջ գետակում, որի վերայ արծիւը մի քանի  
պտոյտներ անելով լծաւ զէպի Բաղկաները: Կիր-



ջալին նայեց նորա յետիկց և խորր հառաչելով ցածր արտասանեց.

—Է՛հ, ես էլ արժիւ եմ. նա տգամարդի թեկերով ճախրում է ամպերի տակ, իսկ ես ամում եմ հաւատի թեկերով՝ երկնքում: Չեմ ուզում լինել փաշայի ոտրուկն և մեռնել աշխարհի անարդ մահով, ինչպէս մեռնում են իմ եղբայրները. ես ցանկանում եմ ապաստութիւն և ձեռք կրօնեմ թէ ինձ և թէ նոյն համար:

Նա նորից հառաչեց և վճռական քայլերով գիմեց գէպի բազար: Մօտենալով բազարի գոներին, նա հանգիպեց ինչ որ առնաւուտի, Միխայիլեակիմ անունով:

—Բարե, ընկեր, ասաց առնաւուտը: Ո՛ւր էիր գնում... Կիրճալին լուռ էր:

—Ի՞նչ ես լուրեղ... Գուցէ ջահել աղջկայ յետիկց էիր ընկել և կամ թփերի տակ սպասում էիր մի որեւէ ոտկով լի հարուստ հայի: Է՛հ, հերիք գառ ձեռնաս... Աչքերիցդ երևում է, որ մենք միմեոյն ծառի պտուղն ենք: Իզուր չէր ասում ալբանացի Կորգալը քո մատին, թէ դու կամ աւազակ կլինես, կամ մի հերոս, որ պիտին գեռ երբէք չի եղել:

—Այդ գէպրում դու կլինես իմ բարեկամը,

վրայ բերեց Կիրճալին: Չուեր շան միտ չի ուտիլ\*):

—Իհակէ... և ես պատրաստ եմ հնազանդւել ժո հրամաններին: Տարիքով դու հազիւ իմ տղի տեղն ես, բայց ես համարում եմ քեզ ինձ հրամանատար:

—Մի շոգորթիք ինձ, Միխայիլեակիմ, որովհետ իմ սիրտն անդրադէլի է:

—Ո՛չ, ես չեմ շոգորթիքում, այլ միայն օգտւում եմ հանգամանրից խօսել քեզ հետ: Առա դու սիրում ես ազատութիւնը:

—Կեանքիցս տւելի: ✕

—Որ այդպէս է, լռիր և եկ ինձ հետ:

Եւ նորա պարիսպների տակով գնացին գէպի Յենգերեան դուռը: Պահապաններն արգէն պատրաստւում էին փակել գոները, որովհետ մուկզղիններն արգէն ցրել էին պատնէշների և մէջէլմների մինարանների վրայ, որտեղից հնչուն իզամով հրաւիրում էին հաւատացեալներին ալօթքի: Չուտով նորա ներս մտան քարանասարայր, որը լցւած էր ծխով, առնաւուտներով, բուլղարներով ու ալբանացիներով: Նորա ծխում էին չիբուխներ և խմում սև սուրճ:

\*) «Воронъ ворону глазь не выклюестъ».



Բութըը նստած էին յատակի վերայ, խրճիթի մէջ տեղում փայլփայլ լամպայի առաջ։

Նորեկներին տւին ծխամորճներ, երկար շիպուխներով և մի մի բաժակ սուրճ։ Գիրջալին ծխում էր, խմում, լսում և լռում էր։ Քիշ յետոյ մօտեցաւ նորան ծեր ալրան Կօղալն և բարձրաձայն ասաց։

— Լսիր, հորդուկ... Ամօթ չէ՞ քեզ, սլաւոնիկ, քր կրում ես այդ շալման և վիզ ծռում մուսուլմանին։

Գիրջալին խից շալման և գէն չարտեց։

— Որդեակ... դու գէն քցեցիր փալասը, բայց և այնպէս էլի ստրուկ մնացիր։ Աւելի լաւ է առա, չէս ցանկանում աղատուել այդ լծից։

— Դա իմ անկեղծ ցանկութիւնն է։

— Զե՛ս վախենում մահից։

— Ո՛չ։

— Որ այդպէս է, դու պարտաւոր ես աղատել և քեզ և մեզ այդ լծից։

— Ի՛նչպէ։

— Սպանիր Մահամեզ փաշային։

Գիրջալին վեր լծաւ. նա գունատ էր։

— Ի՛նչպէս... Սպանել իմ բարերարը... Երբէք...

— Այդ գէպրում գնա և բաց տրա մեր դաւադրութիւնը. տաա նորան, որ այսօր հասել է նորա վերջին ժամը, և որ սլաւոնեան ժողովուրդն այսօր նրանից սպասում է կամ կատարելալ աղատութիւն և կամ յաւիտենական գերութիւն... Գնա... փաշան կվարձատրի քեզ։

Գիրջալին գոցում էր, ինչպէս ջերմոյ, այդ խօսքերը նրան վիրաւորեցին։

— Ո՛չ, ես ձեզ չեմ մատնի, բայց և սպանել չեմ կարող։

— Դուրս, անտէր թափառաշրջիկ, ստրուկի՞ որդի։ Գնա և սոցա տիրոջդ ստաների տակ։

— Լսիր, ծախու հոգի, ճշաց կատաղութիւնից ինքն իրեն կօրցրած, Գիրջալին և ձեռքը քցեց եաթազանին։— Ես սլաւոն եմ և երբէք սչորի ստրուկը չեմ եղել։

Եւ նա բարձրացրեց եաթազանը. բայց Միխայիլեակիմի ուժեղ ձեռքը զսպեց նորան։

— Հանգստացիր, ասաց նա, և զօրծով հաստատիր որ դու սլաւոն ես։

— Այո, այո, հաստատիր, բաձականչեցին բոլորը։

— Համաձայն եմ, վճռական ձայնով ասաց նա. թող ինձ Միխայիլեակիմ։



—Ո՛հ, դու մեր առաջ երգւիր, որ խօս-  
րիչ հաստատ կմնա, ասաց նա:

—Երբու՞մ եմ, հանդիսաւոր, թէ՛ն բռնու-  
թեամբ, արտասանեց պատանին:

—Կեցցէ... Կիրջալին մերն է... մահ փա-  
շալին, ազատութիւն սլաւոններին...

Բոլորը շրջապատեցին Կիրջալուն և սկսե-  
ցին շնորհակալութիւն յայտնել:

—Դու մի մտածի՛ր, թէ մենք առանց բո-  
օգնութեան չենք կարող եօլայ գնալ, ասաց  
Կօրկալը. —Մենք շատուր ենք և մեղանից ամեն  
մէկը պատրաստ է սպանելու հալածչին, բայց  
գորա համար հարկաւոր է յարմար գէտը, մինչ-  
դեռ դու միշտ նորա մօտն ես, մանաւանդ այ-  
սօր. փաշան տօնում է իւր գտեր ծննդեան  
տօնը. քեզ կկանչեն շեղգարի վերայ ածելու  
և երգելու բալլարական երգեր... Դէ, երգիր  
նորա վերջին երգը սրով, երբ կլուի ամրոցի  
գոնից հրացանի զարկը: Իոմայիլի բնակիչները  
մեր կողմն են, մենք պատճառ չունենք յաջո-  
ղութեան վերայ կտակածելու: Կյաղթներ և կեր-  
պենք ազատութեան օրհներգը:

—Կյաղթներ, կյաղթներ, կրկնեցին դա-

ւաղիրներն և կամաց կամաց ցրեցին իրենց  
տները:

Կիրջալին նոյնպէս տուն գնաց. նա խիտ  
գրգուած էր և զունաթափ: Բայց և այնպէս  
լարեց շեղգարան, որեց սրի բերանն և սպա-  
սում էր մինչև նորան կկանչէին պալատից:



Երբ դուրսը բոլորովին մթնեց, պալատը  
լուսավառեց հազարաւոր ճրագներով: Այդ օրը  
փաշան խնճոյր էր սարսիկ իւր գտեր ծննդեան  
առթիւ և ամբողջ րազարը փառաւոր հիւրա-  
սիրում էր: Չնայելով իւր դաժանութեանը՝  
Քեայա-Մահամեդ փաշան խիտ սիրով հայր էր  
և իւր միակ գուստը գեղեցիկուհի Սեկիմին ասուա-  
ծացնում ու երկրպագում էր ինչպէս մի կուռք:  
Նորա մօտն էր միշտ անբաժան հաւատարիմ  
ծառան, ներքինի հակիմը. նա պտտմել էր շա-  
տերին, որ Մահամեդը տառներկու տարեկան  
հասակում սիրահարեց ստրկուհի վրացի Սար-  
բա-Միրայիլի վերայ. նորա սէրը գէպի Սառան  
անսահման էր և նա նորան համարում էր նոյն իսկ



Մահամկից աւելի լաւ։ Բայց երբ ծնուեց Սեփիման, նա զրկուեց կնոջից, և այդ խակ պատճառով իւր ամբողջ սէրը կենդանացրեց ազգայ վերայ։ Սառայի մահից յետոյ փաշան դարձաւ մուայ և 14 տարւայ ընթացքում նա թաշկինակ չըցեց, ըստ արեւելեան սովորութեան, իւր բազմաթիւ հարճերից և ոչ մէկի վրայ։

Մահամկը նստած էր հարեմի չրեզսենեակում. արաբաժան կնոջուկի ծուխը լցւած էր օթեաններում և զրգում էր զւարճանալու։ Այերաստրեայ սափորներում եռում էին զանազան մրգերից շինած շարբաթները։ Ոսկին, արծաթն ու ազամանը շողշույում էին բազմաթիւ ճրագների փայլից։ Նորա մօտ, տաճկական բազմոցի վերայ նստած էր Սեփիման, որի մազերը նա չոյում էր իւր անհարթ ձեռներով։ Հարճերը պարում էին և երգում, ներքիններն ածում էին զափեր, իսկ պատի յետևում սրտում էին ենիչերիների փողերը, խրփում էին ցնձղաներն և թմբուկները։ Փաշան, հիացած իւր դստեր զեղեցկութեամբ, աչքը չէր հեռացնում երեսից։ Երբ երաժշտութիւնը լսեց և հարճերը զազարեցին պարելուց, փաշան ծափուեց։ Ներս մտաւ հակիմը։

— Կանչել այստեղ Կիրջալին իւր շեղ-  
դարով, հրամայեց նա։

Մի քանի բաղկից յետոյ եկաւ նա ծառայի ուղեկցութեամբ։ Սեփիման ձեռքը բցեց քողին, որպէսզի գէմը ծածկէ, բայց Մահամկը արգելեց նորան առելով։

— Հարկաւոր չէ, նա ստրուկ է։

Այդ խօսքերը լսեց Կիրջալին և կարմրեց. Սեփիման նոյնպէս կարմրեց և մի ինչ որ անյայտ զգացմունք տիրեց նորան ամբողջապէս։ Փաշան, նկատելով իւր անշնորհքութիւնը գէպի իւր սիրելին, քնրչութեամբ ասաց։

— Երգիր, Կիրջալի, քո բուլղարական երգերից մէկը սլաւոնների մեծագործութիւններից, խփիր շեղդարայի լարերին և ուրախացրու մեզ. դու գիտես, որ ես սիրում եմ ձեր երգերը։

— Դու տէր ես, — ես ստրուկ, դու հրամայում ես, և ես պարտաւոր եմ հնազանդել, հանդարտ պատասխանեց Կիրջալին, չհեռացնելով իւր հայեացքը Սեփիմից և սկսեց վարպետութեամբ թռչնացնել շեղդարայի լարերը միացնելով նորա հնչիւններն իւր մեղամաղձօտ ձայնով բուլղարական զինուորական երգի հետ։



Սեյիման լսում էր նորան հիացած: Նորա սև աչքերը փայլում էին ջինջ փրկարար աստղի պէս, որոնց մէջ միայն Կիրճալին տեսաւ իւր փրկութիւնը: Այդ բոլէին նա մոռացաւ իւր տւած երգումն, ազատելի գերութիւնից և այն վիրաւորանքից, որը հասցրեց նորան փաշան «նա սարուկ է» խօսքերով: Սեյիման միանգամից գերեց նորան, որովհետեւ նա ոչ մի ժամանակ չէր տեսել այգալիսի գեղեցիկ կին բայ երեսով: Սեյիման նաճեց նորա սիրտն, և նա ակամայ հետեւում էր իւր մտքերի հոսանքին մոռանալով բոլորն, ամեն ինչ: Ո՛չ թէ այն, որ նա հագած էր թանկագին շորեր, այլ ամեն բան, որ նորա վերայ կար, հիացնում էր Կիրճալուն մինչև ինքնամոռացութիւն: Իւր բարձրութեան վերայ նստած Սեյիման նորան թւում էր մի թաղուհի, նորա ուղեկից աստղը: Նորա համար ոչ միայն թագի պատիւներն, այլ և եգեմը գեռ քիչ էին:

Երբ նա վերկացաւ բարձերից և իւր սեւորակ աչքին ամեց հարեմով, Կիրճալու սիրտը թրթռաց և քիչ մնաց ցած քցէր ձեռքից շեղ-դարան, նորա ձայնը հանգաւ, և ձեռքը կարծես քնեց լարերի վերայ: Սեյիման խօսոյն

նկատեց, որ գերեց պատանուն և կարմրեց. նա նորից ընկաւ բարձերի վերայ: Նորա կուրծքը յուզում էր և նա նայում էր Կիրճալուն, որը կանգնած էր ուրախութիւնից պապանձած: Բայց ալդ հայեացքը քաջալերեց նորան. նա նոր ոյժով խփեց լարերին և արդէն ուզում էր շարունակել ընդհատւած երգն, երբ յանկարծ գրտում լսեց հրացանի ձայնը: Հարձերն իրար անցան, փաշան վեր յատկեց և սկսեց հանդըստացնել նոցա: Սեյիման նայեց Կիրճալուն: Հարւածները կրկնւում էին, լսում էին ազագակ և յուսահատ ձայներ, ներքինին շնչասպառ ներս ընկաւ և յայտնեց.

— Արաններն ապոտամբիկ են և պահանջում են փաշայի մահը:

— Լաւ, ասաց Մահամեդն, աչքերն սլորելով, ես խփոյն կգնամ նոցա մօտ...

Համբարելով Սեյիմին, նա թռաւ դէպի դռները Կիրճալու մօտից, որը ձեռքը րցեց կաթաղանին, որպէսզի խփէ փաշային, բայց Սեյիման յուսահատ ազդակեց:

— Կիրճալի, փրկիր իմ հօրը:

Գա յետ պահեց նորան և նա դուրս վազեց փաշայի յետիւց:



Ենիշերինները բաջութեամբ կուռւմ էին արանների հետ. վերջիններս գոռգոռում էին և պահանջում անձնատուր լինել, որովհետև փաշան ուղանում է:

— Ո՛չ, ես կենդանի եմ, ձեզ բնաջինջ առնելու համար, ճշաց փաշան և ընկաւ արանների վերայ: Նոցանից մէկն արդէն բարձրացրել էր ետեւաները, և արդէն ուղանում էր փաշային, բայց Կիրճային մի հարւածով թռչրեց նորա գլուխը: Նկատելով Կիրճայու մասնակցութիւնը, Արաններն սկսեցին ողապակել. «գաւաճանութիւն, գաւաճանութիւն» և բոլորը փախուստ գործան: Նոցա յետեից սկսեցին հալածել ենիշերիներն և ջարդել: Զուռով ամեն ինչ հանգարուեց, որովհետև, չնորհիւ փաշայի եռանդին, խռովարարները հալածւեցին և կոտորւեցին:

Վերջացնելով իւր գործը փաշան մօտեցաւ Կիրճայուն, որը շաղախում էր եղբայրական արխնով, ձեռքը դրեց նորա ուսին և ասաց.

— Այս բոլորից զու ազա ես իմ պահակի վերայ:

— Ո՛չ թէ ազա, այլ գաւաճան, եղբայրառական, ... արտառանեց գիակաների մէջ բն-

կած վիրաւորներից մէկը: Փաշան խփեց նրան սրով:

— Մարգտապան, հեծե՛ծ եց նա իւր վերջին խօսքը:

Դա ծերուկ ալբան Կօրկային էր:

Մահամբը հրամայեց հաւարել գիականներն և բցել Դունայը, իսկ վիրաւորներին և կալանաւորներին — հոտած ներքնյարկը:

— Վաղը ես նոցա գատաստանը կտեսնեմ, ասաց նա, ներս մտնելով հարեմը: Կիրճային տեղն ու տեղը մեխուել էր և հէնց այնտեղ էլ փուեց գետնին. յուսահատութիւնը, կատաղութիւնն և խիղճը տանջում էին նորան:

— Այո, խկապէս ես գաւաճան եմ, եղբայրառական, հեծե՛ծ ու՛մ էր նա ուժասպառ. — Բայց Սելիման, Սելիման... Ա՛խ սրբան նա սիրուն է...

Յուրտ գիշեր էր. ցոյրը խոշոր կաթիլներով նստել էր նորա վերայ, բայց նա չէր դուռն ոչ ցուրտ, ոչ խոնաւութիւն: Օգի մէջ տնջում էր լուսնին, իսկ նորա գլխում եռում էր



փոթորիկը: Պառկելով մի առ ժամանակ, նա նստեց և շոշափեց ղէմը, բնած չէ արդեօք: Տեսիլքներն անցնում էին նորա առաջից. ծերուկ ալբան Կորդար կանգնած էր նրա աչքի առաջ, արիւնշաղախ կրծքով, և կարծես յանդիմանում էր նորան, անւանելով՝ դաւաճան ու մարգասպան: Նա պինդ խփեց աչքերն, աշխատելով շմտածել նորա մասին, բայց ալբանի ուրականը հետեւում էր նորան:

— Գոնեա շուտով լուսանար, ասաց նա, հաւատալով, որ լոյսի հետ կանհտանան և ուրականները: Այդ ժամանակ նա նայեց հարեմի լուսամուտներին և նոցանից մէկի մէջ տեսաւ կնոջ կերպարանը:

«Գա Սելիման է», մտածեց նա և մոռացաւ իւր տանջանքները: Բայց յանկարծ նա լսեց մէկի ձայնը, որ կանչում էր իրան: Կիրջալին ցնցեց և նորա առաջ նորից պատկերացաւ ալբանի ուրականը: Չայնը կրկնեց. նա ոտի կանգնեց և սկսեց գննել դիակները:

— Կիրջալի... աղաւթի բնձ, լուեց մի դիակի մօտից: — Դորա համար ես յաւիտեան չնորհակալ կլինեմ քեզանից:

— Միխայիլեակէ՛մ... բացականչեց նա վախեցած:

— Հանգստացիր, պատասխանեց արնաւուրը, թէկուզ փաշայ էլ լինիս, ես քեզ չեմ նախանձի, միայն փրկիր ինձ:

— Դու վիրաւորւած չեմ:

— Ո՛չ, ոչ մի բերւածք, բայց ես գերադասեցի գետում խեղդուելը, քան ընկնել հստած ներքնյարկը. այդ պատճառով մնացի մեռածների մէջ:

— Լաւ, հետեիր ինձ:

Հասնելով բաղարի մէջ տեղը, Միխայիլեակէմը կանգնեցրեց Կիրջալուն և առաց.

— Թէև դու մեզ դաւաճանեցիր, և ես այժմ կարող եմ քեզ սպանել, բայց դու փրկեցիր իմ կեանքն և ես երախտապարտ եմ քեզ: Երբ դու կարիր կզգաս իմ օգնութեանը, արնաւուտնի Փարիկայի տկանջին մի խօսք ասա, և ես պատրաստ կլինեմ քեզ ծառայելու:

Եւ Միխայիլեակէմն անյայտացաւ փողոցում. իսկ Կիրջալին ջարդւած ֆիզիքապէս և



բարոյապետ տուն դարձաւ և փռուց անկողնի վերայ:

Հետեւեալ առաւօտեան պատժում էին ապստամբներին, իսկ Կիրջային, բայց աղա-  
յական աստիճանից, վարձատրուց ոսկեայ-փուն-  
ջուխաւոր կարմիր ֆէսով, սպիտակ շաւմայով  
և սկիւռի մորթուց կտրած մուշտակով: Այդ  
բոլորը կազմում էին աղայի արտօնութիւնները,  
որոնք չնորհւում էին մահմեդականներին իրենց  
հղբայրակիցներին:

Այժմ նորա իշխանութեան տակ կային 500  
բաջ գլխւորներ և նա, եթէ ուզենար, կարող  
էր զրկել կեանքից իւր տիրոջը. բայց Սելիմայի  
մի հայեացքի համար նա պատրաստ էր զոհել  
նոյն իսկ իւր կեանքը: Նորա պատճառով նա  
հազաւ այդ անարդ մուշտակը, նորա համար  
նա կուրանար և իւր հաւատը: Եթէ միայն  
ասէր Սելիման «ցանկանում եմ» և նա կսկսէր  
երկրպագել Մահմեդին:

Այսպէս անցան օրեր, շաբաթներ, ամիս-  
ներ ու տարիներ. երիտասարդ աղայի սէրը  
սաստկանում էր, բայց նա չէր կարողանում  
տեսնել Սելիմային: Սակայն նա յայտը չէր  
կտրում և զւարճութեան համար վարժում էր

սրամարտութեան արհեստին, ջիւրիւղ խաղացնե-  
լուն և ամենի ձիեր գտելուն:

Մի անգամ երեկոյեան, երբ նստած խոր-  
հում էր թէ ինչքան երախտամոռն է Սելիման  
դէպ ինքը, որ ամբողջ տարւայ շրջանում մի  
անգամ էլ է չթոյլ տուեց տեսնել իրեն, երբ  
յանկարձ հասաւ սուրհանգակ թաթար բրտնա-  
թաթախ ձիու վերայ և կանգ առաւ պալատի  
դրան առաջ: Թաթարի դէմ գտնու եկաւ ներ-  
քինի հակիմը և ներս տարաւ փաշայի մօտ:  
Ամեն մարդ զիտէր, որ սուրհանգակը պատե-  
րադմի կամ որսի լրաբեր էր, այդ պատճառով  
շրջապատեցին նորա ձին, հղբակայնելու թէ  
նրալիս յուրերով էր եկել սուրհանգակը, որով-  
հետեւ թաթարը, կատարելով այդ յանձնարա-  
րութիւնը ոչ մի կերպ չէր ասիլ, ինչո՞ւ է  
եկել ինքը:

Մի բանի բռնակից յետոյ Կիրջային կան-  
չեց Փաշայի մօտ, որն ասաց նորան.

— Ես գիտեմ քո բաջութիւնը, Կիրջայի,  
այդ պատճառով յանձնարարում եմ քեզ  
անցնել արանական պահակի գլուխն և վաղն  
արեւածագին դնայ պատերազմ Սիլիստրիայի  
վրայ. բուլղարական շնորն ապստամբել են, նո-



յա հարկաւոր է խաղաղացնել: Յուրով հոմ, որ  
այս պէպրը բո առաջ բարձրանալու ճանապարհ  
բաց կանի: Գնա և մի խնայիր այդ շներին.  
Թաթարը բեզ կառաջնորդի:

Կիրջալին գլուխ տուեց և դուրս եկաւ. նո-  
բանից յետոյ կանչուեցին միւս գնդերի գլխաւոր-  
ները, որոնց փաշան տուեց զանազան յանձնա-  
րարութիւններ:

Իւր կողմից Կիրջալին հրաման տուեց Ալ-  
բաններին պատրաստուիլ կռւի համար: Բոլորը  
վրա պրծան կատարելու հրամանը, այն ինչ  
ինրը սկսեց ման գալ սենեակում և գատել  
բարձր ձայնով. «Փաշան քշում է ինձ սրտի.  
Թաթարը ցոյց կտայ սրսը, իսկ ես պարտա-  
ւոր եմ խփել: Այն մարդիկ, որոնք ուզում են  
ձեռք բերել ազատութիւն, նորա համար բու-  
ղարական շներ են... Սայասիր, մահամեկա-  
կան, չուտով կխփէ և քո վերջին ժամը... Դու  
իմ օգնութեամբ խոյս տար մահից, այժմ ես  
կխորտակեմ բեզ հէնց քո գէներով. դու ինձա-  
նից թաքցնում ես Սելիմային, ես կթարցնեմ  
բեզանից քո կեանքը... Հերիք աշրակապուկի  
խաղանք:

Այդ բոպէին դուրը հանգարտ բացեց և

սենեակ մտաւ ներքինի հակիմը: Կիրջալին  
զարմանքից հաղիւ շագաղակեց, բայց ներքի-  
նին մատերը չբռնեցներին սեղմեց, ի նշան  
լուծեան և ցածր առաց.

— Գեղեցիկ Սելիման ցանկանում է բեզ  
յաղթութիւն և խնդրում է վերցնել այս մատա-  
նին իւր կողմից յիշատակ, որը դու պիտի կախ  
տաս պարանոցիցդ և պահես իբրեւ թալիսման:  
Նա անհամբերութեամբ կսպասի քո վերադար-  
ձին: Բայց լռիւր, եթէ կեանքը բեզ համար  
թանկ է. ապա թէ ոչ մենք երկուստ էլ կո-  
րած ենք:

Եւ հակիմն անյայտացաւ, թողնելով աս-  
շած Կիրջալուն իւր տեղում: Վերջապէս ուշրի  
գալով, սկսեց տնդդել բնծան: Դա մի մա-  
տանի էր՝ Բազգադի յակիմի թով, չէրբեղա-  
կան ուլունքներով զարդարւած, ոսկեայ չղթա-  
յով ամրացրած վզից կախելու համար: Դա փա-  
թաթում էր մի մետաքսեայ թաշկինակի մէջ,  
ասեղնադարձած հայերէն ոսկեայ տառերով  
Ս. Մ. Կ. և այս խօսքերով. «Առտւած ստեղ-  
ծեց սէրը մարդկանց համար»: Կիրջալին համ-  
բուրեց այդ գրւածքը, կախ տուեց մատանին  
պարանոցից, իսկ թաշկինակը դրեց կրծքի վե-



բայ: Այժմ նա հանդարտուեց, հաւատացած լինելով, որ Սեկիման չէր մոռացել իրեն. և ընկնելով անկողնի վերայ նա անցկացրեց գիշերւայ մնացորդը բազցր ցնորքներով:

Հազիւ էր լսյաջ ծեղծգել, Կիրճալին արգէն օտի վրայ էր և նստած իւր շար ձիւ վերայ անցնում էր ալբանների շարերը. մինեոյն ժամանակ նա աչքի ծայրով նայում էր հարեմի լուսամուտներին: Նոցանից մէկում նա նկատեց Սեկիմային, որը դուրս էր նայում բարձրացրած վարագուրի յետեից. նոցա աչքերն իրար հանգիւղեցին և այդ հայեացքով նորա երգւեցին միմեանց յաւիտենական սիրով:

Այդ ժամանակ դուրս եկաւ Փաշան զօրքը գիտելու և աղան, իբրի աւագ-գնդապետ, սրով սղջունելով նորան, հրամայեց զօրքին շարժել և հեծելագօրը կարգով ուղղեց գէպի քաղաքադուռը: Կիրճալին մի վերջին հայեացքը քցեց հարեմի լուսամուտներին և նորա սիրտը թրթռաց, երբ նա տեսաւ, որ Սեկիման ճանապարհ է գնում իրեն իւր հայեացքով: Հասնելով Գունայի ափերին և նաւակներում տեղաւորելով զօրքը, նա նուեց հոսանքի ուղղութեամբ

մտածելով միայն, որքան կարելի է շուտ վերադառնալ:

Երկու օր ճանապարհ գնալով, Կիրճալին գուրս եկաւ Սիլիստրիայի ափը և արագութեամբ թռաւ գէպի Սիլիստրայի գիրքերը: Երբորդ օրը նա իւր առաջ տեսնում էր հրդեհուղ Սիլիստրիան, լսում էր լծնդանօթների և հրացանների որոտը. Բերդը դեռ էս անվնաս էր և նորա մէջ բաջութեամբ պաշտպանում էին բուլղարներից պաշարած թուրքերը: Կիրճալին յիշեց իւր ծննդեան վայրն և արտասուեց. բայց այդ ժամանակ նորան ուղեկցող թաթարն առաց.

— Ագա, էդ բուլղաներն են մերոնց ջարդում:

Կիրճալին գողաց և ուզում էր արդէն գուռալ ալբաններին.

— Բարեկամներ, խաշի և ազատութեան համար... Ի՛նձ հետեէր.

Բայց այդ վարկեանին նա զգաց մատանու կրծքին շփւելն և Սեկիման պատկերացաւ նորա աչքերին:

— Ալլահ... ալլահ... ազադակեց նա, ինձ հետեէր, տղերք.

Եւ գուրս բաշելով սուրբ յառաջ ուղացաւ.



նրա յետիւց թռան ալբաններն ինչպէս դռմէշ-  
ների հօտը. և բուլղարները յանկարծակի բռնը-  
ւելով յետիւց սկսեցին փախչել պատերազմի պաշ-  
տից: Սիլիստրիայի ապառաւ թուրքերը միա-  
ցան հեծեալգօրի հետ և սկսեցին արինահեղ  
կոտորածը, որը շարունակեց մինչև ուշ գիշերը:  
Իւրարանչիւր թուրք աշխատում էր, որ-  
բան կարելի է աւելի գլուխներ թռցնել,  
նորանց ականջները կտրելով լցնել տոպրակը,  
որովհետև իւրարանչիւր զոյգի համար յաղթող-  
ները ստանալու էին որոշ գումար և այդպիսով  
կիմացէր նաև սպանւածների թիւը:

Սիլիստրիայի փաշան առատ վարձատրեց  
հեծեալգօրին իրեն յանձնած ականջների հա-  
մար, իսկ Կիրջալուն նւիրեց մի զոյգ արարա-  
կան ձի, երկու հազար ոսկի լիբա, մի շղթայ  
թանկագին բարերով և մի սամուր մուշտակ,  
կանաչ թաւշէ երեսով:

Այսպիսով Կիրջալին եղբայրական արեան  
գնով գնեց յաղթողի փառքը, բարձրացաւ մու-  
սուլմանների առաջ և ընկաւ իւր ազգի անէծրի  
տակ: Տառն օրւայ ընթացքում ալբանացիներն  
այրում և թալանում էին բուլղարական գիւղերն  
և այդ աւարառութիւնը զեկաւարում էր Կիր-

ջալին: Գրեթէ հարիւր գիւղ բոլարովին հիմնա-  
յատակ եղան և տասը կաշէ տոպրակ լիբր  
բուլղարական ականջ ուղարկեց Ստամբուլ: Այդ  
օգնութեան համար Իսմայիլի փաշան ստացաւ  
Սիլիստրիայի փաշայից քսան բեռ աւար և եր-  
կու հազար գլուխ տաւար: Ինչ վերաբերում է  
ալբաններին, նորա ինքն իրենց վարձատրեցին  
թալանով:

Մի քանի օրից յետոյ Կիրջալին հասաւ  
Իսմայիլ իրրէ յաղթող: Քաղաքից ոչ հեռու նա  
պատահեց մի ինչոր աղբատի, որն առաց նորան:

— ձիւտ էր ասում ծեր Կորկալը. երկու  
անգամ դու պաւածան եղար, վրայ երեքին դու  
կգտռնաս աւաղակ: Մնաս բարով... վրէժն  
իմ վրաս:

Եւ աղբատն անյայտացաւ:

— Էլի՛ այդ թափառաշրջիկ Միսայիլեա-  
կիմը, մռնչաց նա սեղմելով եաթաղանիւր:

Մահամեղ փաշան Կիրջալուն հանդիպեց  
մեծ սպորմածութեամբ: Նա նորան նոտեցրեց  
իւր կողքին և հրամայեց մատուցանել ծխամորճ,  
որը համարում էր փաշայի կողմից սպորմածու-  
թիւն, իսկ աղայի համար մեծ պատիւ: Բայց



Կիրջալին գժզոն էր գործանից. նա ցանկանում էր տեսնել Սելիմալին:

Մի քանի ժամանակից յետոյ Մահամեդի մօտ եկաւ Հաճի-Ահմեդը՝ Վիդզենի փաշան, իւր սրդի շիւսէյինի հետ: Մահամեդը զինուորական կրթութեամբ Ահմեդի աշակերտն էր. այժմ նա եկել էր խնդրելու Մահամեդին, սովորեցնել իւր սրդուն այդ իսկ արհեստը, որովհետեւ ինքը ծեր էր: Մահամեդը ոչ միայն համաձայնեց, այլև խոստացաւ նորան իւր գտեր՝ Սէլիմի ձեռքը:

Կիրջալին երբ լսեց այդ բանը, բիշ էր մնում խելքը թուցնէր, և դուրս թաւ հակիմին որսնելու: Գտնելով նորան հարեմի ալդու պատի տակ, յարձակեց նորա վերայ ինչպէս մի ուրուր և խեղդելով ասաց.

—Քաֆթաւ... Այսօր ես անպատճառ պիտի տեսնեմ Սելիմին, կամ... և նա ցոյց տուց հաթաղանը: Ծերունին զսղաց և բնիւս ծընկնելի վրայ:

—Այդ անմտութիւն է, բացականչեց նա: Դու կիտրոյնես թէ բեզ և թէ ինձ:

—Բայց կանեմ այն, ինչ որ ցանկանում եմ:

—Սելիմի անունով երդւեցնում եմ բեզ

չլիմարանալ... սպասիր մի փոքր... գտնէ մի օր...

—Լաւ, ես կսպասեմ, բայց կէս գիշերից ոչ երկար, և այն ժամանակ եթէ դու ինձ չես օգնի մտնել հարեմը, ես ինքս եօլայ կերթամ առանց քո օգնութեանը:

Եւ Կիրջալին հեռացաւ, թողնելով Հակիմին մտածմունքի մէջ, թէ ինչպէս է վարելու:

Այդ անցքը պատահեց Բամազանի (մահմեդականների մեծ պատր) նախորդ օրը, երբ թուրքը երեկոյից այժի պաշար է հաւաքում միւս օրւայ համար և տրաքելու չափ ուտում է: Կիրջալին ներս մտաւ իւր սենեակը և զինեց համբերութեամբ, համարելով իւրաքանչիւր վայրկեանը մինչև կէս գիշեր: Սրելով հաթաղանի բերանը, նորա գլխում մի միտք ծագեց. զիմել Միխայիլիմի օգնութեանը, և նա կամենում էր արգէն գնալ, որսնել նորան, երբ յանկարծ ներս մտաւ ներքինին և ցածր ասաց.

—Ինձ ուղարկել է հակիմը, շորերդ փոխիր և եկ իմ յետևից: Այս ասելով նա նորան տուց ներքինու հաղուստը, որը Կիրջալին լսեց և իսկոյն փոխւեց. յետոյ շորերի տակը գնելով սրած հաթաղանը, նա դուրս եկաւ սե-



նեակից: Ներքինին տարաւ նորան պահակի մօ-  
տից գէպի այգու դուռը, ներս քաշեց նորան  
այգին և շնչաց ցած ձայնով.

— Սպասիր այտեղ, միայն զգոյշ եղիր:

Յուրտ գիշեր էր և բամին թափանցում  
էր ներս: Բայց Կիրջալին, վառւած Սելիմի սի-  
րով, ուշը չէր դարձնում: Պալատի լուսամուտ-  
ներից երևում էին ճրագներ, անցնում էին ինչ  
որ ստերներ, բայց նա համբերութեամբ սպա-  
սում էր մինչև վերջին ճրագի հանգչելը: Նորա  
սիրտը սաստիկ բարախում էր և նւաղում: Նա  
անիծում էր իւրաքանչիւր բռնի, որը նորան  
թուում էր ամբողջ մի դար... Վերջապէս բա-  
նալին ճրնկաց ցանկապատի փակների մէջ,  
լսեց հազի ձայն և Կիրջալին՝ ճանաչելով Հա-  
կիմի ձայնը թուաւ գէպի նա: Ներքինին խոց  
նրա ձեռքն և, շնչալով նորան զգոյշ լինել,  
հանդարտ անցկացրեց նորան հարեմի դռներով,  
իսկ յետոյ մի ինչոր մութ միջանցքով:

Թէև Կիրջալին վախկոտ չէր, բայց երբ  
նորա անցնում էին խտրխտիւրով, վախեցաւ,  
թէ մի գուցէ հակիմը գաւաճանում էր իրեն և  
առաջնորդում կամ գէպի փաշան և կամ գէպի  
բաղդաւոր Հիւսէյնի սրի տակ: Բանալիի անց-

քերից երևում էին ճրագներ, լսում էր հողա-  
թափների շփշփոց և ինչ որ մթմթմոյ:

Կիրջալին դողդողում էր ինչպէս ջրմուկ,  
բայց ներքինին հանգստացրեց նորան և վեր-  
ջապէս նորա կանգ առան մի դրան տուած,  
որտեղից բուրում էր զանազան անուշահոտ  
խոտերի և թուրքական խնկի հոտը: Ներքի-  
նին եղունգներով շանգուց գուռը, որն իսկոյն  
բացուեց, չեմբում երեաց մի կնոջ կերպարանը,  
որը բռնկւով նրա ձեռքից ներս քաշեց սե-  
նեակն և փակեց գուռը բանալիով:

Կիրջալին գտնուում էր Սիլիմի սենեակում  
և կանգ առաւ ինչպէս մի մեղապարտ դատա-  
ւորի առաջ: Սելիման կարմրեց, երկունն էլ  
լուռ էին, այնպէս որ Զուլման, Սիլիմի դայ-  
եակը, մինչև անգամ կատաղեց:

— Ի՞նչ էր լսուել ասաց նա: Միթէ, զրա  
համար ձեզ իրար մօտ բերին:

— Կիրջալի, դու ցանկանում էիր տեսնել  
ինձ, ասաց Սելիման: Ի՞նչ ես ուզում ինձանից:

Կիրջալին ընկաւ ծնկների վրայ և խօսիւով  
նորա ձեռքը ծածկեց համբոյրներով:

— Սիլիմայ, բացականչեց նա, — ես քեզ  
սիրում եմ:



—Վեր կաց, Գիրջալի, քնըշուժեամբ ա-  
սաց նա, կանգնեցնելով նորան, նստիւր կող-  
քիս, խօսեմք:

Ազան ուրախութիւնից սեղում էր սեղմել  
նորան իւր գրկում և համբուրել, բայց ազգիկը  
վախեցած չեա փախաւ նորանից:

— Ի սէր Ատուծոյ, հանգստացէր, բա-  
ցականչեց նա:

— Հանգստանալ, գառն ժպտաց նա:  
Եյն, ճշմարիտ է, ես պէտք է հանգիստ լինեմ,  
զու փաշայի գուտը ես, իսկ ես ոտբուկ, և  
համարձակեցի սիրել Սիլիմային, Հիւսէյինի  
նշանածին: Հն, հն, հն, ... Եյն, ես կհանգրս-  
տանամ, միայն քո ոտների տակ...

Եւ նա դուրս բաշեց եաթազանը. Սիլի-  
ման զարհուրած ազազակեց.

— Ուշքի եկ, Գիրջալի: Ապահով եղիր,  
ասաց նա, ես նոյնպէս սիրում եմ քեզ... բայց  
ոչսրի կինը լինել չեմ կարող:

— Հրեշտակս, մխիթարէ՛ չս... բացականչեց  
Գիրջալին: Դու, դու պէտք է խմը լինիս:

— Ո՛չ Գիրջալի, դու սխալում ես... Ես  
Սիլիմայ եմ միայն իմ հօր համար, մնացած  
բոլորի համար ես քրիստոնէութիւն եմ և իմ ա-

նունը Սառա Միլայիլեայ է: Դա իմ մօր տ-  
նունն է, այդ անունով կանչում են և ինձ:  
Իմ մայրը քրիստոնեայ էր և ինձ ծնելուց յե-  
տոյ չուտով մեռաւ: Զուլլման փոխարինեց իմ  
մօրը և կրթեց քրիստոնէական օրէնքով. այդ  
պատճառով ես չեմ կարող ուրանալ իմ կրօնը  
և լինել մահմեդականի կին:

Գիրջալին ուրախութիւնից խելագարեց և,  
բանդելով վերաբիւն, գուրս հանեց պարանոցից  
կախած Ատուածամօր պատկերիկը.

— Ա՛յ, հէնց ես էլ քրիստոնեայ եմ, ազա-  
զակեց նա—և միայն քս պատճառով դարձայ  
զաւաճան...

— Զուլլման, ճշաց Սիլիման, Գիրջալին  
քրիստոնեայ է:

Եւ նա խլիղով պատկերիկը համբուրեց և  
զլուխը թաքցրեց Գիրջալու գրկում: Ազան  
գրօջմեց նորա ճակատին փառ, տարփալի համ-  
բուրք, այն ինչ Զուլլման, խոնաւ աչքերն եր-  
կինը բարձրացրած, երկիւզածութեամբ ասաց.  
Թող օրհնէ ձեզ Ատուած, իմ որդեակներ:  
Ո՛րբան ուրախ եմ ձեզ համար:

Այդ վայրկեանին մէկը դուռը խփեց: Կան-



խառնեա Զուլման հարցրեց «ո՞վ է». դա ներ-  
քինի հափուրն էր:

— Լուսանում է, ասաց նա, ժամանակ է  
հեռանալու:

— Հեռացիր, հեռացիր շուտով, բացական-  
չեց Սելիման:

— Երգում ես ինձ յաւիտենական սիրով,  
հարցրեց ազան:

— Երգում եմ, պատասխանեց նա:

Վերջին անգամ համբուրելով ազջիւն,  
ազան դուրս եկաւ սենեակից: Ներքինին տա-  
րաւ նորան պարտէզը և, նստեցնելով թփերի  
մէջ, պատուիրեց նորան սպասել մինչև որ ինքը  
կգայ և դուրս կթողնի նորան: Կէս ժամից յե-  
տոյ հափուրը գտաւ նորան նոյն տեղը, բայց  
տրեց ցանկապատը և դուրս թողեց նորան:  
Կիրճային չնկատելով ոչ որից յաջողութեամբ  
տուն հասաւ, իսկ ներքինին ուղղեց պարտիզի  
խորքը, որտեղ այդ ժամանակ զբօսնում էր  
փաշան:

Վրայ հասաւ կէսօրը, հաւատացեալները  
աղօթքի ժամանակը. փաշան, նորա հետ և Ահ-  
մեզը ծնկի եկած աղօթում էին, երբ յանկարծ

ներս ընկաւ նոցա սենեակը հակիմը և ողջ  
մարմնով զոգալով ճշաց:

— Գժբազդութիւն... Հիւսէյինը սպանւած  
է... նորա հետ միասին սպանւած է և ներքի-  
նի հափուրը հարեմի պարտիզում:

Այդ տխուր լուրը հարւածեց երկու փաշանե-  
րին էլ և նոքա, զանց առնելով փաշաներին յա-  
տուկ ծանրութիւնը, վազեցին պարտէզ: Հիւսէ-  
յինն ընկած էր յասմիկի թփերի մէջ: Նորանից ոչ  
հեռու պառկած էր հափուրը, դիակները դեռ  
ևս տար էին, բայց ոչ մի կեանքի նշան: Ահմեզը  
ոլորում էր որդու դիակի վերայ, այն ինչ Մա-  
համեզը խորհում էր թէ լինչպէս է կատարել  
այդ գէպը: Բացի հափուրից, սրի ձեռքին էին  
միշտ պարտիզի բանալիները, ոչ որ չէր կարող  
մտնել այնտեղ: Նշանակում է, հափուրն էր սպանել  
Հիւսէյինին և, վախենալով իւր չարագործութիւ-  
նից, վերջ էր տւել իւր կեանքին: Բայց ո՞ր էր  
արդեօք եաթազանը: Որոնեցին բայց չգտան.  
իսկ սպանութիւնն, ինչպէս երեւում էր, կա-  
տարւել էր եաթազանով:

Հիւսէյինի մահւան լուրը հասաւ նաեւ Սե-  
լիմային, որը մտածում էր թէ Հիւսէյինը նկա-  
տել էր Կիրճալուն և հափուրը իւր կեանքի



զնով զնել էր նոյա զապանիրը: Ի նկատի առնելով այդ՝ նա ծնկի եկաւ և Զույլմայի հետ աղօթեց Մահակոսկանների հոգու հանգստութեան համար:

Երբ Կիրճալուն յայտնեցին Հիւսէյնի և Հափուրի մահւան մասին նա հանգստութեամբ մարբում էր իւր զէնքն և երգում սլաւնական երգը: Հասկանալի է, որ սպանւածների թաղեցին և Ահմեդը, խոնարհելով ճակատագրին, ճանապարհ ընկաւ զէսլի տուն:

—Ալլահին այգպէս էր հաճելի, ասաց նա, մնաք բարեի ժամանակ: Բայց ես կուզարկեմ քեզ մօտ իմ վեցերորդ որդուն. Սելիման նորա կինը կլինի:

Մահամեդը գլուխ տուց ի նշան համաձայնութեան և ինքն անձամբ ճանապարհ գրեց նորան մինչև քաղաքի զաները: Բաժանելով նորանից նա Կիրճալուն յանձնեց ուղեկցել նորան: Ճանապարհին Ահմեդն ասաց նորան:

—Դու ինձ դուր ես գալիս, աղա, և ես խնդրում եմ քո բարեկամութիւնն իմ փոքր որդու՝ Արզալու համար, երբ նա կգայ Մահամեդի մօտ:

—Հաճութեամբ, պատասխանեց Կիրճալին, ես նորա բարեկամը կլինիմ:

Ի յիշատակ Հիւսէյնի նա ընծայեց աղային մի ձի իւր սարքով: Ճանապարհ զնելով Ահմեդին մինչև Դունայը, Կիրճալին վերադարձաւ Իսմայիլ, մինչև անգամ մօիկ չտալով փաշայի ընծային: Ուղղելով չալման և խփելով ձիու կողքերին նա թռչում էր ամբողջ ոյժով: Նորան ուղեկցող ալբանեցիքը նայում էին նորան և ասում—«խելացիներ»:





Երկու օրից յետոյ Կիրջալին գնաց ար-  
նաուտուհի Փարիկի մօտ, որը պիտէր որտեղ  
և ո՞վ է նորան գիմօյր։ Բոյսրը նորան կախարդ  
էին համարում և այդ պատճառով հաւատում  
էին նորան. բայց նա իւր միջնորդութեանը պի-  
մոյներին միշտ պատասխանում էր. «յաւ, կա-  
ղօթեմ և դուր կստանար ցանկացածներդ»։  
Մի քանիսը սիրում էին նորան և համարում  
լաւ կին, շատերը բամբասում էին և ասում,  
որ նա կախարդ է։

Գտնելով նորա տունը Ս. Յովհաննէս եկե-  
ղեցու յետեւում, Կիրջալին ոտքով բռնեց դու-  
ռը, որը ճոռաց։ Այդ լծրխոցից գուրս եկաւ  
մի պառաւ և բաց արեց դուռը։ Ազան ներս  
մտաւ խրճիթը, որի մէջ վառուում էր վառարանը։

— Դու մենակ ես խրճիթում, հարցրեց  
Կիրջալին։

— Միայնակ, բացի գնչուհի Ջենգայից  
ոչ ոք չկայ։

— Դու չգիտես որտեղ է Միխայիլեւիկը։

— Բո ինչից է պէտք նա, աղա։

— Պէտք է տեսնեմ այս րոպէին։

— Եօթն օրից շուտ նորան տեսնել չի  
կարելի։

— Որ այդպէս է կոպանեմ։

— Ուրիշ ոչինչ հարկաւոր չէ։

— Ո՛չ։

Պառաւը վեր կացաւ և ճանապարհ գրեց  
նորան մինչև գուռը։ Ախր (փականբը) րցելով  
նա առաց ինչն իրեն. «առաջին քայլն արեւոմ  
է, Կիրջալին այնպիսիներից չէ, որ յետ դառ-  
նայ։ Որքան էլ նա գոռողանայ, բայց մենք կա-  
լող ենք խլել նորանից այդ գոռողութիւնը...  
Մի օր էլ մեր լծազուժը հարսանիք կլինի»։

Այդ ժամանակ ամբողջում ամեն ինչ գնում  
էր հին կարգով։ Միայն Մահամեդն աւելի տխուր  
էր և մինչև անգամ խոյս էր տալիս Սեյիմայից։  
Հակիմը նոյնպէս, կարծես լծէ վայրենացել էր։  
Սեյիման չէր երեւում հարեմի լուսամուտներից,  
օրովհետեւ փաշան հրամայել էր ներկել պալատի  
կողմերին։ Կիրջալին նստում էր ընծայ ոտացած



ձին. բայց բոլորը նկատել էին, որ երբ նա հեծնում էր, գունաթափւում էր և գողում: Այդ պատճառով շատերն ասում էին, որ նա սիրում էր չիւս՝ յինին. միւսներն ընդհակառակն ասում էին, որ նա ատում էր, որովհետեւ նա նորա հակառակորդն էր: Նա անխղճաբար ծեծում էր ձին և արանները պարմանում էին նրա այդ վարմունքի վերայ:

Այդպէս անցաւ մի շաբաթ: Գիրջային նորից գնաց Փարիկի մօտ, որտեղ արդէն գտաւ Միխայիլեակիմին:

— Զը, ինչ կայ, հարցրեց արնաուտը:— Ես իմ խօսքս պահել գիտեմ: Երեսում է Կորգակն իրաւացի էր ասում, որ դու վերջն աւագակ կգառնաս:

— Ո՛չ ես աւագակ՝ չեմ, վերաւորւած պատասխանեց աղան:

— Ես խոսմ չեմ ասում, այլ միայն կրկնում եմ ուրիշի խօսքերը... Բայց ինչո՞վ կարող եմ ծառայել քեզ:

— Ես սիրում եմ Սիլիմին...

— Ո՞վ է քեզ արգելում, սիրիր և խնդիրը նորա ձեռքը:

— Փաշան չի տայ, որովհետեւ նա նշանւած է Արզալու հետ:

— Է՛հ, ի՛նչ կայ... նորան էլ կարելի է ուղարկել իւր նախահայրերի մօտ, ինչպէս չիւսէյինին:

— Ահմեդը գեռ էլի հինգ որդի ունի:

— Բոլորին էլ մէկ մէկ կարելի է քոչացնել... հարկաւոր է միայն կամենալ... եաթագանի մի շարժում ամեն մէկի համար և վերջացաւ... ինրդ էլ գիտես, որքան հեշտ է այդ:

— Բայց կան ուրիշ շատ փաշաներ... իսկ նորա ունին որդիր:

— Իսկ մենք ունենք ձեռներ, եաթաղան և սրեր:

— Չերիր է հանար անես, կատակի ժամանակը չէ... Ա՛յ ինչ. ես կհամոզեմ արքաններին, իսկ դու գրգռիր Իսմայէլացիներին... կյարձակւենք ամրոցի վերայ, կսպանենք փաշային և այն ժամանակ...

— Չնորհակալութիւն, պարոն աղա... բաւական է մեզ վերայ ծիծաղես. մենք կապոտամբւենք, իսկ դու կսկսես կոտորել մեզ ինչպէս չների, ինչ է թէ փաշան պարզեւել է մի փաղարշական խօսք, իսկ Սիլիման— հայեացր,



դու արդէն թժուում ես ինչպէս կ'երկմարդ...  
նչ դա հին երգ է... աւելի լաւ է ես մի խոր-  
հրդակցեմ պառաւի հետ: Նա մեր երկուսիցն  
էլ խելացի է:

— Խորհրդակցիր թէկուզ գրոյր հետ, մի-  
այն շուտ:

Միխայիլեակիմը մտաւ միւս սենեակն,  
իսկ Կիրճալին քցեց իւր տենդոտ հայեացքը  
վառարանին և ողջ մարմնով դուրս ելաւ. մի  
քանի րոպէից յետոյ արնատուր վերադարձաւ:

— Լաւ, ապահով եղիր... Սպասիր մինչև  
կէս գիշեր և պառաւը կ'կատարէ քո խնդիրը...  
Իսկ առ այժմ գնանք միւս սենեակը:

Նորա ներս մտան Փարիկի կողքի սենեակը:  
Միխայիլեակիմը դուրս հանեց մի շիշ գինի և  
բաժակ. նորա սկսեցին խմել:

— Ո՞վ է այդ պառաւը, բիշ լուսթիւնից  
յետոյ հարցրեց Կիրճալին:

— Խելացի կ'ին է, որի մէջ շուտով դու ինրդ  
էլ կ'համոզուես:

Խիստ երկար տևեց կէս գիշերւան սպա-  
սելը, և խմեց մի քանի շիշ գինի: Վերջապէս

Փարիկի սենեակում լուեց խշխշոյ և յետոյ խո-  
սակցութիւն:

— Նայիր պատի ճեղքից, շէնչոյ Միխայի-  
լեակիմը: Կիրճալին նայեց և ճանաչեց ներքի-  
նի հակիմին: Կէս ժամայ խօսակցութիւնից  
յետոյ ներքինին դուրս եկաւ, իսկ պառաւը  
մտաւ նոցա սենեակը:

— Դէհ, պարոն աղա, Սեյիման քանը կլինի,  
բայց դու պէտք է նորա հետ հեռու փախչես,  
որովհետեւ ձեր յետեից հալածանք կ'սկսուի...  
Միխայիլեակիմը ձեզ համար թարնեւու տեղ  
կ'պատրաստի... Վաղը մութն ընկնելուն պէս,  
սպասիր ձիաւորւած Մեծ-կղզու մօտ, գինիւր  
սրբան կ'արելի է լաւ և վերցրու գլմացկուն  
ձիեր. մնացածի մասին ես հոգ կ'տանհեմ...  
Բայց դու պէտք է հպատակես ինձ ամեն բա-  
նում, հակառակ գէպրում ես հրաժարում եմ  
օգնելուց:

— Արնատուհի, ցնծութեամբ բացական-  
չեց Կիրճալին, ես սկսով կլծազեմ քեզ ծառա-  
յութեանդ համար:

— Ոսկիդ քեզ պահիր, ես ինքս ինձ  
կ'վարձատրեմ: Աստուած քեզ հետ... միտդ պա-  
հիր, վաղն երեկոյեան:



Կիրջալին գոռոզ նայեց նորան և գուրս  
եկաւ խրճիթից:

— Տեսնում ես ինչ բոբրում է... նկատեց  
Ֆարիկան— Սպասիր, շուտով կսանձահարենք  
րեկ:

— Հազիւ մեզ յաջողւի նորան սանձահա-  
րել, պատասխանեց արնաուտը. նա հնազանդ-  
ւելու համար չէ ծնւած:

— Է՛հ, թող ինքը հրամայէ... ինձ համար  
միևնայն է, միայն թէ նա մեզ հետ լինի:  
Արնաուտները պառկեցին քնելու:

Միւս օրը փաշան կանչեց աղային իւր մօտ:

— Նշանակիր մի վաշտ պատաւոր պահա-  
կի համար, Վիտտենի ճանապարհի վերայ:  
Վաղը գալու է իմ փեսացու Արզալին, պէտք  
է դիմաւորել նորան:

Կիրջալին գլուխ տուեց և հեռացաւ. բայց  
եթէ այդ րոպէին փաշան նայէր նորա երեսին,  
այն ժամանակ նա չէր կարող ստը գուրս պնել  
սենեակի շէմքից: Կիրջալին ամբողջապէս կար-  
մրեց և արհամարանքով նայում էր նորան:

Ազան կարգադրեց թամբել ձիերն և կէս  
օրին ճանապարհ քնկաւ: Ծառայ արնաուտը  
բաշում էր նորա յետեից քնծայած ձին: Իսմա-

յիլից կէս մըսն հեռու նա լծուկեց այդ ձին  
Կալուպերեան լճի ափին, ձկնորսի մօտ, իսկ  
ծառային պահապան գրեց: Անգնելով Գունայի  
երկարութեամբ, նա ամեն տեղ կանգնեցրեց  
պատաւոր պահակներ, գրեթէ մինչև Գալաց:  
Կատարելով իւր գործը, նա յետ դարձաւ:  
Արևն արգէն լծերում էր գէպի անտառը: Իզ-  
մայելը մշուշի մէջ կորել էր. սկսեց մթնել:  
Կիրջալին վերադարձաւ Կալուպերեան լիճն և  
ձիերը լծաքրեց եղեգնուտի մէջ, քցեց ետին-  
ջին և անհամբերութեամբ սպասում էր օրհա-  
ստկան րօպէին: Նորա սպասելը խիստ երկա-  
րացաւ և նա արգէն յոյսը կտրել էր յաջողու-  
թիւնից, երբ յանկարծ հեռւում նկատեց շար-  
ժուող մի խումբ, որը գէպ իրան էր մօտենում:  
Նա լծեթի շուքրեց և պատասխան ստանալով,  
շունչը բռնեց: Չարժուող խումբը շուտով կանգ  
առաւ լծփերի մօտ, ուղա արագութեամբ ցր-  
ւելով անյայտացաւ: Մնաց միայն Միխայիլա-  
կիմը բռնը ձեռքին:

— Կիրջալի, վերցրու և հեռացիր խոխոյն,  
տեսց նա:

Ազան խից ուշաթափ Սելիմին, և սկսեց  
համբուրել նորան:



—Ո՛րտեղ են ձիերը—հարցրեց արնատուրը։  
Կիրջալին ցնցեց և վազեց եզեզնուտը։  
Թռչելով ձիու վերայ նա նստեցրեց Սելիմին  
առաջն և փաթաթելով ետիւնն զով ասաց Մի-  
խայիլեակիմին։

—Յառաջ, ցոյց տուր ճանապարհը։

—Եւ նորա թռան ամբողջ ոյժով։

—Սարրա անդինս, ներսը ինձ. շէնջում  
էր նա։

Աղջկին սկսեց ուշքի գալ և նայելով աղա-  
յին լուռ հառաչում էր։

—Աղատիր ինձ, Կիրջալի, և զարծրու  
հօրս...

Կիրջալին պատասխանեց նորան համբոյր-  
ներով և ասպանդակեց ձին, որը նուցա թռչնում  
էր. սմբակները չխշխկացնում էին սառած գե-  
տինը և վախեցնում Գուլուգերեան լճում լողա-  
ցող սագերին։ Այսպէս նորա արշաւեցին մի  
բանի ժամ զաշտով ու ճանապարհներով, վեր-  
ջապէս հասնելով խիտ անտառը՝ Միխայիլեա-  
կիմր տարաւ նուցա նեղ շուղով։ Լսեց շան հաշուց,  
փայլփղեց կրակը և նորա մօտեցան մի խրճիթի,  
որը շինած էր ամենախիտ տեղում։ Միխայի-  
լեակիմը բաց արեց դուռը և ներս բաշեց ձի-

երը։ Չեմբում երևաց պառաւ բեռարաբուհին,  
որին Միխայիլեակիմը հարցրեց։

—Իշխանը տա՛նն է։

—Ո՛չ, դեռ չի վերադարձել։

—Չուտ կրակ արա և ուտելիք պաղ-  
րատիր։

—Ամեն բան պատրաստ է։

—Կիրջալին ցած իջաւ ձիուց, տարաւ  
գունատ Սելիմին խրճիթ, դրեց պատրաստի  
մարուր անկողնի վերայ։ Սելիման բնքշով թեմար  
նայեց նորան և տխրութեամբ ասաց։

—Վերադարձրու ինձ հօրս—չէ՞ որ ես  
նորս մինուճարն եմ։

—Այո, իմ էլ մինուճարն ես դու, և միայն  
իմ կեանքով կարող են խել բեզ ինձանից...  
2է որ ես բեզ սիրում եմ, Սարրա, աշերան, որ-  
բան բեզ ոչ որ և ոչ մի ժամանակ չէ սիրել։

Եւ ծնկի գալով նորա առաջ սկսեց համ-  
բուրել ձեռներն ու ոտները։

—Վեր կաց, Կիրջալի... Ես էլ սիրում եմ  
բեզ... Բայց վերադարձրու ինձ հօրս մօտ...  
Ես նորանից լծողութիւն կաղերսեմ և նա լծոյլ  
կտայ մեղ ամուսնանալու։





—Այն, թոյլ կտայ... կատալութեամբ  
բայականչեց Կիրջալին և խոշոր արցունքները  
հոսեցին նորա երեսով:—Ես գիտեմ, ինչպէս  
թոյլ կտայ... Բայց եթէ այդ բո կամքն է, ես  
պատրաստ եմ վերադառնալ Իզմայիլ և զոհել  
ինձ ընդ համար:

Այս խօսքերն աւելի բարձրացրին նորան  
աղջկայ աչքում և նա նայնպէս խղճահարեց.

—Ո՛հ, ո՛չ, ասաց նա.—Ես համաձայն եմ  
հեռակալութեալ, ուր դու ես ցանկանում:

Կիրջալին գրկեց նորան: Սարրան թերեց  
գլուխը նորա ուսին և գուրգուրած նորա  
համբոյրներով, շուտով ընեց: Կիրջալին գրեց  
նորան բարձերի վերայ և նորա առաջ շարժ  
աչքը չէր կտրում երեսից: Պառաւրդուրս եկաւ  
սենեակից, իսկ Միխայիլեակիմը պառկեց կրա-  
կից լծեծացած վառարանի առաջ, նայում էր,  
Կիրջալուն և ըթի տակ ծիծաղում: Նորա հա-  
մար ծիծաղելի էր, որ աղան ընդապել էր,  
ինչպէս կինարմատ, կարծես ամբողջ կեանքն  
անց էր կացրել հարձերի մէջ: Վերջապէս նա  
էլ ընեց:

Մինչդեռ վախճանականներն արդէն ան-  
տառի խրճիթումն էին, Իզմայիլի բերդում տի-  
րում էր սոսկալի իրարանցում: Փաշան յայիս  
էր և որստ ու կայծակներ արձակում: Նա դի-  
տէր, որ Սելիման իրիկնադէմին բաղնիսումն  
էր վեց կանանց և տասներկու ներքինիների  
հետ. իսկ նորան յանկարծ յայտնում են, որ  
նա չկայ բաղնիսում. նա վրդովեց և ուղար-  
կեց մի խումբ ենիչերիներ ճրագներով ու լապ-  
տերներով որոնելու նորան քաղաքում: Նա ինքն  
էլ ճանապարհ ընկաւ սպազների\*) ուղեկցու-  
թեամբ: Ս. Յովհաննէս եկեղեցու մօտ գտան  
այն պատգարակը, որով Սելիման գնացել էր  
քաղանիւր, իսկ յետոյ գանազան բռնջ ու պու-  
ճախներից՝ երկիւղից գողացող բոլոր կանանց  
ու ներքինիներին: Հարց ու փորձին նորա պա-  
տախտանեցին, որ նոցա վերայ բաղնիսում յար-  
ձակեցին ինչ որ գինեւած մարդիկ, և գնորտե-  
լով իրանց, խեցին Սելիմին: Բուռն կատալու-  
թեամբ փաշան հրամայեց լծացնել բոլոր ներ-  
քինիների գլուխներն, իսկ կանանց կարել պար-  
կերում և կենդանի րցնել գետը: Հակիմը վա-

\*) Տաճկական զինուոր:



գեց արնատուհու մօտ հարցնելու, չգիտէ  
արդեօր որեւէ բան. բայց նա բացասական պա-  
տասխան տւեց: Փաշան, յիշելով, որ Կիրճա-  
լուն ուղարկել էր Արգալուն գիմաւորելու, վը-  
տով բացականչեց.

— Զկա՛յ իմ սիրելի Կիրճալին... Նա կա-  
րօզ էր նոյն իսկ գետնի տակից գտնել աղ-  
ջկանս:

Եւ նա հրամայեց սուրճանդակներին թուշի  
բոլոր կօպները— յայտնել ժողովրդին պատա-  
հած գէպրն և խնդրել ձերբակալելու փախըս-  
տականներին: Ողջ գիշերը նա չխփեց աշրերն  
և լաց էր լինում ինչպէս երեխայ, ամսոտալով  
իւր միակ աղջկան:

Հետեւեալ առաւօտեան ստացւեցին վաճա-  
ղան յուրեր. սմանք առում էին, որ տեսել են  
փախստականներին Դունայով գնալիս, սմանք  
Տուլչու ճանապարհին, երբորդները— գէպի Քի-  
լիա, իսկ մի բանիւնները— գէպի Տաբարով:

Այդ բոլոր սուղուլթիւններով ուղարկւեցին  
ծառաներ ու կնիշերիներ: Վերջապէս փաշան  
պարզի խոստացաւ այն մարդուն, որ առաջինը  
կգտնէր նոցա հետքը:

Բայց կէս օրին ամեն ինչ պարզւեց: Տեղ

հասաւ Արգալին տոռնց աղային և առայ, որ  
նորան չի էլ տեսել: Բոլորն հասկացան, որ դա  
Կիրճալու բանն էր:

— Ես ընդ չէի ասում, որ դու օձը ծոցումդ  
ես տաքացնում, առայ Հակիմն, երբ փա-  
շայի հետ մենակ մնացին:

— Ի՞նչ արած... Ես սիրում էի նորան ինչ-  
պէս որդի, պատասխանեց փաշան: Դու ինքդ էլ  
նորան սիրում էիր... Ինձ համար, իհարկէ, մեծ  
ցաւ է զրկւել միամօր աղջկանիցս, բայց, երեխ,  
Ալլահն այդպէս էր կամեցել:

— Ո՛ւյ ամենազօր Ալլահ, բացտկանչեց  
նիւրթինին— պատժիր յափշտակողին, և թող նա  
յաւիտեան ողբայ այնպէս, ինչպէս մենք ող-  
բում ենք Սելիմին:

— Մի տնիծիլ, Հակիմ, աղաղակեց փաշան,  
— յափշտակիչի դժբաղդութիւնը զստերս գըժ-  
րողութեան պատճառը կլինի:

Փաշան հրամայեց թամբել ձիերն և Ար-  
դալու և մի փաշա հեծելադօրի հետ ճանապարհ  
ընկաւ Սելիմին որոնելու:



Սկսեց լուսանալ: Սարրան զարթնեց և նայեց լուսամուտին, սրտեղից ցլանում էր վաղորդեան արեգը խրճիթում, անցնելով սառած աղակիներով:

—Ո՞րտեղ եմ, հարցրեց նա, յիշելով գլխին եկածը:

—Այտեղ, ինձ հետ, քեզ սիրող Կիրճալու մօտ:

—Իսկ հայրս, մորսեղ է, հայրս... Դարձրու ինձ նորան:

Կիրճալին զոգաց:

—Ես երեկ խօսք տւի քեզ, որ եթէ կամենաս վերադառնալ նորա մօտ, ես պատրաստ եմ զլուխս գնելու դահճի սրի տակ, կամ... աւելի լաւ է մեռնել աչտեղ, քո ստների տակ:

Եւ նա դուրս քաշեց գոտու տակից սուրը:

—Ո՛չ, ո՛չ, ազատակեց Սելիման, — Աւելի լաւ է ազօթներ և ինչո՞ր Տէրը կնեւնէ, այն էլ կանենը:

Եւ նորա ծնկի գալով սկսեցին ազօթել:

Կիրճալին երեք տարւայ ընթացքում առաջին անգամն էր ազօթում—բայց ազօթում էր սրտանց: Այն ինչ Միխայիլեակիմը հանգիստ քնած էր վառարանի մօտ, ինչպէս խեղճը հան-

զլուս մի մարդ: Վերջացնելով ազօթը Սարրան բարձրացաւ և դիմեց Կիրճալուն:

—Ես քոնն եմ յաւիտեան, ասաց նա վճռական ձայնով և ընկաւ նորա գիրկը:

—Իմն ես, իմը, թանկագին Սարրա, ազագակեց նա, ծածկելով նորան համբոյններով:

Յանկարծ գրտից լսեց շան հաշուց: Կիրճալին ձեռքը րցեց հաթաղանին. Միխայիլեակիմը ստրի թռաւ, կարծես ամենին քնած չլինէր:

—Եթէ մեր յետեից են ընկել, ասաց նա Կիրճալուն, դու կպահուես ախտեղ. — Այս ասելով նա հրեց վառարանի կողքի երկաթեայ դռնակը, որը յետ ընկաւ և երեսայ մի մեծ անցք ներքե տանող սանդուխտով: Միխայիլեակիմը գուրս գնաց. Կիրճալին արհամարհանքով նայեց նորա յետեից և դուռը վրայ զարկեց:

—Թող փորձեն ներս մտնել, ասաց նա, համբուրելով Սարրային, որը դուրս հանեց իւր սուրը, որպիսին սովորաբար կրում են թրքուհիներն և նոյնպէս ասաց:

—Կպաշտպանենք:

Բայց նոցա վախը դուր անցաւ: Միխայիլեակիմը ներս մտաւ խրճիթը. նորա յետեից ներս եկան երկու կին. դորա արնաուտուհի



Փարիկան և Զուլյման էին: Գիրջալին քաղաքա-  
վարութեամբ բարեկեց առաջինին, իսկ Մի-  
խայլեակիմը համբուրեց նորա ձեռքը:

— Զուլյմա, սիրե՛լիս, թանկազէ՛նս, բա-  
ցականչեց Սարբան և բնկաւ նորա գիրկը:

— Վերջապէս հս բեզ տեսայ, հրեշտակս,  
պատասխանեց Զուլյման լցւած արտասուքներով:

Այս տեսարանն, ըստ երևոյթին, դուր չե-  
կաւ ազային և նա սուր կերպով տոաց:

— Ժամանակը լծանդ է .. Ժամանակ է  
ճանապարհ ընկնելու:

— Այո, կերթանք, պատասխանեց արնա-  
ուտը դառն ժպիտով, — բայց այն ժամանակ  
երբ մեր ձիերը բոլորովին կհանգստանան, մենք  
ուրիշը չունենք, իսկ ճանապարհը կարճ չէ:

Գիրջալին շրթունքը կծեց: Մինչ այդ Փա-  
րիկան սկսեց պատմել, ինչ որ պատահել էր  
նոցա վախճելուց յետոյ:

— Հէնց որ դուր ճանապարհ ընկար, ասում  
էր նա, — ինձ մօտ եկաւ ահա այս կինը և, պատ-  
մելով ամբողջում պատահածը, խնդրեց ինձ  
թաքցնել իրան: Ես պահեցի. նորա յետևից  
եկան հեղինակները, տակնուվրայ արին իմ  
խրճիթը, ինչպէս և բոլոր Իսմայիլի տները,

հետազօտեցին բոլոր բունջ ու պուճախներն և  
երբ գտան կանանց էլ չհամարեցին նրանց և  
վեցի տեղ միայն հինգը քցեցին գետը: Հակիմն  
ինձ մօտ եկաւ երեք անգամ. նա, ինչպէս ե-  
րևում էր, մեզ վրայ կոսկած չունէր և տեղե-  
կութիւն չունէր Բենդերիան դրան պահակի  
անյայտանալու մասին: Բայց և այնպէս վնդա-  
պէտ Միքայայը վախենալով մահւան պատժից  
նշանակեց նոր զինուորներ, իսկ կորածներին մա-  
սին լոկեց: Օգտուելով իրարանցումից և մութ  
գիշերից մենք յաջողութեամբ դուրս եկանք  
քաղաքից և հասանք այստեղ:

— Բայց չէ՞ որ Հակիմն էլ մասնակից էր  
մեր դաւադրութեանը, հարցրեց Գիրջալին:

— Ո՛չ, եթէ նա խմանար անպատճառ  
կմատնէր մեզ:

— Դէ, ախար հս նորան ձեզ մօտ տեսայ:

— Այո, նա ինձ մօտ էր, և հս նրանից  
խմացայ, երբ կլինի Սեյիման բազնիսում. և որով-  
հետև Միխայլեակիմն ու Տուզորն Իսմայէլումն  
էին, հս խոտառացայ կատարել քո խնդիրը...  
Այլ կերպ դու չէիր էլ կարող տեսնել Սեյիմային:

— Իշխանը գալիս է, ձայն տուեց պառաւ:



բեսարաբուհին, ներս մտնելով սենեակը: Մի-  
խայրեակիմը գուրս ելաւ գիմաւորելու:

—Է՛հ մնց են մեր աղանիները, մնչում  
են, հարցրեց Տուգորը:

—Այո, համբուրում են... Մայր Փարիկան  
արգէն այստեղ է:

Տուգորը ներս մտաւ խրճիթն և գրկեց պա-  
ռաւին: Սարրան ինքնաբերաբար բարձրացրեց  
ձեռքը, երեսի բոլը վրայ քաշելու. բայց բոլ  
չկար և նա կարմրեց. Տուգորը նկատեց այդ.

—Մի ամաշիբ, սիրունիկ, ասաց նա,—  
Վալսաներն էլ գիտեն գնահատել կնոջ գե-  
ղեցկութիւնն և նոցա յարգը:

Կիրջալին բորբորեց: Միխայրեակիմը հաս-  
կացաւ, որ այդ նորան դուր չեկաւ. նա մօտե-  
ցաւ և շշնշաց նրա ականջին:

—Սա իշխան Տուգորն է, որին դու պար-  
տական ես քո բաղպաւորութեամբ:

—Զնորհակալ եմ քեզանից, իշխան, քո  
օգնութեան համար. ասաց ագան.—Կաշխատեմ  
որևէ բանով վճարել ձեր ծառայութեան փո-  
խարէն:

—Դատարի բանէր, ուրախ պատասխանեց  
նա.—Դորա մտտին յետոյ, իսկ այժմ պէտք է

մտածել, ինչպէս հեռանալ:—Արեգակը կանուխ  
բարձրացաւ, ուրեմն բուր կլինի: Արգէն ձիւն  
է գալիս. լաւ կլինէր եթէ շատ գար և ալն  
ժամանակ յառաջ:

—Ներիր իշխան, խօսեց Կիրջալին, ես չեմ  
կամենում ծանրաբեռնել ձեզ և իմ ձիերով հեշ-  
տութեամբ կհասնեմ գոռաց սահմանին: Ես հա-  
լածանքից չեմ վախենում և կենդանի ձեռք  
չեմ ընկնի... թող տուր ինձ այս լուպէիս գնալ:  
Ի վարձատրութիւն գործակցութեանդ ընդունիր  
իմ շնորհակալութիւնը:

Եւ նա գուրս հանեց մի քսակ ոսկի: Տու-  
գորը կատաղեց. Միխայրեակիմը մէջ ընկաւ:

—Դու ուզում ես արդեօր, որ ես յիշե-  
ցնեմ քեզ հանգուցեալ Կորպալի խօսքերը...  
Դու վտանգից ազատ ես և այժմ ուզում ես  
նորից մեզ նորան ենթարկել...

—Լաւ, ես կմնամ և դուր կտեսնէր, որ  
ես չեմ վախենում վտանգից:

—Դէհ, պատմիր իշխան, ասաց արևա-  
ուտը,—ինչպէս վախար Իսմայիլից:

—Զատ հեշտ: Ներքինիները չգիմաղրեցին,  
իսկ ալքանները վախան մեզ հետ միասին: Մի  
մասը գնաց գէպի Տարաբով. իսկ մնացածները



Քիլիա: Եթէ քո մարդկանցից ոչ մէկը չի  
բռնուում, ուրեմն իմանցս էլ չեն կարող գտնել...  
Ա՛, ահա և ձիւն... Փառք Աստուծոյ... Տիմայ  
մենք կարող ենք թամբել ձիերը. թուրքերը  
չեն սիրում երեսները ձիւնով թրջել և այդ մեզ  
խիստ ձեռնտու է:

Բոլորն սկոնցին ճանապարհի պատրաս-  
տութիւն տեսնել: Թէև Տուգորը Վիրջալուն  
թշնամի չէր, բայց վերջինս թշնամաբար էր  
նայում նորան: Փարիկան, որը հետեւում էր  
նոցա, ցանկացաւ հաշտեցնել նրանց և, աչքը  
քցելով Տուգորի երեսին, գուրս եկաւ նորա  
հետ միւս սկոնեակը:

—Որդեակս, ասաց նա—այժմ Վիրջալին  
մեզ հետ է և ամեն ինչ գնում է ոնց որ սառ-  
ցի վերայ:

—Տայ Ասուած, որ քո խօսքերդ կա-  
տարւին, պատասխանեց նա.—Բայց ինձ լծում  
է, որ նա աւելի նման է աւաղակի, քան սլա-  
ւոնների պաշտպանի:

—Իսկ յիշում ես Իվօնիայի նախազուշա-  
կութիւնը... Ես գիտեմ, որ Վիրջալու երակ-  
ներում հոսում է սլաւոնական արիւն.—և այդ  
պատճառով զուր չէի ետթարկում ինձ վտանգ-

ների. այժմ քս գործն է օգնել ինձ... Խօսքը  
սլաւոնների ազատութեան մասին է:

—Հնազանդում եմ, մայր իմ: Թող մի  
յաջողութեամբ հասնենք Կամպալունդիա, այն-  
տեղ լեռներում կտեսնենք, ինչպէս պէտք է  
վարել:

Բարձրացաւ սարսափելի բուր: Կատարեալ  
մարդը շանն էլ գուրս չէր անի տանից, բայց ձի-  
երն արդէն գրանն սպասում էին: Բոլորը գուռը  
գուրս եկան: Վիրջալին նստեց իւր սեուկին առա-  
ջին նստացրեց Սարրային և հափնջով փաթա-  
լեց: Տուգորը նոյնպէս նստեց իւր զիմաց-  
կունին և մօրը պինդ փաթալեց: Միխայի-  
կիմը գծկամակութեամբ վերցրեց պառաւ Զույլ-  
մային և երբ բոլորը պատրաստ էին ճանա-  
պարհ ընկան: Բեռարարուհին օրհնեց հեռա-  
ցողներին:

Իսկ այն ժամանակ, երբ փախտական-  
ները մօտենում էին Սեմիպրադեան լեռներին,  
Մահամեգր վերադարձաւ տուն, չկարողանալով



զանեկ Սեյիմին նա անմխիթար արտասուեւ  
էր, հեծում, և վերջապէս նշանակեց Արզալուն  
այրանական պահակի գլխաւոր: Միրալայը,  
որպէսզի թարցնի իւր իշխանութիւնից փա-  
խած արնառաներին, ասաց, որ նորա խեղ-  
դել են Դունայում, Սեյիմին որոնելիս:

Սեմիգրազի սահմանում, սրտեղ Կորնթեան  
լեռներն ամպերին են հասնում, Արջիշի ափի  
մօտ կանգնած է մի վիթխորի պալատ, որը  
կոչւում է գետի անունով: Այդ պալատի տէրը  
Քրանկովալ թագաւորը իւր որդոց և Վախա-  
րեսիւլօ իշխանի հետ, իբրև պաշտպաններ  
մօլդաւական ազատութեան սպանեցին Ստամ-  
բուլում: Եւ այդ օրւանից Մօլդաւիայում տի-  
րապետող ոչ մի մոլեռանդ չէր համարձակոււ  
նայել ամրոցին և փախչում էին հեռու, փա-  
խենալով թէ մի գուցէ ապիւսներից մէկն ընկ-  
նի պատերից և գլուխ ջարդէ: Նորա մէջ կար  
մի վանք, ուր տեղ ունէին բոլոր թշուառներն

ու հալածւածները և սրտեղ ժողովուրդը թափ-  
ւում էր ամեն կողմից: ✓

Ութնօրեայ բուրից յետոյ արեւ ժպտաց:  
Ջարաթ օր էր. ժամերգութեանը ներկայ ժո-  
ղովուրդն ուղղեց զէպի սեղանատուն. այնտեղ  
կային տեղական բնակիչներ, բայց գլխաւորա-  
պէս օտարականներ: Վանահայրը դեռ եկեղե-  
ցումն էր, երբ նորան յայտնեցին, թէ մի ինչ  
որ մարդ ուզում է նորան տեսնել: Նա գնաց  
իւր խուրը: Փորրաւորը հիւրին տարաւ Վանա-  
հօր մօտ և դուռը փակեց իր կողմից. նա  
սկսեց ծածուկ լսել: Վերջերքը նա պատմեց,  
որ հիւրն աղաչում էր նորան վերցնել ինչ որ  
մէկին իւր հովանաւորութեան տակ, իսկ հայր  
Եւդէնը պատապսանեց նորան. «Եթէ մայր Եւ-  
դոկիան աղապէս է կամենում ես կկատարեմ բո-  
լորը»: Տեղական բնակիչներն և պանդուխտ-  
ները, հնար չունենալով մտնել վանահօր սե-  
նեակը, գննում էին եկուորի ձին, աշխատելով  
ճանաչել հիւրին ձիու և բարբի արժէքով: Բայց  
ոչ որ չճանաչեց, բացի մի ծեր վալախից,  
որն ակնարկեց թէ ձին, ըստ երեւոյթին, պատ-  
կանում է երիտասարդ իշխանին, որին նա մի  
տեղ տեսած պիտի լինի: Այդ խորհրդաւոր



ակնարկը բերնէքերան անցաւ: Զուտով հիւրը  
գուրս եկաւ վանահօր մօտից և նստելով ձին  
թռաւ վանքից:

Ելլոյ օրը խաղաղ անցաւ. երեկոյեան ժա-  
մերգութիւնից յետոյ բոլորը գնացին քնելու.  
միայն մնաց վանահայրը երկու արեգայի հետ  
և լնշոր բանի մասին երկար խորհրդակցում  
էր նոցա հետ: Կէս գիշերուան գէմ վանական  
չների խումբն խնաց տուեց օտար մարդկանց  
մօտենալը, լուեց սմբակների խուլ գլորոց և  
դահնակների ճռճոց:

Եւ իրաւ, վանքի դռների առաջ կանգնեց  
մի սահնակ գոյր վազկաններ լծած: Փորբա-  
ւորները, որոնց բոտ երեւոյթին նախօրօք հրա-  
մայլած էր, բաց արին դռներն և եկւորները  
մոտն եկեղեցու գաւիթը: Եկեղեցում վառւում  
էին մեղրամոմեր և պատրաստ սպասում էին  
արեղաները: Վանահայրը զգեստաւորւած կանգ-  
նած էր սեղանի առաջ: Պառաւ Փարիկան  
ներս մտաւ թեանցուկ Սարբայի հետ. նոցա  
յետից գալիս էին Զուլլման և տղամարդիկ՝  
Կիրջալին, Տուգորն և Միխայլեակիմը, մտկա-  
ւական շորեր հագած:

Փարիկան, կամ, աւելի ճիշտն ասած,  
մայր Եւգոկիան բարձրաձայն ասաց.

— Հայր Եւգէն, օրհնէր:

Վանահայրն օրհնեց և սրտեց նոցա վե-  
րայ օրհնած ջուր: —

Սլաւոնական սովորութեան համաձայն  
մայրը տարաւ Սարբային մի խոստովանարանը,  
իսկ Կիրջալին ծնկի եկաւ միւսի առաջ: Սար-  
բայի խոստովանանքը կարճ էր, բայց Կիրջա-  
լին խոստովանեց շատ երկար... Երևում էր,  
որ նա շատ չարիքներ էր գործել: Վերջապէս  
արձակումն ստանալով՝ նա հպարտ մօտեցաւ  
հարսին և հակառակ սովորութեան, նրան թի-  
ւում տարաւ սեղանի առաջ: Ոչ ոք չհամար-  
ձակեց նկատել նորան: Նախ ծնկի գալով և  
ապա կանգնելով, Կիրջալին իւր արմուի հա-  
կացքով նայեց բոլորին և վեր բարձրացնելով  
Սարբայի երեսի բոլը կարծես ասում էր. «ապ-  
շեցէք իմ նշանածի գեղեցիկութեան վերայ և  
ասուածացրէք նորան—նա իմն է»: Տուգորը  
չուռ եկաւ. նա առաջին անգամ նախանձեց  
Կիրջալու բազմի վերայ: Քահանան հաղորդեց  
երիտասարդներին և սխուեց պատկազրութիւնը:

Պատկազրութիւնից յետոյ, բոտ սովորու-



թեան վախճանների, նորադասակներին տալիս  
են մեղքահաց, որք բահանան հերթով մօտե-  
ցնում է նոցա շրթունքներին և եթէ նորապը-  
սակներից մեկնումէկը չը կտրողանայ բռնեղ  
ատամներով ու վայր բցէ, դա համարում է  
վատ նախագուշակութիւն նորա համար, ով  
վայր է բցել: Նոյնը պատահեց և Սարբային:  
Բոլորն այլալեզբին:

— Զպիտի ճաշակէ բնտանեկան բազը-  
բութիւնը, նկատեցին ներկայ գտնւողները:

Վերջապէս ամեն ինչ վերջացաւ: Նորա-  
դասակները ծունկ չորեցին, բահանան օրհնեց  
նոցա. նոյնն արեց և Եւդոկիան, յետոյ բոլորն  
սկսեցին շնորհաւորել նորադասակներին և համ-  
բուրել: Երբ Տուգորը մօտեցաւ Սարբայի շրթ-  
թունքներին, գոյաց ողջ մարմնով և ախմայ  
մօտեցաւ Կիրջայուն համբուրելու:

Դորանից յետոյ բոլորը դուրս եկան եկե-  
ղեցուց: Կիրջային նոտեցրեց կնոջը սահնակում  
և փաթածեց ևափնջով, կողքին նստեց ինրն  
իսկ գիմացը մայր Եւդոկիան և Զուլման: Տու-  
գորը յետ էր բնկնում:

— Մի՛թէ, դու մեզ հետ չես գալու, հար-  
ցրեց մայրը:

— Ո՛չ, ես մնում եմ... Վաղը կամ միւս  
օրը կգամ... Միխայիլեակիմը ձեզ տեղ կհասցնէ:

Եւ նա մնաց կանգնած խոր մտածմունքի  
մէջ: Հայր Եւգէնը մօտեցաւ նորան և ձեռքից  
բռնեց:

— Գնանք ինձ մօտ, ասաց նա:

Հետեւեալ առաւօտեան բոլորն իմացան  
Տուգոր Վլադիմիրեակիմի գալուստը, որի վերայ  
էին գրել մօլդաւացիք իրենց բոլոր յոյր. դա  
նոցա «բան»-ն էր (թագաւոր): Նա գեռ երե-  
խայութեան ժամանակ հեռացաւ Վայախիայից,  
վախենալով բնկնել իտլամական լծի տակ և  
մեծացաւ լիւններում: Եւդոկիան նորա և միւս-  
նոյն ժամանակ ամբողջ ժողովրդի մայրն էր:  
Բոլորը սիրում և յարգում էին նորան, համա-  
բուրում էին նորան իրենց թագուհին, որը աշ-  
խատում էր փշրել թուրքական յուժը: Վեց  
տարի նա բացակայ էր, թէ որտեղ, յայտնի  
չէր: Որդին լիւններումն էր և գրագրութիւն  
ունէր յունական եկեղեցու գլխաւորների, սլա-  
ւոնական ցեղերի առաջնորդների հետ, որոնք  
աշխատում էին ազատել Դրան ախրապետու-  
թիւնից: Վլադիմիրեակին հարուստ էր և առա-  
տաձեռն. թուրքերն իբրւր էին որսնում նորան



լեռներն մէջ, որպէսզի զրկեն նորան կեանքից. նա չէր բռնւում: Նստաւորում և բուխարիստում նորան մահ էր սպասում, որովհետեւ նորան համարում էին աւագակ. այն ինչ լեռնականները նորան կոչում էին իրենց թագաւոր:

Այդ պատճառով, զարմանալի չէ, որ վանքում բոլորը նորան վերաբերում էին ինչպէս իրենց հրամանատարին: Նա միշտ ուրախ էր լինում, բայց այս անգամ նորան տեսան մռայլւած, այդ պատճառով ասում էին. «Երկինքը մթնեւ է—որոտմունք կլինի»: Բայց և այնպէս նորա բոլորը կենդանացան և պատրաստ էին անմիջապէս մտնելու նորա գրօշակի տակ: Խաղաղ ժողովրդից կարելի էր կազմել մի ամբողջ զօւնդ: Այդ բանին, 'իհարկէ, ոյժ էին տալիս վանականներն իրենց բարոյներով. վայրենի ուրախութիւնը բռնկում էր բոլորին և նորա սպասում էին թէ երբ պիտի կարողանան ըսել իրենց ձեռները սլաւոններին հալածողներին հետ կուելով:

Երիտասարդ զոյքի առաջին օրերն անցնում էին բուռն ուրախութիւններով: Փամանակը թռչում էր կայծակի արագութեամբ և ջահել ամուսկները չէին ցանկանում վերա-

դառնալ անցեալին և նայել ապագայի վերայ: Մի խօսքով մեղրամիսն անեկատելի անցաւ Կալմիր—Դղեակում, որտեղ նորա ապրում էին շրջապատւած լեռներով և անմատչելի անդունդներով: Այդ լեռների մէջ, կոյրի անտառակում գտնւում էր Վլադիմիրեսկոյի բնակարանը, որին թուրքերը «սառանի տնապատ» իսկ լեռնականները Բրանկովան թագաւորի, որդոց և ծառաների գերեզման էին անւանում: Տուգոր իշխանի պալատն աչքի չէր ընկնում իւր գրաւիչ տեսքով: Բարձր ժայռերի միջով ձգւած նեղ ծուռումուռ շաւիղը տանում էր դէպի այդ հին տնակը. նա իւր հին ծուած կտուրով և փոքրիկ հայեաթմով, շրջապատւած խիտ ժայռերով, որոնք կարծես կազմում էին բերդի մարտկոյններն, աւելի շուտ նման էր մի որևէ սրճի բան պալատի: Բայց զրա փոխարէն ներսից բոլորովին հակառակն էր, որի նմանը չէր կարելի գտնել նոյն իսկ Սուլթանի մօտ. և որքան խորն, այնքան հարուստ սենեակներ, յուսաւորւած արեղակի բնական լոյսով, որոնք անցնելով ժայռերի արանքներից թափանցում էին ծակ բարերի մէջ տեղաւորւած հաստ-մարուր ապակիներից: Դա մի ահա-



գին գեանափոր էր, որի մէջ կարող էր տեղա-  
ւորւել մի քանի հազար մարդ, և որով կարե-  
լի էր հասնել մինչև Սեմիգրադ: 1818 թւին  
այդ այրերում պահւած էին գէնը, ձիեր և  
մարդիկ, որոնք հաւարւել էին Վլադիմիրեո-  
կոյի գրօշակի տակ: Այդ գեանափորի մուտ-  
քին իհարկէ հսկում էին պահապաններն և  
վաղ նրան ով սիրտ կանէր մօտենալ: Մի խօս-  
քով, այդ ապարանքը կարելի էր համարել  
«հազար ու մի գիշերների» պալատներից մէկը: ✓



Արեւուտուհի Փարիկան այժմ գարձել էր  
վալախների տէրն ու հրամանատարը: Մու-  
րադկանի շորի փոխարէն նա այժմ դարգար-  
ւած էր թաւշով, սակով ու ադամանգներով:  
Նորա մօտ գալիս էին տանուտէրներն և յար-  
գանքով սպասում էին նորա ընդունելութեա-  
նը: Հէնց որ նա երեւում էր ժողովրդին, այրի  
խորշերը զրդգում էին անվերջ ազազակներով,  
«Գեցցէ, մայր մեր, երկար օրեր»: Կիրջալուն  
և Սարրային նա սիրում էր, ինչպէս հարա-

զատ զաւակների, և երկուսն էլ նորան ընդու-  
նում էին մօր տեղ: Տուգսը, որին Պարրան  
եզրայր էր կանչում, յաճախ գալիս էր նոցա  
մօտ, բայց Կիրջալին նորան չէր յարգում և  
սառն էր վերաբերում:

Անցաւ երկու ամիս: Սարրան գեռ չէր  
կշտանում իւր մարդուց և Կիրջալին չէր հե-  
ռանում նրանից: Այն մարդիկ, որոնք նախան-  
ձում էին նորա բազկին, ասում էին, որ նա  
«կնացել է» և կամենում էին ուժով ստիպել  
նորան մտածել պատերազմի մասին. բայց նա  
ուշը չէր դարձնում նոցա ծագրախառն աղ-  
նարկներին:

Վերջապէս հասաւ մեծ օրը: Եւադ հինգ-  
շաբթի, երբ սլաւոնական սովորութեամբ «խօս-  
հրդաւոր գիշերից» յետոյ իւրաքանչիւր մարդ  
պէտք է պատմէր հին սլաւոնների մեծագոր-  
ծութիւնների, հսկաների, արկածների և աւա-  
զակների մասին և կամ պիտի երգէր պատե-  
րազմական երգեր, հերթն հասաւ Տուգսին:  
Նա երգեց Սի Գէորգի և Սերբիական կուրի  
մասին: Նորանից յետոյ պէտք է երգէր Կիր-  
ջալին:

— Դէհմ — տասց Միխայլեակիմր — չլինի



սիրոյ մասին երգէ նա. ախար չեզդարան ու  
պատերազմական երգերը մնացել են խզմայում:

— Արեւուտ, ճշաց կատաղած Կիրջալին,  
չեզդարան մոռացւած է, բայց ետժողանը  
մօտ է:

Եւ նա ուզում էր գուրս բաշել, բայց  
Սարրան բռնեց նորան. Միխայիլեակիմը չվա-  
խեցաւ:

— Պահիր ետժողանդ, ուարոն ազա, նա  
քեզ պէտք կզայ մեր թշնամիներէ հետ գործ  
ունենալիս... Դէ՛հ ես գիտեմ, որ դու լաւ պի-  
տես նրան տիրապիտել... Ես միայն ուզում  
էի փորձել խօսի ժանգոտել...

Սարրան փաթաթեց նրա վզովն և համ-  
բուրեց հանգստացնելու համար: Բայց Կիրջա-  
լին նորա համբույրին չպատասխանեց և մօտյ-  
ւաւ նստեց մինչև ժողովի վերջը:

Երբ ամուսիններն առանձնացան իրենց  
սենեակին և պարկեցին բնելու, Սարրան աշ-  
խատում էր նրան հանգստացնել, բայց նա  
վեր թռաւ անկողնից և նստեց կողքին:

— Ո՛հ, առայ նա— ես երբէք նորան չեմ  
ների, նորա ասածը... Ես կնացեմ եմ... տեո-  
նենք... թող փորձեն ինձ հետ ընկնել և այն

ժամանակ կտեսնենք. — Ես նոցա ցոյց կտամ,  
որ ես կլին չեմ...

Սարրան փայփայում էր նորան և խրնդ-  
բում էր հանգստանալ:

— Մի՛թէ դու ինձ այլևս չես սիրում, որ  
չես ուզում ինձ ականջ դնել, առայ նա:

— Ո՛հ, իմ թանկագին, ես առաջւան պէս  
քեզ սիրում եմ, առայ նա լուսթեամբ, բայց  
սիրում եմ և փառքը: Առանց քեզ ես բազդա-  
ւոր չէի լինի, բայց և առանց փառքի ես չեմ  
կարող բարի անուն փառաւիել:

Ըստ առածի՝ քցած կայծը վառում է  
ապարանքը: Այդպէս էր և Կիրջալին: Նորա  
ամբողջ ներքինն այրում էր և նա ոչ մի  
կերպ չէր կարող հանգցնել այդ կայծը: Կնոջ  
աչքերը լցեցին արտասուքով և նա ակնեց  
ազօթել:

Հետեւեալ առաւօտեան Կիրջալին վեր կե-  
նալով և համբուրելով կնոջն, անմիջապէս  
մտաւ ախոռն, իւր սեռիկ բարեկամի մօտ,  
որին նա վաղուց չէր տեսել: Զննելով և սար-  
քելով նրան, սրեց իւր գլխերն ու մտաւ իշ-  
խանուհու սենեակը:

— Շնորհակալութիւն, մայր իմ, առայ



նա, հիւրընկալութեանդ համար: Այժմ արդէն ժամանակ է ինքս իմ մասին մտածելու:

—Ո՛ր այդպէս, հարցրեց Եւգոնիան:

—Կգնամ Ռուսաստան կամ Միլան Օրբենովիչի մօտ... Ինչպէս լսում է, սպիտակ արքան պատերազմի է պատրաստում և ևս մէկի կամ միւսի մօտ ինձ համար տեղ կը ճարեմ...

—Արծիւը չի կարող բազէին ծառայ լինել, որովհետեւ նա իւր սեփական բունն ու ձագերն ունի, որոնց նա պարտական է պաշտպանել թշնամիներէ: Քեզ չի ընկնիլ ծառայել ում էլ որ լինի... Գու պարտաւոր ես քո ժողովրդի գլուխն անցնել և ազատել նորսն մահմետական լծից:

—Մայր իմ, պատառիտանց նա,—հազիւ թէ երբեք է կատարուի քո նախագուշակութիւնը. մինչդեռ տարիներն անցնում են:

—Անհոգ կաց... այդ շատ շուտ կկատարուի... Նոտիր և հանդարտ լսիր ինձ: Ես պէտք է հաղորդեմ քեզ մի գաղանիր, որը երկար տարիներ թաքցնում էի. այդ բանի համար կային յարգելի պատճառներ... Երեկ քեզ կատաղացրեց Միխայիլակիմն և ևս շատ

զոհ եմ դորանից... Երեկ ես համոզեցի, որ գու սիրում ես քո կնոջը, բայց փառք աւելի ես սիրում...

—Ես երբէք չեմ եղել և չեմ լինի կին, և թէև սիրում եմ կնոջս, բայց չեմ մոռանում, որ ես զինուոր եմ:

—Ներիր ինձ, որդիս, ես չէի ուզում վիրաւորել քեզ... Բայց զիմներ գործին—

Այդ ժամանակ նա վերցրեց մի մեծ միաձալ զինք, ոսկեզոծ կտրածքով, և սրաներով իրեն յայտնի տեղը շարունակեց:

—Սա գանձ է—Մօլդավիայի ժամանակագրութիւնը: Ահա կարգա, ինչ է դրում Տէր Իւանը. «Սլաւոնի արիւնի կը փրկի Մոլդաւիան մահմեդականների լծից...» Գու այդ փառաւոր ցեղի յետնորդներէ մէկն ես և քո երակներում հոսում է իսկական Լեւոնի արիւն:

—Սխալում ես, մայր իմ, ես մի հասարակ ընկեցիկ եմ, առանց տոհմի և ցեղի... իմ մայրը բուլղարուհի էր:

—Իսկ հայրդ—լեւոն էր... Քո կրծքի վերայ պէտք է պահեմ լինի ամենասուրբ կոյսի պատկերիկը...

—Այն կայ... Բայց գու սրտեղից զիտես.



հարցրեց նա, զուրս հանելով պատկերիկը, որը Եւգոկիան ձեռքն առաւ, համբուրեց և կարգաց սլաւոնական գիրը «Պօչախ»:

— Դա մի տիրապատ տեղ է լեռխերի երկրում և Կորդակը շէր խափում ինձ... Նա ճանաչում էր քո ծնոյններին, և այդ մասին նա ինձ պատմեց:— Ինչպէս րեզ յայտնի է գժբազգութիւնը հետեւում է Մօլդաւիային և ես, իշխանուհիս Բրանկովանների ցեղից, երգեի եմ ազատել իմ ժողովուրդը մահմեդականների լծի տակից: 1755 թւից Քիւչուկ-Քեայնարջիական գաշն կոչուլու բօպէից ես թափառում եմ աշխարհի երեսին, մեծացայ և մարդու պնացի թափառականների մէջ: Իմ ամուսինը մեռաւ, թողնելով ինձ մի որդի, որին ես աշխատեցի կրթել մեր կրօնի ոգով... Բայց բանը զրանում չէ: Լինելով հարուստ ես ձեռք բերի շատ կազմեակիցներ իմ հայրենիքին: Վանքերը ծառայում էին իբրեւ բուն, մահմետականների թշնամիների. Ռուսաստանը խստացաւ մեզ իւր օգնութիւնը, բայց այստեղ հանգամանքները փոխուեցին և ես ստիպւած եղայ փախչել: Հագնելով իբրեւ արնատուուհի՝ ես հաստատուեցի Իզմայիլում Կուլիգե-

րեան լճի ափին և այնտեղ արեցի այն ամենը, ինչոր կարելի էր անել հայրենիքի ազատութեան համար, կրեցի շատ վիրաւորանքներ և կախարդի համբաւ ստացայ.— Ահա միանգամ Կորդակն ինձ ասաց քո մասին, որ զու Սլաւոն ես: Այժմ, ինչպէս տեսնում ես, հանգամանքները փոխել են. ժամանակ է գործելու և դու պարտաւոր ես մեզ հետ մնալ:

— Ես պատրաստ եմ... Բայց մի է կդել իմ հայրը, որտեղ է նա և ինչ է պատահել նորա հետ:

— Այդ Կորդակը շատաց և Ալբաններից ոչ ոք չը գիտէ այդ գաղնիրը:

— Բայց չգիտեմ արդեօք դու ինքդ. եթէ նա կենդանի է, կորոնեմ նորան թէկուզ աշխարհի ծայրում:

— Ոչինչ չգիտեմ... Երգւում եմ հայրենիքիս սիրով:

Կիրջալուն այդ գաղտնիքն աղչեցրեց:

— Իսկ հակիմը... Ո՞վ է նա, և ինչպիսի գործեր ես ունեցել նրա հետ:

— Հակիմը ներքինի է, ոչ աւելի, և չնորհիւ նորա փողի ազահութեանը, ես իմացայ



բոլորն, ինչ որ կատարում էր փաշայի պա-  
լատում:

Մենեակ մտաւ Տուգորը: Տեսնելով Կիր-  
ջալուն նա ուզում էր վերադառնալ, բայց  
մայրը կանգնեցրեց նորան:

— Ի՞նչ ունիս տաելու, որդեակ իմ...  
Եսա... Կիրջալին արգէն բոլորը գիտէ:

— Հայր Եւզէնն ուզում է խօսել քեզ հետ.

— Խեղրիր, պատասխանեց նա, և տես-  
նելով, որ Կիրջալին ուզում է հեռանալ աւե-  
լացրեց: — Վայ... այժմ դու պետք է ամեն  
բան իմանաս:

Ներս մտաւ րահանան: Իշխանուհին և  
Կիրջալին մօտեցան օրհնութիւն աւնելու և  
համբուրեցին նորա աջը:

— Մայր Եւզովիտ, ես պետք է խօսեմ  
քեզ հետ:

— Խօսիր, հայր Եւզէն... Այսօրանից  
ես Կիրջալուն համարում եմ իմ երկրորդ որ-  
դին, յուսով եմ դու կրաջարեես ինձ:

Հայր Եւզէնը չհակառակեց նորան:

— Մօտ է ժամը մեր աղատութեան, շա-  
բուհակեց նա, — ժամանակ է բարձրացնելու  
գրօշն ու զէնքը մեզ ճշդագործի զէմ: Ռու-

թեան տրեց, ատելութեան զգացմունքը փոխ-  
ւեց կարեկցութեան:



Եկաւ վարունը: Թուրքերն սկսեցին թող-  
նել իրենց հարեմներն, իսկ քրիստոնեաները —  
բաշւել լեռներն իրենց ունեցածքով, որպէս-  
զի աղատին նոցա աւարառութիւնից: Ռու-  
սական զօրքերը գրաւեցին Մօլդաւիան, գէպի  
Գունայր շարժուող թուրքական զինգերին հան-  
դիպելու նպատակով, որոնց առաջնորդում էին  
Հաջի — Ահմեդը՝ Վիզգինի փաշան, Մօլդաւիա-  
յի փոխարքան և անմխիթար Մահամեդն՝ Իզ-  
մայիլի փաշան: Մինչ այդ Բարադաղ փսրրիկ  
բաղարում հաւաքեց ուլունական ձիաւորների  
մի խումբ, զապարօժների զանազան ցե-  
ղերից, որոնք փախել էին Նեկրասի գրօշակի  
տակից, երբ Եկատերինա մեծը հրամայեց նո-  
ցա ցած դնել զէնքերը:

Ձինւորական փողի ձայնը սգեսերել էր  
ուլունների և անհամար ամբօխը շարժում  
էր գէպի Բրանկովանի զերեզմանը, Կարպա-



տեան լեռները, որի վերայ փողփողում էր  
հռազոյն դրօշակը: Իշխանուհին հռանգով  
պատրաստում էր պատերազմի և ազօթում  
էր. Սարրան նոյնպէս վերառարու՛մ էր իւր  
աղերսը, սրպէսդի Տէրը պաշտպանի իւր ամուս-  
նուն: Տուգորին նոյնպէս յուզում էր պատե-  
րազմը և նա մտածում էր միայն այն, որ եթէ  
իրեն վիճակւած է մեռնել, գտնեա Սարրան  
կլիշէ իրեն:

Երեկոյ էր: Բոլորը հաւաքւած էին մի  
տենեակում և խօսակցում էին պատերազմի  
մասին: Յանկաշձ գուռը յետ ընկաւ և ներս  
մտաւ հայր Եւգինը:

— Ի՞նչ նորութիւն, գոզացող ձայնով  
հարցրեց իշխանուհին:

— Բարի լուրեր, մայր իմ, պատասխա-  
տեց բահանան: Ռուսաց զունդը տիրեց Եսո-  
սին և գնում է Իզմայիլի վերայ. Հնօրհիւ ռու-  
սաց պաշտպանութեան մենք վտանգից ազատ  
ենք, բայց և այնպէս մենք չպէտք է անգործ  
մնանք, և որպէսդի ցոյց տանք նոյցա, թէ  
մենք չենք թաքնւում նոյցա յետեւում, մենք  
պէտք է յառաջ գնանք և պաշտպանենք նոյցա  
մեր կրօնով: Ահմեդ փաշան գնում է գէպի

սիայի զօրաւոր արքան թուրքերին պատերազմ  
է յայանիկ և այժմ հասել է ժամը մեր բոլոր  
այժերը գէնրի հրաւիրելու:

— Փառք Առուածոյ, բացականչեց իշխա-  
նուհին և զառնալով որդուն ու Կիրջալուն,  
աւելացրեց. — Իմ որդիք, երգւեցէր միմեանց  
յաւիտենական բարեկամութեամբ և հաւատար-  
մութեամբ ընդհանուր գործի համար և եղէր  
գէնրի բարի ու բաջ կորայրնեք:

Գազանի հաւառատիրոջները ձեռք տւին  
միմեանց. Տուգորն անբաւական էր, այն ինչ  
Կիրջալին զգալով իւր զերազանցութիւնը նո-  
րանից հպարտութեամբ էր նայում նորա վե-  
րայ: Այն բոլակից, հրը իշխանուհին յայտնեց,  
թէ նորա երակներում հոսում է լեախի արիւն,  
որին վիճակւած է ազատել սլաւոններին թուր-  
քերի լծի տակից, նա միանկամից փոխեց և  
մտածում էր.

«Նշանակում է իմ հայրը մեծ մարդ էր,  
գուցէ նոյն իսկ լեախերի թագաւոր և այժմ  
ինձ սպասում է փառքն իբրի յայլթոյի և  
ժողովրդի ազատարարի»:

Նորա միտքը թռչում էր կայծակի արա-  
զութեամբ և զլուխը պտտում էր, կարծես



օֆիումից. նորա հողին ձգտում էր փառքի և պատառփրութեան... Այժմ նա մոռացել էր ամեն բան, մինչև անգամ սիրած կնոջը, որը զեռ չէր կշտացել նորանից:

Այդ օրւանից Կիրճալու կեանքն ընթացում էր այլ ուղղութեամբ: Ամեն օր նա խորհրդակցում էր Միխայիլի մի հետ և մարում իր ձին: Կինը միտն էլ չէր ընկնում. նա լաց էր լինում և տանջւում, որ ամուսինը զապարել է իրեն սիրելուց. նորա բոլոր փաղաքշանքները, բնորոշութիւններն և համբոյրները չէին գրգռում Կիրճալու տարփանքը և նա կարծես նորա վերայ ուշադրութիւն չէր դարձնում: Այնուհետև նա սկսեց լղարել— թառամել: Իշխանուհին՝ Ժողովրդի ազատութեան գործով զբաղւած, նոյնպէս չէր նկատում այդ, այն ինչ Տուգորն ամեն ինչ տեսնում էր և մասնակցում նորա թախիծին: Եռօշին իսկ հանգիստանն անտառի խորճիւթում, նա սիրեց նորան և այդ սիրոյ պատճառով մինչև անգամ աշխատում էր յիշեցնել Կիրճալուն կնոջ գոյութիւնը: Երբ Կիրճալին սիրում էր կնոջը, Տուգորը կարծես ատում էր Կիրճալուն. բայց երբ Սարրան մոռացու-

Կամպայունդ, Մահամեդի հետ միանալու:

Մահամեդի անւան վերայ Սարրան դողաց. Տուգորն այդ նկատեց: Վանականը շարունակեց.

— Թէև վանականները խաղաղ մարդիկ են, բայց նոցա մէջ գտնուում են մինչև մէկուկէս հազար ձիաւոր և հետեակ զինւորներ: Այդ պատճառով խնդրում եմ բնդունել նոցա ձեր հովանու և կարգադրութեան տակ, իսկ վանքը կձառայի իբրև ապաստան ծերերի, կանանց և երեխաների համար:

Կիրճալու աչքերը փայլատակեցին շաբաթնուց կրակով:

— Իշխան Տուգոր, կանչեց նա— զու կըմնաս հետեակների հետ, իսկ ես ձիաւորներով կը կտրեմ Ահմեդի ճանապարհը. ես աւելի լաւ գիտեմ թուրքական խորամանկութիւնը:

Սարրան գունաթափւեց: Տուգորը գուշակեց նորա միտքը:

— Ո՛չ, ասաց նա.— զու կաց կնոջդ և մօրս մօտ իսկ ես կգնամ... Խնայիր կեանքդ, որովհետև զու շուտով հայր ես լինելու:

Կիրճալին նոյնպէս գունաթափւեց և տարօրինակ ծիծաղով վրայ բերեց:



—Պարտքը—ամենից առաջ, ես նորան  
չեմ փոխարինի ոչնչով—խոյ փառքն աշխարհ-  
հում ամեն բանից թանկ է։

—Սիրելիս, իմ անգին, տղերսեց Սար-  
րան, ինձ էլ հետդ վերցրու։

—Դու պէտք է մնաս, բարկացած պա-  
տասխանեց Կիրճալին—և կմնաս, ես բեզ  
հրամայում եմ։

Առաջին անգամն էր լսում Սարրան ամուս-  
նու կտրուկ հրամանը և չափազանց վիրաւոր-  
ւեց. կնոջ ինքնաօրութիւնը նրանում բոր-  
բորեց և նա, վեր կենալով տեղից, ուղղեց,  
նայեց ամուսնուն և շատելով ոչ մի խօսք,  
դուրս եկաւ սենեակից. Տուգորն ուզում էր  
գնալ նրա յետիկ, բայց Կիրճալին պահեց  
նորան։

—Տեղից չշարժել, գուցայ նա։

Այդպիսի բռնակալութիւն գէպի կինը և  
խտուութիւն գէպի Տուգորը բիշ չզարմացը-  
րեց իշխանուհուն, բայց նա լռեց։ Քահանան  
նորան աչքով արեց, իսկ Տուգորը հեգնու-  
թեամբ նայեց Կիրճալուն, որը մի բանի բո-  
ւալէից յետոյ դուրս եկաւ սենեակից, արշաւան-  
րի կարգադրութիւններն անելու։ Միխայիկա-

կիմը լսելով հրամանը սկսեց ճանապարհի  
պատրաստութիւն տեսնել, իսկ Կիրճալին գնաց  
կնոջ մօտ։

—Ներքի ինձ բեզ վիրաւորելուս համար,  
ասաց նա—և հաւատա, որ կաշտապանեմ բո  
հօրն իմ կրծքով։

—Ես չեմ բարկանում, պատասխանեց նա.—  
բայց ասում եմ բեզ, բանի սր դու նորանից  
խիցիր միամօր դուտորը, խլիր ուրեմն և նրա  
կեանքը։

Եւ նորա երեսին հոսեց արտասուքը։  
Նկատելով այդ Կիրճալին ծունկ չոքեց նորա  
առաջ և բացականչեց.

—Իմ անգին, ես բեզ սիրում եմ և եթէ  
փառք եմ որոնում, այդ ոչ թէ ինձ, այլ մեր  
ապագայ որդու համար է։

—Իմ սիրելի, թանկագին, մի գնալ պա-  
տերազմ, ասաց նա։ Պէտք չէ մեզ ոչ փառք,  
ոչ հարստութիւն, ոչ պատիւ... Կաց ապա-  
շում իմ բեզ։

Դուցէ Կիրճալին անձնատուր լինէր կնոջ  
թախանձանքներին, բայց այդ բոլորին ներս  
մտաւ Միխայիկիմն և բարձր ասաց.

—Ամեն ինչ պատրաստ է. ժամանակ է



ճանապարհելու։ Սարրան ուշաթափեց, Կիր-  
ջալին աշխատում էր նորան ուշքի բերել համ-  
բոյրներով ու փաղարշանքներով, բայց Մի-  
խայրեակիմն ինչպէս մի շաք դե շխշխկացնում  
էր ղէներնն և շարախնդացութեամբ ծագրում.

—Այ բեզ Կիրջալու քաջութիւն... ասաց:  
Իզմայիլը դեռ չէս մոռացել... կնիկ...

Քա կատաղացրեց Կիրջալուն և նա, վեր-  
ջին անգամ համբուրելով կնոջը, շտապով դուրս  
թուա սենեակից։ Ճանապարհին նա հանդի-  
պեց Տուգորին և ասաց նորան.

—Կնոջս բեզ եմ յանձնում... հոգ տար  
նորան։

Տու օրը գլուխ տւեց, իսկ Կիրջալին  
Միխայրեակիմի հետ գնաց օրհասու հեծեալնե-  
րի մօտ։ Տուգորն շտապեց ժարարյւ սենեակն  
և, տեսնելով նորան ուշաթափ, կանչեց Զույլ-  
մային և մօրը, որոնք նրան ուշքի բերին։

—Այս ես գժբաղդ եմ, բացականչեց  
Սարրան.—Նա յաւիտեանս թողեց ինձ, օրով-  
հետե փառքը նորա համար թանկ է ամեն  
բանից։

Հեծելազօրը ճանապարհ ընկաւ երեկո-  
յեան և ամբողջ գիշերը գնում էր Օյլտայի հո-  
տանքով ներքե. Կիրջալին առաջ էր գնում  
հեծեալների գլուխն անցած, Միխայրեակիմի  
կողքից, օրը, ինչպէս մոծակ, պզգում էր նորա  
ականջին փառքի, պատիւների և ժողովրդի  
հաւատի մասին. բայց Կիրջալին կարծես չէր  
լսում նորան և առաջ էր գնում խիստ մտա-  
ղբաւ։ Օտենալով Սլատինին, Կիրջալին մար-  
դիկ ուգարկեց լրտեսելու. երեսց օր Ամեդի  
զօրքը բանակ էր գրել Օյլտայի ձախ ափին,  
ինչպէս խաղաղ ժամանակներում, մինչև ան-  
գամ չգնելով պահապաններ։ Այդ պատճառով  
նոյն օրւայ լուսարացին Կիրջալին յարձակեց  
քնած բանակի վերայ և ազմուկով ու հարա-  
յով սկսեց ջուր-ը լրտեսքերին։ Յանկարծակիի  
գալով թուրքերը շկարօգացան ղէիւր վերցնել  
և նոցա գլուխներն ուտերից թռչում էին ինչ-  
պէս խնձորները ծառերից։ Ալբաններն այն-  
պէս խիստ էին սեղմել, որ նորա չգիտէին  
մեր փախչեն, իսկ ձիերը ստնատակ էին տա-  
լիս նոցա։ Վերջապէս հէնց բաղտրի գոների  
մօտ Ամեդին յաջողեց խմբել կնիքերիներին  
և սպազներին, բայց նա այդ կուում արդէն



զրկել էր իւր երեք որդիներէր: Հաղթամարի յետեւում նստած, նա շղիտէր թէ ինչ է տեղի ունենում կուրի դաշտում: Այն ինչ Կիրջալու ալբանները ցրելով թուրքերին յարձակեցին քաղաքի վերայ, որտեղ, հոգարաւրների յետեւից հանդիպեցին գնդակների կարկառին: Երկուսը բաժանեցին Աճեղի զօրաբաժնից և սկսեցին հարւածել Միխայիլեակիմին և Կիրջալուն, բայց վերջինները ճարպիկութեամբ պաշտպանուում էին և վերջապէս սպանեցին երկուսին էլ. զօրա Աճեղի երկու որդիներն էլն — Իսմայիլն և Արին:

Աճեղը տեսնելով այդ, ուզում էր յարձակել հակառակորդի վերայ, բայց նորա տակի ձին սպանւեց և նա դառնազին ուրաց, մինչդեռ նորա զօրաբաժինը կրճատուում էր և Կիրջալին վճռել էր վերջնականապէս ջնջել նորան. նա արդէն յարձակել էր մի բուն մնացածների վերայ, երբ յանկարծ նշմարեց, որ հեռուից Արջի վանքի կողմից լծուում էր ամբողջ ոյժով մի ինչ որ ձիաւոր, բարձր ձայնով կանչելով նորան: Կիրջալին սառեց. սուրհանգակը մօտեցաւ նորան, սկսեց ինչ որ շարժումներով խօսել: Այդ պատճառով, Կիր-

ջալին հրամայեց նահանջել: Ալբանները հարուստ աւարի յոյս ունենալով, նախ բան նահանջելը, վրայ տրժան հանելու սպանւածների հարուստ հագուստները. բայց Կիրջալին նկատելով այդ սպանեց նոցանից մէկին և սպառնաց նոյն պատժով այն բոլոր մնացածներին, որոնք կհամարձակէին կողոպտել... Գորանով նա ստիպեց իրեն հնազանդել:

Բաւականին կրճատւած զօրախումբը յետ նահանջեց: Արեն արդէն թաքնւել էր սարերի յետեւում. գուրս եկաւ դժգոյն լուսինը. կուրի դաշտից բաւականին հեռանալով Կիրջալին բարձրացաւ բարձր սարի գագաթն և շուրջը նայելով տեսաւ մի ինչոր բան նման երկրորդ լուսնի, Բրանկովանի գերեզմանի կողմում, և նա հասկացաւ, թէ դա ինչ լուսին էր: Խիժելով ձին նա մրրկի նման առաջ սուրաց, զօրախումբը նրա յետից: Միխայիլեակիմը հոռնելով նորան ստիպւած եղաւ ասել.

— Մի շտապիր, Կիրջալի, թէ չէ մեր ձիերը կոյգենն և խմբի կէտը հազիւ կկարուանայ տեղ հասնել:

Կիրջալին միայն խոժոռեց աչքերն և խիժանները խրեց ձիու կողերը: Թռնելով մի



բանի վերտո, խումբը փոքր առ փոքր սկսեց յետ մնալ. ձիերը սայթաքում էին և վայր ընկնում: Կամայ տկամայ պէտք էր կանգ առնել, ձիերին հանգիստ տալու համար. խումբը վեր թափուց խոտերի վերայ. ստուգեցին մարդկանց. երեաց որ նոցա կէսն էր մնացել:

Հասաւ առաւօտը. բայց զեւ չէին կարողացել մարդկին ու ձիերը հանգստանալ, երբ հեռաւոր անտառից երեացին ձիւորներ սպիտակ շաւմաներով:

Մի բողբոս բոլորը ձիերի վերայ էին:

— Դորտ Մահամեղի ալբաններն են, գոռաց Վիրջալին Միխայիլեակիմին. — Եթէ փաշան այդ խմբումն է, խնայիր նորա կեանքն, աւելացրեց նա: — Ես այդ խոստացել եմ Սարրային:

Վիրջալու հրամանատարութեամբ բոլորը պատրաստեցին հանգիստել թշնամուն, որը գալիս էր Ամեդ փաշայի վերջին որդու Արգալու գլխաւորութեամբ: Նկատելով կարգաւորած խումբը, թուրքերը «Ալլահ» ազատելով ընկան սլաւոնների վերայ: Միենոյն ժամանակ Վիրջալին, գոռալով «Իմ յետեւից, ընկերներ», խրեց թշնամու շարքերի մէջ և

սկսեց ջարդել: Նորա մօտ թռաւ Արգալին և նոցա մէջ կռիւ բացուց. բայց ճարպիկ Վիրջալին դուրս թոցրեց սուրը իւր հակառակորդի ձեռքից և բռնելով նորա օձիքից զէն չարեաց թամբի վրայից:

— Ասրիր, Արգալի, ասաց նա. — Ես չեմ ցանկանում զրկել քեզ կեանքից, որովհետեւ խոստացել եմ քո հօրը քեզ բարեկամ լինել:

Եւ նա արշաւեց իւր տղամանների մօտ, որոնք սերտ ճեշումով ջարդեցին ու ցրեցին թշնամու խումբը: Վիրջալին արգէն ուղում էր տօնել իւր յաղթութիւնը, երբ լանկարծ լուեցին զօրքի նոր ազաղակներ, որոնք դուրս թափեցին անտառից. զրանց առաջնորդում էր ինքը Մահամեղը: Զօրքը բաղմաթիւ էր. ալբանները չէին կարող գիմանալ. հարկաւոր եղաւ ցրւած նահանջել և Վիրջալին չկարողացաւ պահել իւր խումբը: Մինչ այդ նա երեսաւ երես ընդհարեց Մահամեղին:

— Այ, անպիտան շուն, գոռաց նա: Ո՞րտեղ է իմ աղջիկը:

Եւ նա սկսեց հարւածներ հասցնել, որոնք Վիրջալին ճարպիկութեամբ յետ էր գարձնում, ակնյայտնի խնայելով Մահամեղին, որը նա



ինքն էլ նկատեց: Բայց յանկարծ ձին խիտ  
թերեց, Մահամեդի հարածը կտրեց Կիրջա-  
ջալու ձիու սանձն և սուրբ խրեց նրա պա-  
րանոցի մէջ: Վիրաւոր ձին ծառս կանգնեց,  
և թռչելով զինուորի վրայից, տարաւ Կիրջա-  
լուն առաջ: Նա ինքը, ետթաղանով գործե-  
լով աջ ու ձախ, խրախուսում էր նորան ճա-  
նապարհ կտրելու. գնդակները սուլում էին  
նորա ականջների մօտից և ետթաղանները  
զիպչում էին նորա շորերին: 2րդ նայելով գո-  
րան, նորան յաջողեց զուրս պրծնել գորբի  
շաքերից և շուտով աչքից անյայտանալ: Նո-  
րա յետից ընկած ալբանները հեռու մնա-  
ցին, իսկ ձին շարունակ տանում էր ու տա-  
նում նորան առաջ, թռչելով ինչպէս բարայժ  
սարերով, ժայռերով: Կիրջալու զուրս պտըտ-  
ում էր և նա հազիւ էր շնչում: Թռչելով  
մի քանի ժամ, նա նկատեց, որ գտնւում է  
Բրանկովանի գերեզմանի շրջակայքում: Սար-  
րան երևաց նորա աչքերի առաջ և նա իսկոյն  
ցանկացաւ նորա մօտ լինել: Զննելով շուրջն  
և տեսնելով բազմաթիւ գիականեր, նա ոտը  
ստիքի մէջ ընկաւ:

—Այստեղ էլ կոտորած է եղել, բացա-

կանչեց նա և խիժեց ձիուն, որն արդէն ուժառ-  
պառւել էր և վերջապէս ցատկելով մի գե-  
տակի վրայից, սայթաքեց և ընկաւ:

Կիրջալին արագ ազատեց ոտքերն աս-  
պանդակներից և վազեց լերան վերայ տեսնե-  
լու Բրանկովանի գերեզմանը. ամեն կողմից  
փչում էր խանձահոտն և գիակաները: Հայեաց-  
քը բցելով գերեզմանի վերայ նա տեսաւ, որ  
Վլադիմիրեոսիոյի պալատը մինչև հիմքն աւեր-  
ւած էր:

—Իսկ Սարրան... սրտեղ է Սարրան...  
ուրաց նա և իջաւ գետնայարկը:—Սարրան...  
Մայր Եւդոկիա... Զուլւմա... Գոռում էր նա  
յուսահատ, բայց ոչինչ չէր լսում. միայն ե-  
րևում էին աւերածի և աւարառութեան հետ-  
քերը, և ոչ մի կենդանի շունչ: Նա կտա-  
ղած էօտորատում էր ձեռքերն, երբ յանկարծ  
լսեց, կարծես թէ մէկը հառաչում էր:

—Ո՛վ է, գոռաց նա:

—Ե՛ս եմ, ծեր Գունկալը... պատաս-  
խանեաւ ձայնը: Կերջալին մօտեցաւ:

—Լաւ է, հոգ... իշխանուհի... ի՞նչ  
Կիրջալին:



—Թուրքերը... կոլոպտեցին... ջարդեցին... իշխանուհին Արջի բերդումն է... ջուր:

Կիրջային գուրս բերեց նորան ազատ օդի մէջ, որպէսզի օդիէ նորան և հարցումփորձէ, բայց մինչգեռ տանում էր նորան, Դունկալը մեռաւ, և նա զէն շարտելով անշունչ գիակը, գնաց իւր ձիու մօտ, որը պահեւ էր մինեւոյն տեղում անշարժ:

Համոզելով, որ շար բազմը ծագում է իրեն, նա անօգնական ընկաւ իւր բարեկամի կողքին և գառն լաց եղաւ:

Երեկոյեան զէմ նա վեր կացաւ և ուղեւորեց Բուկովեան անտառով զէպի Արջի բերդը: Ճանապարհին նրա զլխովն այնպիսի բաներ էին անցնում, որ նա սարսափում էր. «Ի՞նչ կլինէր, եթէ Սարրան իւր հօր ձեռքում լինէր... Այժմ գուցէ, նա արդէն Արգալու գրկումն է... Ախոս որ ես շտապեցի նորան»:

Եւ նա վառւում էր, նա սար- և, բարերին զիպչե:

բաժ և եղել, բացա-

— Եւ վրէժս կլուծեմ նրանից... լծանգ կնտի իմ վրէժը:

Հետեւալ օրն, երեկոյեան զէմ, նա յաջողութեամբ հասաւ վանքն և ուղղակի գնաց վանահօր մօտ, որը նրան զրկարաց ընդունեց:

— Փառք Աստուծոյ, բացականչեց նա:— Զատ ուրախ եմ, որ դու սղջ ես և անվնաս... դու հարկաւոր ես մեզ:

— Ո՞րտեղ է իմ կլինը. տխուր հարցրեց Կիրջային:

— Մի վշտանալ իմ սրգի... Տէրը քեզ փորձութիւն է ուղարկել բայց մի վհատիր... Նա Մահամբէի ձեռքումն է... Երբ ալբանեցիք շարժեցին զէպի Բրանկովանի գերեզմանը, Տուգորը գուրս եկաւ նրանց զէմ, լծովնելով իւր մարդկանց մի մասը մօր և քո կնոջ պաշտպանութեան համար, բայց Օյլտայից անցնելիս նա յարձակման ենթարկեց և հեռու մղեց. լծնամու զէմ ունեցած մարտում նա վիրաւորեց և յետոյ բերեց այստեղ: Չնայելով իւր վերքերին, նա ճանապարհեց զէպի Ռունաց բանակը պաշտպանութիւն որոնելու...

— Լաւ է հոգ տարիլ իմ կնոջը, փշշաց Կիրջային:



—Մի տրանջա, իմ որդի: Երևի բազմն է... Գէ դու էլ ուզում էիր յազլծել, մինչդեռ դուրս եկաւ հակառակը... Եթէ նա յազլծէր, չէր թողնելու թուրքերին մինչև զերեզմանը:

—Այն, դու իրաւացի ես հայր, ցաւով պատասխանեց նա:—Ո՞րտեղ են իմներս և արգեօր նոցանից կան աշտեղ:

—Գան, արի իմ յետևից:

Եւ նորա ուղղւեցին եկեղեցի, որտեղից մուտք կար: Գէպի, ճրագի աղօտ կրտսով յուսաւորեա՞ծ գետնայարկը: Այնտեղ մեծ ժողովուրդ կար զանազան ազգերից: Բոլորն աղմուկով խօսակցում էին. բայց նկատելով եկող Գիրջալուն, մէկից լռեցին, իսկ յետոյ դռացին:

—Գիրջալէ, Գիրջալէ...

Միխայիլեակիմը, որին նա կարած էր համարում, մօտեցաւ նորան և ասաց.

—Մեր ձիաւորների մի մասը, որը կենդանի էր մնացել, բերի աշտեղ, մնացածներն էլ, եթէ նոցա ոչինչ չի խանդարի, նոյնպէս կգան... Քո կինը հօր ձեռքումն է, բայց մենք յետ կառնենք նորան, հարկաւոր է միայն ցանկանալ... այժմ մենք հանգստացած ենք, տար մեզ ուր ուզում ես:

Նոցա յետևից զեհնայարկը մտաւ մի ինչ որ արեգայ և մի բան փոփոաց փանահօրը. վերջինս փայլեց:

—Փառք Աստուծոյ, ասաց նա Գիրջալուն:—Մահամեզն անցել է Տերգովեցով գէպի Դունայ, իսկ Ռուսաց բանակը գալիս է մեզ օգնութեան:

—Հայր Եւգէն, պատասխանեց Գիրջալին,—տուր ինձ ձի և գէնք և ես իմ մարդկերացնով խիստ վրէժ կառնեմ մեր թշնամիներից:

—Տէրն օրհնի քեզ, պատասխանեց վահահայրը:—Վերցրու բոլորն, ինչոր պէտք է:

Գիրջալին մի կողմ տարաւ Միխայիլեակիմին և ասաց.

—Վաղը փաշան պէտք է լինի Տերգովեցում: Տերգովեցի և Դադօնեշտի մէջ մի բուլղարական գիւղ կայ Բազդրադ, որի բնակիչներն երգել են ինձ ու Տուգորին մեր կողմը լինել. ես խօսոյն կերթամ այնտեղ և նոցա հետ դարան կմտնեմ Բազդրադի ճանապարհի վերայ, իսկ դու մարդկանց հաւաքիր և ճանապարհւիր գէպի Տերգովեցի գետնեքը և եթէ մեզ յաջողի մենք կխլենք գերիներին:

Առաջին անգամն էր Գիրջալին փատահա-



նում իւր մտքերը Միխայիլեակիմին. Մահամե-  
գից կնոջը յետ խելու ցանկութիւնը բանդեց  
նորա լեզուն: Միխայիլեակիմն սկսեց պատ-  
րաստել, իսկ Կիրճալին առաջ անցաւ Բաղ-  
զրագ:

Արդէն ուշ էր, երբ նա ներս մտաւ տա-  
նուտէրի խրճիթը, որը իւր զէնքերն էր զննում:  
— Բարեհ, ասաց նա:

— Այ, դու ես, իշխան... Ո՞րտեղից էր  
չնորճ բերում:

— Իհարկէ ոչ միւս աշխարհից... շուտով  
հաւարիր քո մարդկերանց... լաւ աւար է  
սպասում:

— Իսկ ո՞ւր են քո մարդիկը... Դէ սպան-  
ւածները յարութիւն չեն առնի:

— Գիտեմ, անպիտան չուն, որ չեն յա-  
րութիւն առնի... Բայց դու էլ յարութիւն  
չես առնի, ծախու հոգի... Զուտ անգգամ:

Տանուտէրը շտապով վաղեցիկ հիշ ժա-  
մանակից յետոյ վերադարձաւ մի բանի մարդ-  
կանցով:

— Զուտով կգան և մնացածներն, ասաց  
նա: — Բայց դու ո՞ւր ես գնում...

— Ուր որ կտանեմ այնտեղ էլ կգար:

Տանուտէրը ժպտաց: Նա ուրախ էր, որ  
ձեռքը հազապիւտ աւար էր ընկել: Կիրճալուն  
ձերբակալելու համար Մահամեգը շատ ցեխին-  
ներ (փոյ) էր խոտապել և նա լծակարգ էր  
լարել: Վաղելով ժողովրդի յետիւց, նա ուղար-  
կեց ալգ մասին իմացնելու Գրաղիր-բէյ Նեհա-  
յին: Յանկարծ բախում ազմուկ բարձրացաւ  
և Կիրճալին հարցրեց.

— Այդ ի՞նչ է նշանակում:

— Գալիս են մնացածները, պատասխանեց  
տանուտէրը:

Խրճիթ մտան էլի մի բանի մարդիկ:

— Գնանք, հրամայեց Կիրճալին, և անցնե-  
լով ամբոխի մօտից, որոնք հեռացան նրա  
առաջից, ուզում էր բակը գուրս գալ,  
բայց յանկարծ, յետիւց նորա վերայ ընկան  
մի բանի մարդիկ, վայր գլորեցին և արագ  
կապկպեցին:

— Այ անպիտաններ, գոռաց Կիրճալին: —  
Այ լծէ գուր ի՞նչ էր... Սպասեցէք, ես ձեզ  
կտոժորացնեմ, անամօթ չներ:

Բայց նրան արդէն գինաթափել էին և  
ոտ ու ձեռք կապկպել:

— Վերջ ձեռ տիրապետութեանը, պարոն



ազա, ասաց տանուտէրը. — դու կարծում ես, մենք չգիտենք թէ ի՞նչ է պատահել քեզ ու Տուգորին... Բաւական է ծառայել ձեզ, մերկերիդ... այժմ մենք կծառայենք նոցա, որոնք աւելի ցեխնենք ունին:

— Անպիտաններ, ծախու հողիներ... կրճատայնում էր նա ատամները:

Մի բանի բոլորէից յետոյ ներս մտան զինւած մարդիկ, սափրած զուխներով և խուզած քիչերով, կարմիր շաւմաներ գրած, Գրադիր Բէյ՝ իսկական զապարօժ Նեշայի գլխաւորութեամբ: Բուլղարները մինչև գետին գլուխ տւին նորան ի նշան խորին հնազանդութեան:

— Ի՞նչ գրողիս համար ես կանչել ինձ այստեղ, հարցրեց Նեշայը:

Տանուտէրը ցոյց տւեց նորան Կիրճալուն:

— Ապստամբ Կիրճալուն յանձնում եմ քո ձեռքը, ասաց նա:

— Ի՞նչպէս, նորան բռնել էր... զէնքը ձեռքի:

— Ո՛չ, նա եկել էր գրգռելու միզ և համոզելու ապստամբելի մեծ փաղիշայի դէմ: Բայց Իզմայելի սերասկեարը մեծ պարզի էր խոստացել նորա գլխի համար:

— Առէ՛ր, ասաց ստամանը — չպրտելով տանուտէրին ոսկու քսակը, — և զուրս կորէր, ծախու շներ:

Բոլորը զուրս գնացին բացի զազախներէից:

— Քանզեցէ՛ր դորան, հրամայեց Նեշայը:

Պարանները մի ակնթարթում կտրատեցին և Կիրճալին կանգնեց: Նայելով նորան, ատամներ կարծես թէ զոնհատեց, կարծես փախեցաւ զերուց. և նա հրամայեց լծաթար միրզին Կիրճալուն հաղցնել Տերգովեց, իսկ ինքը ծեր զապարօժի հետ մնաց խրճիթում:

— Լսիր, Բողղան, ասաց նա, — ինձ թւում է, որ դա «նա» է... և նա ատամները կրճատացրեց: — Թող անիծւած լինի այն օրն և ժամը, երբ ես լսեցի Գօրգակին... Ո՛հ Տեւերա, Տեւերա... Բարի բարեկամ... Ես երբէք չեմ մոռանայ քեզ...

Ատամանը յուզեց յանկարծ և լռեց: Բողղանն այդ տեսաւ, բայց ոչ մի խօսք չասաց: Հետեւեալ օրը Կիրճալուն տանում էին Տերգովեց. պարանները կտրատում էին նորա ձեռները. նորանից բարերարւած բուլղարները



բար էին քցում նորա վերայ, սրտէսդի թուր-  
քերի սիրտը գրաւեն: Մօտենալով Տերգովեցի  
գետանցքին Կիրճալին յոյսը գրել էլ Միխայ-  
լեակիմի օգնութեանը, բայց այդ տեղում նա  
չէր երևում. «Հաւանօրէն, մտածում էր Կիր-  
ճալին, նա չէ սպասել և յետ է գարձել վանքը»:

— Ո՛հ, Սարբա՛, Սարբա՛... բացականչեց  
նա:— Այժմ էլ չեմ տեսնի քեզ:

Նորարը, որը բռնած էր նորա պարանը,  
խթեց նորան և արի մի հարւած ընծայեց նո-  
րա բացականչութեան համար: Բայց անցնե-  
լով գետանցքը յանկարծ, անտառի կողմից,  
գուրս թափւեցին գլնւած մարդիկ և, մի ալքն-  
թարթում թափւելով թուրքերի վերայ, բոլո-  
րին ճարգեցին: Միխայլեակիմը կտրատեց պա-  
րանները, ազատեց ձեռները և նա նստելով  
հէնց առաջին պոտահած ձին, յառաջ թաւ,  
այնպէս որ մի բանի բոսկից յետոյ խմբի  
հետըն անգամ կորաւ, և տեղը միայն գիակ-  
ներ մնացին:

Այդ գէտրից յետոյ, Կիրճալին վճռեց  
կտրել մարդկանց հետ ունեցած կապը և մո-  
ռանալ փառքն և կնոջը: Բայց միակ յիշողու-  
թիւնը, որ ինքը Լեախ է, կարող հասնելու

փառքի և իշխանութեան, այրում էր նորան  
ինչպէս չիկացած երկաթ: Բացի զրանից, կի-  
նը գուրս չէր գալիս նրա գլխից և նա, Մի-  
խայլեակիմի հետ միասին սկսեց թափառել  
բազարներ ու գիւղեր և փոզ փշացնել, սր-  
պէսդի գտնեա մի բան իմանայ նորա մասին:  
Նա մինչև անգամ եղաւ և Ռուսաց բանակում,  
բայց ոչ նորա, ոչ Տուրքի մասին ոչինչ չի-  
մացաւ...

Այդ պատճառով նա վերագործաւ վանքը  
բոլորովին խորտակւած: Վանականներն առաջ-  
ւան պէս նորան գրկաբաց ընդունեցին: Զու-  
տով Ռուսիան Տաճկաստանի հետ հաշտու-  
թիւն կապեց և բոլորը ըմբռնեցին:

— Ի՛նչ արած, առում էին վանականնե-  
րը, — Կոպտոններ աւելի լաւ օրերի:

Բայց փառքին ծարաւոյ մարդու համար  
սպասել միեւնոյն էր թէ մեռնել: Կիրճալին  
յուսահատութեան մէջ էր և մահ էր գալիս ինչ-  
պէս թըշւած հաւ: Նա կրկնակի էր տանջւում.  
արեգանները նկատում էին նորա տանջանքը,  
բայց ոչինչ չէին կարող տեսիլ: Մինչ այդ Մի-  
խայլեակիմն ուրախանում էր և զրգում նո-  
րան: Մի անգամ նկատելով, որ Կիրճալին



մտքի է տարւել, մօտեցաւ նորան և վճռօրէն  
ասաց.

—Երկար պէտք է մեր սրերը ժանգոտ-  
ւին պատեաններում: Զլինի մենք խեղապէս  
գերիններ ենք, պիտի լսենք զանազան մարդկանց  
հրամաններն ու անգործանանք: Մի՛թէ մենք  
լինենքս չենք կարող կանգնել մեր պատուի և  
ազատութեան համար:

—Ո՛չ, ազատութեան համար արդէն  
լռիր... Եւ ժողովուրդն էլ չարժի նորան:

—Իզո՞ւր ես այդպէս մտածում... Կան  
մարդիկ նորան արժանի... Իհարկէ ոչ այստեղ:

—Ո՞վքեր են գրանք, ինչպիսի մարդիկ:

—Դէ, թէկուզ արնառւտներն, պանդուր-  
ներն և ուրիշները որոնց աւաղակներ են ան-  
ւանում...

—Այդ լեռներինը... Իհարկէ աւաղակներ  
են:

Նշանակում է, քո կարծիքով, բոլորը  
աւաղակներ են, և ռուսները, և թուրքերը, և  
այն բոլորը, որոնք, մի որեւէ ճանապարհով,  
ոչնչացնում են ժողովրդին: Իսկ մի՛թէ ընչ  
ժողովուրդ են սպանում պատերազմի ժամանակ:

—Պատերազմը—ուրիշ բան... դորա հա-

մար օրէնքներ կան... բացի գրանից, ոյժն  
անոյժին պէտք է ջարդէ. ուժեղների կողմն է  
և փառքը և պատիւներն...

—Այդ գէպում, գնա ուժեղների մօտ և  
սողայ նրանց սաների տակ... Քեա Սուլթանի  
մօտ և նա քեզ իւր ծառան կգարձնէ:

—Լսէ՛ր, գուռաց Կիրջալին, աչքերը չռե-  
լով:—Գու գիտես, սր ես ոչոքի չեմ գլուխ  
ծռի, այլ հրամայել գիտեմ:

—Էլ ինչո՞ւ չես հրամայում մօլղաւների  
կամ բուլղարների լսել քեզ. հաւատայ, նորա  
ազնիւ մարդիկ են, աւաղակներ չեն:

Կիրջալին գունատեց:

—Լսիր, ընկեր, ոկոսեց կեղծաւորութեամբ  
Միխայիլիւմը—գնանք լեռներն և լեռնական-  
ները քեզ կհաշակեն իրենց տէրը, կլսեն և  
կհնազանդեն քեզ... Նորա չեն մուրայ փա-  
շաներից և բարութիւնը չեն վճարի դատաճա-  
նութեամբ... Սե-Գէորգը նոյնպէս աւաղակա-  
պետ էր, բայց կարողացաւ հաշակել ազատու-  
թիւն և իւր գետականներն ուղարկեց մինչև ան-  
գամ Ռուսաց արքունիքը:

Կիրջալին գոգաց և կուեկով իւր հետ,  
հեռացաւ դե—հրապուրտից, որը տեսնելով



նորա վարանումը, վճռեց վերջին հարւածը հառցնել.

—Յիշիր կնոջդ, շարունակեց նա.—գէ, պատով ու աղօթքներով չես դարձնելու նորան... Բայց եթէ դու կանցնես նոցա, քո կարծիքով աւաղակների գլուխը, այն ժամանակ նորան կգտնեն թէկուզ գետնի տակից...

—Այդ գէպրում, պնանք—վճռօրէն ասաց Վիրջալին:

Այդ օրւանից Վիրջալու անունն ահեղ խարադան դարձաւ Զուրջ-Դունայեան կողմնում. և Կորդակի խօսքերը բոլորովին արգարացան. նա այնպիսի աւաղակ դարձաւ, որի անունից դոգում էին Եսոսի և Բուխարեստի տէրերը և ուղարկում էին նորան խորջ, այսինքն փրկանք:

Առաւօտ էր: Օգն անշարժ էր. թռչունների երգը սղջունում էր արևի ծագումը: Դիր սարերի և հովիտների վերայ արածում էին ոչխարներն և երբեմն երևում էին զին-

ւած մարդիկ. նրանք դիմում էին գէպի Բրանկովանի գերեզմանը, որն այլևս ոչ ոք չէր պաշտպանում: Չնայելով դորան, Վլադլմիրեոկոյի բնակարանը, արտաբուստ անբնակ, խռթախռթ լիրն էր ժողովրդով, պատուհաններից սուլում էր բամբին. գրանիտեայ պատերը, երբեմն դորդերով զարդարւած, մերկ էին և նոցա տակ մարդկանցից ոմանք բնած էին, ոմանք պարկած, ոմանք խօտակցում էին: Այստեղ ամեն ազգից մարդիկ կային, լսում էր համարեա թէ խօսակցութիւններ ամեն լեզուներիով: Այրի մէջ վառւում էր խարոյկը և շամփուրի վերայ խորովւում էին ոչխարները. նորա շուրջը նստած մարդիկ ուտում էին և խմում: Այրի մուտքը լցւած էր բարերով, և ներս մտնողը զգուշութեամբ նորից ծածկում էր իւր յետիւց և գնում էր նշանակւած անկիւնը, սրտեղ նստած էր Միխայիլակիմը, Վիրջալու հաւատարիմը: Այդ առաւօտ նորա մօտ եկաւ լեռնականներից մէկը:

—Դէ, ինչ լաւ բան, հարցրեց Միխայիլակիմը:

—Վիզգինում, ինչպէս տեղեկացայ, մերանցից շատերը Օրբենովիչի մօտ ծառայու-



թեան են մտել: Ասում են Տուգորը նոյնպէս  
մտել է նրա մօտ:

—Է՛հ, մեր տէր և իշխանի կնոջ մասին:

—Ոչինչ չիմացայ... Գրա փոխարէն  
ուրիշն իմացայ. հինգ օրից յետոյ թուրքա-  
կան շատու է անցնելու Կրայովով և շատ փոյ  
է տանելու Վիդզինի փաշայի համար:

—Քանի հոգի են լինելու:

—Երեսուն ուլագ:

—Լաւ, գնա քնիր:

Ելլա մարդուց յետոյ ներս մտաւ գնչու  
Գիրէյը:

—Է՛հ, իսկ դո՞ւ ինչ. հարցրեց Միխայ-  
լեակիմը:

—Եղայ Միլիստրիայում, տեսայ Մահա-  
մեդին և խօսեցի ներքինիների հետ. փաշան  
յուսահատութեան մէջ է... Նա չգիտէ, որտեղ  
է իւր գուետը:

—Ուրիշ ինչ:

—Ես գանձ գտայ...

—Ի՞նչպիսի, առոյգ հարցրեց Միխայ-  
լեակիմը:

—Մահամեդը ուղարկել է բուլղարներին  
հազար ըսակ ոսկի, Կիրճալու գլխի համար

բայց փողերը դեռ չեն բաժանուած և գտնուում  
են տանուակրի մօտ:

—Լաւ գնա...

Գիրէյը գնաց: Միխայլեակիմը մտախոհ-  
ւեց. «Հազար ըսակ ոսկի՛—հիանալի, շատ  
լաւ... Բայց ո՞վ գիտէ, Կիրճալին կուղարկէ  
վանքը, կամ կբաժանէ աղքատներին... Նա  
ամեն բան կարող է անել... Գէ նա անընդ-  
հատ շարունակում է երազել ազատութեան մա-  
սին... կարծես ինքն ազատ չէ... Արդեօր  
ինչպէս է վարելու նա Կալիմախի իշխանի հետ...  
Հաւանօրէն կազատի նորան զլիսագնից. իսկ  
եթէ վերցնի էլ, անպատճառ կբաժանէ ժո-  
ղովրդին... Զուտով նա արդէն վերադառնա-  
լու է... Եւ ո՞վ գիտէ, նա կարող է ստիպել  
մեզ Միլօշին ծառայելու... բայց ես արդէն  
ոչ մի կերպ չեմ գնայ... Է՛հ, իսկ ինչ անեմ  
Եանգօին, ասել թէ շատել... Ո՛չ, աւելի լաւ  
է չեմ ասի... թէ չէ նա նորից կդարգստի  
կնոջ համար...

Զուտով մեծ այրի մէջ ալմուկ լսեց.  
քնած և ննջող մարդիկ իսկոյն զարթեցին և  
ստի լծան: Գալովը Կիրճալին էր, գէպի որը  
բոլորը մեծ յարգանքով էին վերաբերում:



Բայց այդ աւագակներն առաջնորդն ինքն արհեստով նման չէր իւր ընկերներին։ Տեսնելով նորան, իւրարանշիւր սր կարող էր ասել, որ նա ամենաբարեպաշտ և ամենախաղաղ մարդն էր։ Միխայիլեակիմը գուրս եկաւ նորան զիմաւորելու։

—Հարիւր ըստի ոսկի բաժանիր մարդկանց, առաց նա—և յիսունական պիտոյր նոցա, որոնք ինձ հետ էին արշաւանքին։

Միխայիլեակիմը զլուխ տուց և գնաց հրամանը կատարելու. մարդկանցից նա իմացաւ, որ Պիրջալին յարձակել էր Տերգովեց ամրոցի վերայ, ջարդել էր բերդապահներին և իշխանից պահանջել էր հազար ոսկի, որը խսկոյն տուել էին նորան։ Ստանալով փողը, վերադարձին նա բաժանել էր ազդատ երկրագործներին։ Յարձակելով ամրոցի վերայ, նա մտածեւ ըստարարցնում էր իւր վրէժը, բայց միևնոյն ժամանակ նա գառնում էր անգուլթ աւագակ. այդ փառքը դուր չէր գալիս նորան և խիզը սկսում էր արդէն տանջել։

Երբ ներս մտաւ Միխայիլեակիմը, նա հարցրեց.

—Ի՞նչ նորութիւն կայ։

—Լրտեսները վերադարձել են։ Եանկօն եղել է Վիդզինում, բայց ոչինչ չի կարողացել խմանալ իշխանուհու մասին. մինչև անգամ չի գտել գերեզմանի պահապաններից ոչ մէկին։

—Ռուբլի ինչ...

—Մօտ օրերս Պրայսովով ոսկի են տանելու Անմիզին։

—Ա՛խ, շարունակ ոսկի... ոսկի... Դէ՛հ, խոսք ողջ կեանքումս չպէ՛տք է շարագործեմ։ Գիրէ՛յն ինչ։ Բան չի լսել կնոջս մասին։

—Նա եղել է Միխայիլեակիմի, բայց միտք արական ոչինչ չէ իմացել... Հստ երևոյթ ին նա հօջ մօտն է, որովհետև Մահամեղր Բազարացիներին նուէր է ուղարկել .. Իսկ դու արդէն գիտես, որ նա զուր փող չի տայ գեաւուրներին։

—Ո՛հ, վարձկան չներ, բացականչեց Պիրջալին և նորա աչքերը փայլեցին։ —Հաւարիւր հարիւր մարդ կամաւորներ և երեկոյեան ամեն բան պատրաստ լինի ճանապարհի համար։ Դու նոյնպէս կգաս ինձ հետ... Ես նոցա ցոյց կտամ ի՞նչ է նշանակում գաւաճանել... Եւ նա բայցեւ այրի սկզբ։ Միխայիլեակիմը հեռացաւ։ —Է՛հ, ինչ արած, շարունա-



կեց նա ինքն իրեն:—Վրէժս կառնեմ, կայրեմ, կոշնչացնեմ... Բայց դէ գրանով չեմ վերադարձնի իմ կնոջը... Եւ կմնամ միշտ էլի միկնոյն աւագակր... Բայց քանի որ վճուած է: ուրեմն թող այդպէս էլ լինի:

Եւ նա բնիաւ գետնի վերայ, ծածկեց հափնջով և շուտով կարծես թէ քնեց. բայց երբ երեկոյեան գէմ Միխայիլեակիմն ասաց նորան, թէ ամեն բան պատրաստ է, նա արագ վեր թռաւ, և նորա գէմընց նկատելի էր, որ նա չէր քնել. նա դաժան էր և ասեցի: Գիտելով զէնքերը, նա դուրս եկաւ այրից: Նորա յետնից գուրս եկան հարիւր մարդ և բոլորը գնացին գէպի Բազգրագ: Բաժանելով խումբը չորս մասի և վերցնելով իրեն հինգ մարդ ամենակառաղի զլխահատներից, նա լուռ մօտեցաւ Բազգրագին:

—Այսօրւայ նշանաբառը (ЛОЗУНГЪ) կրինի իմ անունը. և հէնց որ կլտէր այդ, յարձակեցէր ամեն կողմից, ջարդեցէր ու այրէր: Տեղերդ...

Կիրջալին, Միխայիլեակիմի և միւսների հետ մօտեցաւ տանուտէրի խրճիթին, որի մէջ գեռ վառ էր կրակը, չնայելով ուշ ժամանակին:

Ճեղքը փայլ թափեցին գէպի դռները, բայց խոլոյն թաքնեցին սրահում, որովհետև նոցանից մէկն սպանեց հէնց տեղն ու տեղը: Կիրջալին բաց արեց խրճիթի դուռը. տանուտէրը ծնկաշոր աղօթում էր. նա կանգ առաւ անվճռականութեան մէջ. տանուտէրը դարձաւ գէպի դուռն և այնտեղ տեսնելով Կիրջալուն, վեր թռաւ և տարածեց նորա առաջ:

—Ներիր, տէր, ասաց նա,—ես հաւատարիմ ծառայ կլինիմ:

—Կորիր, դաւաճան, պատասխանեց Կիրջալին. և գուցէ ներէր նորան, բայց յետևում կանգնած Միխայիլեակիմը մտածելով, որ տանուտէրը խորամանկում է, շամփրեց նորան ետթաղանով, և նա մնաց տեղնուտեղը: Այդ միկնոյն ժամանակ գրսում մնացած աւագակները միանգամից գոռացին. «Կիրջալի, Կիրջալի»: Արեան տեսքը գրգռեց զլխաւորի վրէժի ծաբանն և նա գոռաց...

—Կրակէր... Այրէր...

Մի վայրկեանում տանուտէրի խրճիթի կտորը բռնկեց, նրա յետնից սղջ գիւղի կտուրներովը վազեցին կարմիր արագայները: Լսեց աղմուկ, զոռգոռոց, հառաչանք, ձիւ-



րի խորինջոց և անասունների բառաշը: Էներն  
առանց յետ նայելու վախճում էին անտառը,  
իսկ ժողովուրդը վաղվղում էր չփոթւած,  
ազերօտւմ էր խնայել. մինչդեռ «Կիրջալի»  
ազազակներն ուժեղանում էին և աւազակներն  
այրում ու ջարդում էին բուլղարներին, չինա-  
յելով մինչև անգամ ծծի երեխաներին. արևու-  
նը հոսում էր, իսկ կրակը լափում էր այն  
ամենը, ինչ որ հանդիպում էր ճանապարհին.  
դրօտւմ ցերեկանից աւելի լոյս էր: Այդ գա-  
ղանային դատաստանը շարունակեց մինչև  
արշալոյսը... և դիւրը կարճես չէր եղել...  
մնացին միայն ծխնելոյղներն և ածխացած  
դիակները:

Վերջացնելով Բաղդրազցիների հետ, Կիր-  
ջալին յետ դարձաւ, բոլորովին չկշտացած  
լւր վրէժից: Նա մնայլ ու տխուր էր: Մօտե-  
նալով Արջիբեան վանքին, աւազակները նկա-  
տեցին երեք ձիաւորներ, որոնք բշում էին  
բոլոր ուշով: Նոցանից երկուսը հալածոււմ  
էին առաջինին: Աւազակները դէմ վազեցին:  
Առաջինին հալածողները հրացան արձակեցին  
նորա վերայ. ձիաւորը տատանեց թամբի վե-  
րայ: Մօտենալով այդ ձիաւորին Միխայիլեա-

կիմը ճանաչեց. դա Սափվան էր, որը գնացել  
էր Կիրջալու կնոջ հետքը գտնելու:

— Սափվա, գոռաց Միխայիլեակիմը:

— Տէր... Իշխանուհին... Տուգորը... Սար-  
բան... արտասանեց նա և փուեց գետնին:  
Արիւնը հոսեց կրծքից և նա չկարողացաւ  
աւելի ոչինչ տեսլ, և միայն թոյլ թժափ տուեց  
ձեռքը Վիզգլինի ուղղութեամբ: Կիրջալին վրայ  
համեկով ցած թռաւ ձիուց և սկսեց թժափ  
տալ Սափվային, որպէսզի մի որեւէ բան իմա-  
նայ նրանից, բայց նա արդէն անզգայ էր...  
Յռնւած սպազները, Սափվային հալածողներն  
առաջին, որ նոցա Պիտեշտի աղան էր ուղար-  
կել, որպէսզի բռնեն շարագործներին, և կար-  
ծելով, թէ Սափվան է հրձիգը, բնական նօրա  
յիտեից և սպանեցին:

— Այդ իմ շարագործութեան պատիժն է,  
փոփոաց Կիրջալին. — Այժմ ես արդէն իմացած  
կլինէի, որտեղ է իմ Դարբան: Միխայիլեակիմ,  
աւելացրեց նա բորձրաձայն. դու կգաս ինձ  
հետ, իսկ դու Եանիօ, ձիերը կտանես այլը.  
սպազներին արէր ինչ որ կուզէր. Սափվային  
թմաղեցէր:

Մի վայրկեանում սպազները զլխատուե-




ցին, և Սավվայի մարմինը զրեց ձիու վերայ:  
Աւաղակները զնացին այրը, իսկ Գիրջալին  
Միխայիլեակիմի հետ վանրը:

— Հայր եւզինը սիրով ընդունեց նորան,  
բայց շատ բան ասաց և նորա արտասուքը  
բերեց: Երբ նոցա խօսակցութիւնը վերջացաւ,  
նա զուրս եկաւ Միխայիլեակիմի մօտ և ասաց.

— Գնա լեռներն և բռնիր իմ տեղը...  
զուցէ ես չվերադառնամ... մնառ բարեաւ...  
զուցէ զեռ էլի տեսնենք երբեքիցէ...

Նորա համբուրեցին, արնառտն արտաս-  
ւեց, Գիրջալին հեռացաւ... Ըստ երեւոյթին  
վանահօր խրատներն ազդել էին նորա վերայ.  
նա րցեց իւր վերայ ճգնաւորի բուրձն և վե-  
րարկուն: Պորանից յետոյ նորան տեսնում էին  
եկեղեցում, տարածւած մերկ սալաքարերի  
վերայ. ամբողջ օրերով նա չէր զուրս գալիս  
այնտեղից, և ոչոր չգիտէր, ինչ մարդ էր դա:



Այժմ վերադառնաւ իշխանուհի Վլադի-  
միրեսկոյին, Սարրային և Տուգորին: Երբ Մա-  
համեդ փաշան պաշարեց իշխանական ստոր-

երկրեայ պալատը, իշխանուհին գործունեայ  
մասնակցութիւն ցոյց տուեց, յուսալով որդու  
և Գիրջալու օգնութեանը, որոնք պետք է որ  
վերադառնային: Բայց տեսնելով, որ այրը  
չըջապատւած է բոլոր կողմերից Մահամեդի  
անձիւ գորքերով, նա հասկացաւ, որ օրվին  
ու Գիրջալին ջարդւած են և այդ պատճառով  
վճռեց փախչել: Ներս մտնելով Սարրայի սե-  
նեակը, յայտնեց նորան իւր մտապրութիւնը  
և անյապաղ բոլոր կանայք ճանապարհ ընկան  
ժայռերի միջով, որոնք զուրս էին գալիս Սե-  
միգրադեան սահմանը: Այդ ժայռերի ճանա-  
պարհը յայտնի էր միայն իշխանուհուն և նո-  
րա մօտիկ մարգկանց. նոքա յաջողութեամբ  
կատարեցին իրենց ճանապարհորդութիւնն եր-  
կու օրւայ ընթացքում: Գուրս գալով սահմա-  
նը, նորա բռնեցին գերմանական սահմանա-  
պահներէ, և իբրեւ զինուորական զերիներ,  
ուզարկեցին Գրմանշտադտ, Սեմիգրադիայի  
նախկին մայրաքաղաքն, իսկ յետոյ ուզարկե-  
ցին Տիմիսովօր, որտեղ նոցա պահում էին  
խիստ հսկողութեան տակ: Այնտեղ էլ Սարրան  
ազատուեց և արու զաւակ բերեց, որին մկրտե-  
ցին հօր անունով: Խիստ հսկողութեան պատ-



ճառով Սարրան ոչինչ չէր կարողանում իմանալ ամուսնու մասին, և միայն լալիս էր, հաշուելով իւր բանդարկութեան երկար ընթացքը: Վերջապէս իշխանուհուն յաջողեց կաշառել պահապաններին, որոնք ճանապարհ գրին նոցա մինչև սերբիական սահմանը և նոքա զրկաբաց ընդունելութիւն գտան Բուզնիցեան ամրոցում, իշխան Միլօշ Օբրենովիչի մօտ, այնտեղ գտան և Տուգորին, որը պատմեց թէ Միլօշի մօտ էր ընկել Ռուսական ծառայութիւնից յետոյ: Սարրան ընդունեց նորան, ինչպէս եղբօր, և շնորհակալ ցոյց տալ նորան իւր սրտուն ու հարցնել Գիրջալու մասին:

— Ինչ վերաբերում է Գիրջալուն, պատասխանեց նա, — ես ոչ մի տեղեկութիւն չունեմ նորա մասին:

Ուրախացած մայրը հաւատացած էր, որ դեռ ոչ բոլորը կորած է և որ մօլդաւական ազատութեան դրօշը նորից փոփոկելու է Բրանկովանի գերեզմանի վերայ:

— Կգայ ժամանակ, որ մենք էլ կապրենք ուրախ և բազմաւոր, ասաց նա:

— Բայց ոչ ես, պատասխանեց Սարրան,

արտասուքով լցւելով, ինձ համար ամեն բան կորած է:

Այս առիւթով նա նայեց Տուգորին, կարծես անխտաճութեամբ. նորան թուում էր, թէ նա գիտէ Գիրջալու մասին և միայն չի ուզում ասել:

Գորանից յետոյ սահեցին երկար, ձանձրալի օրեր: Ամրոցում չէր լսում ոչ մի փոփոխութեան մասին. միայն երեւում էր, որ Միլօշը պատրաստում է պատերազմի. գալիս էին ամեն կողմից զենականներ, պատրաստում էին զէնք և մարզիկ:

Մի անգամ իշխանուհի Վրադիմիրեւիչն պատահեց իւր սրտուն իշխան Միլօշի խորհրդանոցում և փտահ լինելով, որ ոչ ոք չի լսում իրենց, ասաց նորան.

— Իմ որդի, չէր խանդարի կանչել և Կիրջալուն... Նա արխաոիրտ է, նա ուժեղ կամք ունի և աներկիւղ սիրտ..

— Սո՛ւա... ընդհատեց նորան Տուգորը: — Պատերը բարակ են և Սարրան կարող է լսել... Թող աւելի լաւ է կարծէ, թէ նա սպանւած է, քան իմանայ նորա խալտառակութիւնը:

— Բայց գէ, Տէրը ներել է զգացող մե-



գաւորին, և մենք պէտք է գնանք նրա հետ-  
քով...

— Բայց երզում եմ, ես չգիտեմ, որտեղ  
է նա... ճիշտ է, նա թողել է աւագակային  
օրջը, բայց թէ ո՞ւր է գնացել—անյայտ է:

— Ես պահանջում եմ սրտնել նորան,  
հալարտ ասաց մայրը և դուրս եկաւ սենեակից:

«Որոնելը դժուար չէ, մտածում էր Տուգո-  
րը, բայց յանձնել նորան Սարբային և երե-  
խային ասելով, քո հայրը աւագակ է, ո՞չ, չեմ  
կարող... Թող աւելի լաւ է մայրս բարկանայ  
ինձ վերայ, իսկ ես չեմ տայ նորան Սարբա-  
յին... Ո՛հ, եթէ նա ինձ սիրէր... Բայց ո՞չ,  
նա երբէք չի մոռանայ Կիրջալուն»:

Այդ բոլորէին Սարբան ներս մտաւ սենեա-  
կը երեխայի հետ, որը բնած էր նորա ձեռ-  
ների վերայ:

— Մի տխրիր բոյրիկ, ասաց նա վշտակ-  
ցութեամբ:

Երեխան դարձնեց և թաթիկներն երկա-  
րացրեց Տուգորին:

— Ի՛նչպէս սիրում է քեզ, ասաց Սար-  
բան.— ճիշտ չէ, ինչպէս նման է հօրը:

Նորա նստեցին: Երեխան սկսեց խաղալ

Տուգորի մագերի հետ: Մայրը նայեց նոցա և  
ծանր հառաչեց:

— Ասա, եղբայր, սկսեց նա,— ասաք դու  
գիտես, որտեղ է Կիրջալին... ինչո՞ւ ես տան-  
ջում ինձ: Գուցէ նա մեռած է կամ նստած  
է արգելանքում... Գուցէ ես արդէն այրի եմ...

Նա հեկեկաց:

— Ոչ, պատասխանեց նա, համբուրելով  
նորա ձեռքը.— դու այրի չես... Կիրջալին  
կենդանի է, բայց...

Այդ բոլորէին ներս մտան երկու նոր մար-  
դիկ և Սարբան խօսոյն վերկացաւ և դուրս  
եկաւ միւս գոնից: Տուգորը կարմրեց:

Դորա Միլօն և Միխայիլակիմն էին: Մի-  
լօնը չը նկատեց Սարբային, բայց վերջինն  
խօսոյն հասկացաւ, որ ջահել կնոջ ու Տուգո-  
րի մէջ անցել էր մտերիմ խօսակցութիւն: Տու-  
գորը մինչև անգամ դուպչ, տեսնելով Մի-  
խայիլակիմին:

— Ես բերել եմ ձեզ մօտ, իշխան, ձեր հին  
ծանօթին ասաց իշխանը:

— Դու մենակ ես այստեղ, հարցրեց Տու-  
գորը գոզողչին ձայնով և մի տեսակ չփսթ-  
ւած...



—Դէ, էլ սեւ հետ կարող եմ լինել, երկ-  
գիմի պատասխանեց Միխայիլիմը:—Իմ  
մարդիկը դեռ կկարողանան հասնել, երբ նո-  
ցա կարիք կլինի:

—Իսկ քո իշխանաւորը...

—Դու ուզում ես ասել՝ Կիրճալին... Մի  
անհանգստանայ, նա չի գոյ այտեղ և չի  
խանգարի... Նա այժմ բաւում է իւր մեղքե-  
րը... Էհ, այն շարժի խօսել... Աւելի լաւ է  
ասացէր, իշխան, դարձաւ նա Միլօշին,—Հար-  
կաւոր եմ ձեզ թէ ոչ:

—Դու ճանաչում ես սորան, հարցրեց  
Միլօշն իշխանին:—Կարելի է սորա վերայ  
յոյս դնել:

—Եթէ գործը պատերազմի համար է,  
կարելի է:

—Իսկ ի՞նչ կանէիր, իշխան, կարուկ  
հարցրեց աւագակների գլխաւորը,—եթէ իշ-  
խանը երաշխաւոր չլինէր ինձ:

—Դու չէիր գուրս գայ այս սենեակից:

—Հանգստացիր, իշխան, ես չեմ գաւա-  
ճանի բեղ... Այդպէս էլ կասէր Կիրճալին, և  
նշ գրա նմանեցրը... և նա ցոյց տւեց Տու-  
գորին, որը հեռացել էր գէպի պատուհանն:

րը:—Համարիք ցեխիներն և իմ մարդիկը  
կհասնին պայմանաւորաւ ժամին:

Երկուսն էլ գուրս եկան: Կէս ժամ յե-  
տոյ Միխայիլիմը պնաց և ճանապարհին դա-  
տում էր իւր տեսակետով Տուգորի վարժունքը:

—Այն, ասում էր նա ինքն իրեն,—ծանր  
է նստելու Կիրճալուն Տուգորի բարեկամու-  
թիւնը... Թող այժմ վերջնի իւր կնոջը նորա  
գրկից:

Տուգորը ոչ մի խօսք չառաց Սարրային  
Միխայիլիմի այցելութեան մասին. իսկ ինքը  
չառպ գուրս գալով սենեակից, չնկատեց նո-  
րան: Տուգորի ասած խօսքերը, թէ նա այլի  
չէ, որ նորա ամուսինը կենդանի է, բաջալե-  
րեցին նորան և նա համբուրեց իւր փորրիկ  
Կիրճալուն:

1815 թւի ծագկաղարդի, կիւրակէին Տա-  
կովօ գիւղաբաղարում հաւարում էր ժողովուրդ  
ամեն կողմերից: Տաճարում կառարւում էր հան-  
գիտաւոր մալթաներ, որի ժամանակ հասաւ իշ-



խան Միօշ Շրբենավիշը, իւր զօրքի զլուխն անցած: Ներս մտնելով եկեղեցի նա աչքը բցեց աղօթողների վերայ. նոցա մէջ նկատեց մի օտարականի, որը եռանդով աղօթում էր ծնկաչոր և իւր վերայ էր դարձրել ընդհանուրի ուշադրութիւնը: Պաշտամունքի վերջին Միօշը վերցրեց Սերբիական դրօշակն և ձեռքին բռնած դուրս գալով գաւթի ժողովրդի մէջ, բարձրաձայն արտասանեց.

— Բարեկամներ... Ես ձեզ հետ եմ և այժմ պատերազմ եմ յայտարարում թուրքերի դէմ: Ըմենրդ, որ բարիք էր ցանկանում հայրենիքին, կանգնեցէք այս դրօշակի տակ և պաշտպանեցէք ձեր ազատութիւնը:

Սերբերը միաձայն ազազակեցին. «կեցցէ՛, կանգնած ենք պատւի և ազատութեան համար»: Այդ ձայնին, ժողովրդի միջից սեղմելով տռաջ եկաւ սև պանդուխտն և կանգնելով Միօշի առաջ, հպարտ ասաց.

— Իշխան, ես սլաւոն եմ, թողլ տուր ինձ մտնել քո դրօշակի տակ:

— Ի՞նչպէս է քո անունը, եզրայր, հարցրեց Միօշը:

— Սև պանդուխտ, պատառիտանեց նա:

— Զատ ուրախ եմ... պաշտպանիր ազատութեան դրօշն և եղիր մեր եզրայրը: ✓

Եւ Միօշը ձեռք տեց նորան: Օտարականը սեղմեց նորա ձեռքն և չրսկացրեց սուրբ: Զօրքին և ժողովրդին զէնք բաժանեցին և բալոյրը շարժեցին դէպի Կրագուեաց: Իշխանն արշաւում էր առաջից, սև պանդուխտը գնում էր կողքից թուխ ձիու վերայ. նա մռայլ էր և դաժան: Միօշը նայում էր նորան, բայց չէր հարցնում ո՞վ է նա: Տուգորը Միօշի հետ չէր, թէ չէ նա կճանաչէր ո՞վ է այդ օտարականը:

Սկսեց պատերազմը: Զնորհիւ սերբերի անսպասելի ապստամբութեան, թուրքերն յանկարծակի բռնեցին, և ամեն տեղ, որտեղից անցնում էին սերբիական զօրքերն, արիւնը վտակի պէս էր հոսում: Ինքը Միօշը, նորա հետ և սև պանդուխտը, ջարդում էին անխնայ ամբողջ շարաթւայ ընթացքում, արնպէս որ սլաւոնները Զատիկը կատարեցին պատերազմի դաշտում: Բուզնիցեան ամբողջում մնացած Տուգորն, իւր հերթում, գիշերային արշաւանքներ էր դործում, և յաղթում էր, դէպի Սարրան ունեցած սէրը ոգևորում էր նորան, և նա



պատերազմի հերոսն էր. իշխանուհին ուրախա-  
նում էր որպէս յաջողութիւնների վերայ: Ժա-  
մանակ առ ժամանակ լրարեքներ էին գալիս  
Միլօշի կողմից, կուփ գաշտից նորութիւններ  
բերելով: Սարրան միշտ ներկայ էր լինում և  
ագահութեամբ լսում էր լրարեքների պատմու-  
թիւնները: Մի անգամ ամբողջ եկաւ լեռնայինների  
մի ամբողջ խումբ, որոնց հետ խօսեց Տուգո-  
րը: Այդ բանը տեսաւ Զուլլման և յայտնեց  
Սարրային: Վերջինս հարցրեց Տուգորին, թէ  
նմբեր ևն և գել: Տուգորը պատասխանեց թէ  
տրեւտուններ էին, որոնց ուղարկեց Կրազու-  
ետց: Այդ միջոցին նա կարմրեց և աչքերը  
ցած րցեց: Բայց պէս չէր վերջացրել նա իւր  
մանրամասն հարցութիւնը, երբ սենեակը մտաւ  
մի մարդ, ամբողջովին փռշուտած ու ցեխոտ  
և բարձր տապ.

— Ուրախացիր, իշխանուհի... Մենք յաղ-  
թեցինք և Սերբիան ազատ է...:

— Ո՛հ... Վասիլ Ստեպանովիչ... բացա-  
կանչեց իշխանուհին, ողջունելով եկողին:—  
Պատմիր շուտով, ինչպէս պատահեց այդ ամե-  
նը, ով է յաղթողը:

— Վերջին ճակատամարտն, ինչպէս յայտ-

նի է, Նոր-Բաղարի տակն էր և այդ յաղթու-  
թեան հերոսն էր մի ինչոր սև պանգուխտ.  
Նա կուում էր տանի տեղ... Բայց ոչ որ  
չգիտէ ով է նա. ոմանք ասում են բուլղար է,  
միւսները — Վալախ, երրորդները — Լեախ:

Սարրան նայեց Տուգորին և իշխանու-  
հուն: Տուգորը կարմրեց, մինչպէս Ստեփանո-  
վիչը չարունակեց.

— Նոր-Բաղարի կուփ յետոյ, Միլօշը  
լսեց, որ Մահամեդ փաշան միացնելով իւր  
զօրքերն Ահմեդինների հետ շարժւում է գէպի  
Կրուշեաց: Մենք էլ շարժեցինք գէպի այն-  
տեղ. սև պանգուխտն առաջնորդում էր առա-  
ջապահ վաշտը. տեղի ունեցաւ արիւնահեղ  
ընդհարում. արիւնը հոսում էր վտակի պէս և  
ահաղին գաշտը ծածկեց զիալներով:

— Իսկ Մահամեդը... ուշաթմափ հարցրեց  
Սարրան:

— Մահամեդը կենդանի մնաց, և ամե-  
թալի փախուստ տեղց կուփ գաշտից, որով-  
հետեւ նորա բոլոր զօրքը ջարդեց պանգուխ-  
տի խմբից... Բայց զարմանալին այն է, որ  
Մահամեդը, մենամարտելով սև պանգուխտի  
հետ, ոչ մի շանդուածք անգամ չստացաւ. և



պանդուխտը, փոխանակ նորան տեղի ու տեղը չամիրելու, միայն անդրադարձնում էր նորա հարածներն և խնդրում էր փախչել: Բայց և այնպէս, նա անձնատուր չեղաւ, մինչև որ պանդուխտը շթուցրեց նորա ձեռքից սուրը, որը փշուր փշուր եղաւ, և միայն այն ժամանակ հայհոյանքներ թափելով կորաւ. մենք ուզում էինք ընկնել նորա յետից, բայց սի պանդուխտը թող չտուց:

—Նա է, այդ նա է, բացականչեց Սարբան: Տուգորը գունատուեց:

Ստեպանովիչը չգիտէր, թէ խօսում է Մահամեկի աղջկայ ներկայութեամբ, և այդ պատճառով աղաւ շարունակեց.

—Գորանից յետոյ մենք շարժեցինք Կրուչկաց, որտեղ Ահմեդը գիրք էր բռնել բլուրների վերայ. մենք ընկնէր նորան այնտեղից, բոլորովին ջարդեցինք և գերի բռնեցինք իրեն Ահմեդին, Արզալի որդու հետ, խլեցինք պաշարը, զէնքերը, թնդանիթներն և փողերը: Եւ այդ բոլորը շնորհիւ սի պանդուխտի, որը խողխողում էր թուրքերին և մոնչում էր նոցա վերայ ինչպէս առիւծ... Վերադառնելով այստեղ, ես հանգիպեցի արնաուտներին

կապիտան ինչ որ Միխայիլիմի, որը գալիս էր մեզ օգնութեան, բայց արդէն ուշացել էր:

Լսելով Միխայիլիմի անունը երկու կանայք իրար երես նայեցին և կարմրեցին:

—Նա ասաց ինձ, որ եղել էր այստեղ և որ իշխան Տուգորն ուղարկել էր նորան մեզ մօտ...

—Ի՞նչպէս թէ եղել է, հարցրեց իշխանուհին. — ինչո՞ւ ինձ չէիր ասել, իմ որդեակ...

—Մոռացել էի, մայրիկ, գունատուած պատասխանեց Տուգորը:

—Նշանակում է, դու գիտե՞ս, որտեղ է Կիրճալին: Նա չէ՞ արդեօք այդ սի պանդուխտը... Աղաչում եմ քեզ, ասա ամբողջ ճշմարտութիւնը...

—Չգիտեմ, չգիտեմ... Ես էլ լսել եմ այդ սի պանդուխտի մասին... Բայց Միխայիլիմին ինձ ոչինչ չասաց, գիտեմ միայն որ Կիրճալին կենդանի է... իսկ թէ որտեղ է նա...

Նա չվերջացրեց և գուրս փախաւ սենեակից, նորա յետից գուրս եկաւ և Ստեֆանովիչը: Սարբան սկսեց լալ:

—Ո՛հ, Եստուծ, բացականչեց նա: — Ինչո՞ւ Տուգորը թող չտուց մեզ տեսնել Մի-



խալիակիմի հետ: Մենք նորանից կիմանայինք  
ամեն բան... Դէ եթէ իմանար, թէ այս-  
տեղ եմ, Կիրճալին վաղուց եկած կլինէր այս-  
տեղ:

Իշխանուհին և Զուլյման սկսեցին մխի-  
թարել նորան, բայց նա չէր կտրուանում  
հանդուտանալ մինչև ուշ գիշեր... Եւ հեշտ  
չէր... Բոլորին էլ տարօրինակ էր թուում Տուգո-  
րի գաղտնապահութիւնն և վարմունքը, որն,  
ըստ երևոյթի, ամեն բան գիտէր և չէր ուզում  
առեր:

Մի քանի օրից յետոյ Միլօշը հանդիտա-  
ւոր կերպով յետ գարձաւ Բուզնիցա, իւր ան-  
յաղթելի զօրքի գլուխն անցած: Ճանապար-  
հին նորա հետ միացաւ Միխայիլեակիմը իւր  
խմբով: Պանդուխտը, տեսնելով նորան, խոր-  
հուրդ տւեց Միլօշին ուղարկել այդ խումբը  
գէտի Գրադիսկ և նա ուղարկեց, իսկ ինքը  
գնաց Բուզնիցա, որտեղ և հասաւ ուշ գիշերով:  
Հետեւեալ առաւօտեան եկեղեցում կատա-

րում էին զոհացողական մաղթանք: Իշխանն,  
իշխանուհի Վլադիմիրեուօն, Տուգորն և Սար-  
րան նոյնպէս այնտեղ էին: Սի պանդուխտը,  
ըստ սովորութեան, ծնկաչոք ջերմ աղօթում  
էր: Հազիւ միայն Սարրան նայեց նորան, և  
իսկոյն աղաղակեց.

— Սա նա է... Դա Կիրճալին է... և  
ուշաթափեց: Միլօշը բռնեց նորան և գուրտ  
բերեց եկեղեցուց: Կիրճալին, լսելով իւր անու-  
նը, բաշկոթեց ժողովրդի միջից, առաւ նո-  
րան Միլօշի ձեռքից և շրթունքները սեղմեց  
նորա երեսին: Ջահիլ կիներ բաց արեց աչքերը  
և ձեռքերը րցեց նորա վզովը:

Այժմ միայն իմացաւ Միլօշը, թէ գործ  
էր ունեցել յայտնի աւաղակի հետ, որի առաջ  
դրուում էր ամբողջ Բուլղարիան, բայց հաւա-  
տացած լինելով, որ իւր յաղթութեամբ նո-  
րան էր պարտական, մտածում էր ինքն  
իրեն.

— «Երեւում է բոլոր աւաղակները հերոս-  
ների են... Սե-Գեորգն էլ աւաղակ էր... բայց  
լինչպիսի գոծեր կատարեց... Է՛հ, լաւ, թող  
նրե՛ նորան Տէրը... Իզուր չէր հագել նա



ապաշխարողի շորերը... Երեւում է, նա զղջա-  
ցել է իւր յանձանքներից»:

Եկեղեցուց տուն վերադառնալով Սարրա-  
յի և Կիրջալու համար սկսեց մեծ ուրախու-  
թիւն. նորա չէին կարողանում կշտանալ ոչ  
կնծութիւնից, ոչ իրար նայելուց:

— Է՛հ, դու այժմ էլ չե՞ս թողնի ինձ,  
հարցրեց կինը, համբուրելով ամուսնուն և  
միևնոյն ժամանակ փաղարշելով մանուկին,  
որին հայրը գրկել էր, և որը գլուարութեամբ  
էր գնում նորան:

— Քանի դեռ Աստուած կհամբերէ մեզ-  
քերիս, ոչ մի կերպ չեմ հեռանայ քեզանից,  
պատասխանեց նա արտասուքն աչքերին:

Մի անգամ, շուտով, նորա գալուց յետոյ,  
նոցա սենեակը մտաւ իշխանուհին, իսկ նորա  
յետևից Տուգորը: Տեսնելով նորան, երեսն  
ուրախութեամբ երկարացրեց գէպի նա թա-  
թիկները. Այգ սարտափելի դուր չեկաւ Կիր-  
ջալուն և նա մտրումն առաջ. «Ա՛յ ինչ է նշա-

նակում ինրդ տանը չլինել... իմ երեսնան աւե-  
լի է ճանաչում ուրիշներին, բան ինձ»:

— Իմ որդեակներ, ասաց իշխանուհին, —  
Տուգորը գնում է և եկել է մնալ-բարեաւի:

Սարրան լցեց, իսկ Տուգորը գոնատուեց:  
Համբուրելով երեսային, նա մօտեցաւ Սար-  
րային և հապիւ չհեկեկալով ասաց.

— Մ'նա-բարեաւ, քոյրիկ, յիշիր գոնեա  
երբեմն ինձ: Նա համբուրեց նորան, իսկ յե-  
տոյ համբուրեց Կիրջալու հետ և լուռ արագ  
գուրս եկաւ սենեակից. Կիրջալին դուրս եկաւ  
նորա յետևից և ճանապարհ գրեց մինչև գոնե-  
քը, սրտեղ նորա կրկին համբուրեցին:

Այնուամենայնիւ, թէև Կիրջալին հեռա-  
տես էր, բայց չնկատեց, թէ ինչ պատահեց  
Տուգորին իւր կնոջ հետ բաժանելիս:

Մի շաբաթ անցած, Թուրքական զօրքերի  
նոր յարձակումները հարկաւոր եղաւ անգրա-  
գարձնել բաց կուր մէջ, որի պատճառով Մի-  
լօշն և Կիրջալին հեռացան Բուլղիցից:

Մի անգամ ուշ գիշերով Սարրան նստած  
էր իւր մանուկի անկողնիկի մօտ և յաճախ  
հառաչում էր. սենեակում տիրում էր կանթեղի  
կիսալոյսը, որը ազօտ վառում էր ալեբաս-



տրեալ ամանում: Զուլման նստած էր սենեակի անկիւնում և անհետիւյ, որ Սարրան յաճախ հառաչում է սկսեց մխիթարել նորան:

— Բաւական է հառաչես, ասաց նա, — Դէ Կիրջալին առաջւան պէս սիրում է քեզ... Տուգորը նոյնպէս պաշտում է — էյ աւելի ի՜նչ ես ուզում...

— Այ հէնց դա է ինձ անհանգստացնում, որ Տուգորը պաշտում է...

— Է՛հ, ի՜նչ կայ որ պաշտում է... Աւելի՛ լաւ, խղճով... ի՜նչպէս նա չէր ուզում բաժանել քեզանից... Այն, նա շատ է սիրում քեզ:

— Վերջացրո՛ւ, Զուլմա, խօսել այդ մասին, ասաց Սարրան և հեռացաւ գէպի բաց լուսամուտը. գարնանային հոգմը շոշափեց նորա գէմը. լուսինը թափառում էր մոխրագոյն երկնքով, հեռում հնչում էր սոսնակի երգը. մի տեղից, բոտ երեւոյթին, բուրգից լուում էր չեղզարայի ծանօթ ձայներ նա խիստ մտախոհեց:

— Ո՞վ է այդ նւագոյը, հարցրեց նա ցած ձայնով:

— Մի՛թէ չգիտես, որ բուրգում բան-

գարկած են Ահմեդն և նորա որդի Արգալին... նա է նւագոյը:

— Ա՛խ, Աստուած իմ... Ես մոռացել եմ իմ հօր ամենալաւ բարեկամին և մինչև այժմ հոգ չեմ տարել նորան ազատելու... Ա՛խ հայր, հայր... դու ինձ կալամոծէիր գորա համար: Հէնց վաղը հոգ կտանեմ այդ մասին...

Հետեւեալ առաւօտեան Սարրայի գէմը տխուր էր. իշխանուհին մտաւ նորա սենեակը և նկատելով նորա գէմքի վերայ արտասուքի հետքեր, քնքոյշ ասաց.

— Դու միշտ շարունակում ես զարգ անելը: Դէ՛հ, հանգստացիր, իմ թանկագին... Ախար Կիրջալին չուտով կվերադառնայ...

— Աստուած է իմանում, կվերադառնայ արդեօր, պատասխանեց նա, մտքումն ուրախանալով, որ նորան յաջողեց իւր թախիծը բացատրել Կիրջալու բացակայութեամբ:

Այդ ժամանակ հոգաթմբերի վերայից հնչեցին փուկերի ձայներ, որոնք համբաւում էին Միլօշի վերադարձը: Բոլորն շտապով հաւարեցին հոգաթմբերի վերայ յաղթողին հանդիպելու: Այս անգամ Միլօշի և Կիրջալու հետ գալիս էր և Միսայիեակիմը: Վերջինս տեսնե-



լով Սարրային մի տեսակ տարօրինակ ժպտաց։  
Սարրան ընկաւ ամուսնու կրճրին և սկսեց  
զրկախառնել նորան, բայց նորա գէմբի վերայ  
նկատելի էր տխրութիւնը, որի համար Կիր-  
ջալին, երբ նորա ներս մտան սենեակը և  
մենակ մնացին, հարցրեց,— Ինչո՞ւ նա այդպէս  
տխուր է։ Սարրան բացազրեց այդ Ամեկի և  
Արդալու բանդարկութեամբ, իրեն հօր ամե-  
նայաւ բարեկամների, որոնց խնդրում էր  
ազատել։

—Ամեն բան կանեմ, ինչ որ դու կցան-  
կանաս, իմ թանկագին, պատասխանեց Կիր-  
ջալին։

Ջուտով բոլոր դօրքը հաւարեց ամրոցի  
ահագին հրապարակում։ Ճաշի ժամանակ, որը  
տրում էր ՚ի պատիւ յաղթութեան, Միլօշը  
բաժակով զուրս եկաւ նոցա մօտ և բարձր  
առաց։

— Կեցցէ՛ ազատութիւնը և Սերը ազգը։

— Կեցցէ՛ Միլօշը, նորա հեռ և սի հե-  
րասը... փառք ու պատիւ նոցա... Կեցցեն  
Միլօշը և Կիրջալին. .

Յաղթութեան առթիւ դօրքը կերուխում  
էր անում մի բանի օր. Բուզնիցեան ամրոցի

սենեակներից հիւրերը համարեա դուրս չէին  
գալիս. ուրախութիւն, պար, երաժշտութիւն,  
ազազակ, զրոյց—այդ բոլորը խառնում էր  
մի ընդհանուր ազմուկի մէջ։ Սենեակներում և  
հրապարակում երգում էին ազգիերբը, պատ-  
նէշների վերայից սրտոտւմ էին թնդանօթներն  
և ումբերը. ժողովուրդը խմում էր, ուտում և  
համբուրում մէկ-մէկու հետ։ Իշխանի պահիճ-  
ներում նստած էին կանայք թուրքական օթ-  
եակների վրայ. նոցա մէջ չկար Սարրայից աւե-  
լի գեղեցիկը։ Կիրջալին բուլղարական հագուս-  
տով կանգնած էր նորա գէմն, և հիանում էր  
նորա աչքերով։

Յանկաթ՝ սենեակ մտաւ Միլօշը, իսկ նա-  
րա յետից երկու զերինները—Ահմեդն ու Ար-  
գալին.

— Կիրջալի, առաջ Միլօշը, — յանձնում եմ  
րեկ այն երկու զերիններին, արա ինչ ուզում ես։

— Ահմեդ փաշայ և Արգալի, գուր ազատ  
էր և այդ ազատութեամբ պարտական էր Մա-  
համեդ փաշայի ազգկանը...

— Մահամեդի ազգկան, բացականչեց ծե-  
րունին, — որը չնօրհիւ քո պաւաճանութեան,  
թողեց հայրական տունը և ուրացաւ մարգա-



բէի կրօնը... Ո՛չ ես չեմ ցանկանում այգալիտի ազատութիւն... Հրամայիր մեզ յետ տանել բարձրը...

—Աճմեղ փաշայ... ասաց Կիրճալին: Ո՛չ ես, ոչ նա երբէք չենք դաւանել ձեր Մարգարէի կրօնը, և եթէ դու չես ցանկանում օգտուել ձեզ տուած ազատութիւնից, ուրեմն մեռիր այստեղ:

—Եւ Կիրճալին ձեռքը բացեց ետժողանին, բայց Սաբրան մի ակնթարթում թռաւ օթեակից և ծածկեց Աճմեղին:

—Հանգստացիր, ասաց նա.—Սա իմ հօր բարեկամն է և ես խնդրում եմ խնայել նորան ...

—Ներքիւր ինձ, որ տարացայ. բայց նա ճշմարիտ չէ, ատելով, որ մենք պաւստանի կներ կրօնը... մենք երբէք մուսուլմաններ չենք եղել... Լսիր Աճմեղ, աւելացրեց նա փաշային, ես խոտտացայ քո որդու Արզալու ընկերը լինել, և հարցրու նորան, ինչպէս կատարեցի տուած խոստումս... Ես ոչ մի ժամանակ չեմ դաւաճանել ոչ իմ խօսքին և ոչ կրօնին. և եթէ պատերազմը վճռեց քո մնացած որդիների բազմը, աստ զրանում ես չեմ մեղաւորը...

Եթէ դու չես ուզում բնդունել ազատութիւնը մեր ձեռքից, ընդունիր ուրեմն այդ իշխան Միլօշից:

—Լաւ, ասաց Աճմեղը,— ես բնդունում եմ ազատութիւնը, բայց կգայ ժամանակ, երբ դու ստիպւած կլինես պատասխան տալ Ալլահի և մարդկանց առաջ քո արածների համար: Ես չեմ բարկանում քեզ վերայ իմ սպանւած որդիների համար և թող Տէրը ներէ քեզ:

Յետոյ նա շուռ եկաւ և գնաց: Արզալին գլուխ տուց և փափաց Կիրճալուն:

—Այժմ դու ազատ ես իմ հօրը տուած խոստումիցդ, երբեքիցէ կտեսնենք և այն ժամանակ այժերս կփութենք:

—Լաւ, ասաց Կիրճալին:

Խնճոյրի վերջին Միլօշայեակիւմը կանչեց Կիրճալուն միւս սենեակը:

—Ի՞նչ ես ուզում ինձանից հարցրեց նա:

—Նախ և առաջ, ես ուզում եմ, որ դու ինքդ տէր լինես և ոչ Միլօշին ծառայ:

—Ես ծառայ չեմ այլ բարեկամ:

—Այո, բարեկամ, որը նորան իւր ուտերի վերայ է կրում... Այդ զէպրում, միանգամից միւս բարեկամիդ, Տուգորին էլ գիր միւս ուտիդ,



նա բեղ վճարում է նոյնպիսի բարեկամութեամբ... և գուցէ դեռ աւելի լաւ... բանի որ կինդ ջահել է ու սիրուն... չպատիր նորանց բոլորին և մինչեւ անգամ կնոջդ... նա այնքան էլ հաւատարիմ չէ, օրքան բեղ թւում է... գնանք լեռները...

Եւ դեռ չէր վերջացրել, որ Գիրջալին գուրս բաշեց ետթողանն և ելժէ Միխայիլիկիմը գոների մօտ կանգնած չլինէր, և չկարողանար գուրս թռչել, նորա գլուխը թռնելու էր ուտերից:

—Անաթեմա, փշշաց Գիրջալին ետթողանք խրելով պատեանի մէջ: Վերջապէս, տիրելով ինքն իրեն, նա սկսեց բայլել սենեակում:

—Բայց կարող է պատահել, որ նա իրաւի ինձ հաւատարիմ չէ, մրթմրթում էր նա: — Հաւանօրէն նա մի բան նկատել է... Այլ կերպ ինչի՞ համար էր նա զրպարաութիւններ անում:

Սարրան տեսել էր, ինչպէս ամուսինն արնաուտի հեա միւս սենեակին էր մտել և ինչպէս վերջինս փախել էր այնտեղից: Նա եկաւ ամուսնու մօտ: Հէնց որ ներս մտաւ, Գիրջալին բռնեց նորա ձեռքը և կտրուկ հարցրեց.

—Դու ինձ սիրում ես...

Իբրեւ պատասխան Սարրան ընկաւ նորա վզովը, և պինդ սեղմեց կրծքին: Գիրջալին հանգստացաւ կարծես և պատուհանից տեսնելով, որ Միխայիլիկիմը հեռանում է իւր խմբի գլուխն անցած, խաշտկերւեց:

Հաշտութիւն կնքելուց յետոյ Սերբիայի գործերն սկսեցին ծաղկել: Իշխանուհի Վլադիմիրեսկօն առաջւան պէս երազում էր Մօլդաւիայի անկախութեան մասին և այդ պատճառով թղթակցութիւն էր վարում շատ ազդեցիկ մարդկանց հետ: Տուգսրն ամեն ջանք գործ էր գնում, որպէսզի ազատութիւն ձեռք բերի, և այդ պատճառով պատրաստում էր նոր տպրտամբութեան: Մինչ այդ Գիրջալին, արտարուստ հանդիստ, յաճախ մտածում էր Միխայիլիկիմի մասին, որը նորան կանչում էր լեռներն և այն մասին ինչ որ ասաց կնոջ համար:

Մի անգամ, ամառը Գիրջալին պառկած էր պուրակում, ամբողջից ոչ հեռու, և խաղում էր իւր որդու հետ: Սարրան և Իշխանուհին էլ



այնտեղ էին: Նոցա մօտ եկաւ և Միլօշը: Զուտով, Միլօշի գալուց յետոյ, պուրակը մտաւ մի սարհանդակ, որը Տուգորից նամակներ էր բերել: Մէկը նա տեսց իշխանին միւսը իշխանուհուն: Վերջինս կարգաց իրենը և ցոյց տուց Սարրային:

— Նաչիր, ինչպէս Տուգորը հօգում է մեր մօտին, ասաց նա:

Տուգորի անւան վրայ Կիրջալին տկանջը կախնց: Սարրան կարգաց նամակն և արտասուքներն երկացին նորա աչքերում: Կիրջալին տեսաւ այդ, հրեց երեխային, որը լաց եղաւ. և ինքը գնաց անտառը: Մայրը կարծելով թէ Կիրջալին գնաց փախչիկի համար խաղալիքներ բերելու, երեխային ձեռքն առաւ և շարունակեց խօսակցել իշխանուհու հետ: Նոցա մօտեցաւ Միլօշը: Սարրան վերկացաւ և գնաց Կիրջալու յետևից:

— Տուգորը գրում է ինձ, որ Մօլլաւիայի ազատութեան գործը մօտենում է իւր վախճանին և ինկրում է իմ օգնութիւնը, բայց աղաչում է, որ ես չուղարկեմ Կիրջալուն. նա վախենում է, թէ նորա Բաղդադեան պատաստանը կվնասէ իւր գործին:

— Պատարկ խօսքեր են, պատասխանեց իշխանուհին, Տուգորը մոռանում է, որ միաշն նա է կարող վերականգնել Մօլլաւիայի անկախութիւնը... Նս ինքս կգնամ նրա մօտ և բոլոր գործը կարգի կգնեմ. միայն դու, իշխան, մի զլանայ մեզ քօ օգնութիւնը:

— Բացի գրանից, շարունակեց Միլօշը, — ինձ յայտնեցին, որ, Պետերբուրգից այստեղ է գալիս իշխան Կանտակուզէնը Իսլաւնդու հետ բանակցութիւն վարելու իրենց ազատութեան մասին... Եւրի առաջ ունենալով այդ հո չեմ կարող բացարձակ եղնել ձեզ, բայց յամենայն պէպս, չեմ մոռանայ իմ բարեկամներին և թէկուզ ծածուկ կօղնեմ ձեզ:

Մինչ այդ Կիրջալին, կարծես թունաւոր ճանճից կծւած, վազում էր առանց յետ նայելու անտառով, ինքն իրեն հաշիւ չտալով, ուր և ինչո՞ւ է փախչում:

«Նշանակում է Միլօշայեակիմը օւզիդ էր, — մտածում էր նա, — զուր չէր նա կարմրում և մինչև անգամ լաց լինում, կարդալով նորա նամակը... Ո՛հ, Սարրան, Պարրան... Միթէ գու ինձ գաւաճանիկ ես...»

Թափառելով մինչև երեկոյ, նա տուն դար-



ձաւ ամբողջովին յուղւած և ջարդւած: Տեսնելով նորան անբնական գրութեան մէջ, Սարրան երկշտտ հարցրեց, ինչ է պատահել: Սկզբում նա ուզում էր խոստովանել ամեն ինչ. բայց մի ինչ որ բան արգելեց նորան և նա լռեց և պառկեց ընելու. բայց նա չքնեց... Գիշերը, երազի մէջ Սարրան արտասանեց Տուգորի անունը: Նա շտապով վեր լծաւ անկողնից և խնայեց կաթաղանը... բայց այդ միենոյն ժամանակ նա լռեց իւր անունը և կանգ առաւ: Ջահել կիներ զառանցում էր երազի մէջ: «Կիրջալի... ես քեզ սիրում եմ...» Ետեւանը ցած ընկաւ ձեռքից զորդի վերայ և նա ուժաստատ ընկաւ անկողնի մէջ, անխժեղով իւր բնաւորութիւնը: Այսպէս տանջուեց նա ամբողջ գիշերը տաժանելի կասկածների մէջ և հետեւեալ օրը լծում էր բոլորովին ջարդւած: Կինը տեսնում էր այդ և չէր հասկանում պատճառը... Անցաւ մի բանի օր, որոնց ընթացքում յաճախ արտասանում էր Տուգորի անունը և ամեն անգամ Կիրջալին կորցնում էր ինքն իրեն և հեռանում անտառը:

Վերջապէս Բուդնիցա հասան Կանտակուզէնը և լեռնականների ականաւոր առաջնորդ-

ները. եկաւ և Միխայիլակիմը: Նա չվախեցաւ Կիրջալուց, և թէև նա իսկական աւագակ էր, բայց նորա սիրտն էլ սէր էր պահանջում: Ընտրելով այդ սիրոյ համար Կիրջալուն, նա սիրով նւիրել էր նորան իւր կեանքը: Ճանաչելով նորա բնաւորութիւնը, նա կարողանում էր ստիպել նորան մոռանալ իւր ասածը, նորից ձեռք բերել նորա հաւատը: 2 Նայելով, որ բանակցութեան համար եկած զեռաւանդներն արդէն ցրել էին, նա մնաց Բուդնիցում և աշխատում էր զրգել Կիրջալուն գնալ իրեն հետ լեռները: Նորա խօսքերը զուր չանցան, և Կիրջալին սկսեց գիտակցել, որ ինքն իսկապէս պէտք է լինի Մօլգաւիայի տիրապետը: Նորա հետ խօսակցելիս, Կիրջալին միմիայն երազում էր զառնալ անկախ տէր և պատերազմի միջոցով հասնել ցանկացածին: Դորանից յետոյ նա զւարթերես զարձաւ և իշխանուհին, Սարրայի հետ միասին, չնորհակալութիւն տւին Աստծուն, որ Միխայիլակիմին յաջողեց համոզել Կիրջալուն զօրի պլուխն անցնել, Մօլգաւական շահերը պաշտպանելու համար:

Բայց մինչդեռ Կիրջալին գանդալում էր, լուր եկաւ, որ Տուգորը Բուխարեստում բարձ-



րացրել է ազատութեան գրօշակը: Այս գէպից  
օգտուեց Միխայիլեակիմը և օրպէսզի շտա-  
պեցնէ նորա օրոշումը, մի րանի խօսքեր քցեց  
նորան.

—Այ տեսնում ես, Կիրճալի... Տուգորը  
կարող է դառնալ Մօլդաւիայի տիրապետը:

—Ես, ես կրինեմ... վճռօրէն ասաց նա:

Արդէն յուրեր էին պտտում, որ Իպոլան-  
զին հասել էր Եասսի, սկսել էր կամաւորներ  
ժողովել և հրատարակել էր Յունաստանի ան-  
կախութիւնը: Լսելով այդ, Միօշն ի միջի այ-  
լոց ասաց.

—Լաւ կրինէր, եթէ օրեւ մէկն այդ յոյ-  
ներին գրողի ծոցն ուղարկէր, իսկ ինքը կանգ-  
նէր կամաւորներէ պուխը, և սրով ձեռք բե-  
րէր անկախութիւնը:

—Ես ձեռք կրերեմ, ասաց Կիրճալին. և  
այս անգամ գործը խօսքին միացրեց: Միխայ-  
լեակիմի օգնութեամբ, նա սկսեց կարգի բե-  
րել սիրբիական կամաւորներին և լեռնական-  
ներին և վերջապէս, մի րանի օրից յետոյ,  
ներկայ գտնւելով պառարագին, հրաժեշտ ար-  
ւեց կնոջը, բարեկամներին և ճանապարհ ընկաւ:



Ետնում՝ ամբողջի վերայ արդէն փողփո-  
ղում էր ազատութեան եռագոյն գրօշակը: Փո-  
ղոցներում շրջում էին յունական զինւորները  
սի զգեստներով մեռած զանգի խորհրդաւոր  
նշանը սի գլխարկների վերայ: Քաղաքից դուրս,  
մարգագետիններում կանգնած էին ալբան  
Իօրդակու զօրքերը, գոյնզգոյն շորերով, արաբ-  
ձաններում տեղաւորել էին խառնիճադանճ  
կլէֆտները, զանազանաձև հազուտներով: Զօր-  
քի առաջնորդներն և հրամանատարներն Աղէր-  
սանգը Իպոլանզին և Գէօրգ Կանտակուզէր  
բանակցութիւններ էին վարում և խորհրդակ-  
ցում էին երկտոտաբղ տիրապետ Սուլթանի մօտ:  
Իշխանաւորներն և թուրքերը փախել էին Բու-  
խարեստից Դունայի միւս կողմը, բազարում  
թողնելով միայն Կանիմօրա-Սալվային, որը  
պէտք է բազարում կարգ պահպանէր: Մինչ  
այդ Բուխարեստը բռնեցին այն զօրքերը, ո-  
րոնք շարժւել էին Չերչէնից Տուգոր Վլադիմի-  
րեսկոյի հրամանատարութեամբ: Տիրելով այս  
բաղարին, նա հրատարակեց անկախութիւնը և  
խոր սեփական ձեռքով տատկեց իշխաններին,  
նույս անհնազանդութեան համար:

Մինչ այդ Իպոլանզին էլ շարժեց իւր



զօրքը գէպի Բուխարեստ և բանակ գրեց Կօ-  
 լենտին գիւզում: Նա շատ էր ցանկանում Մօլ-  
 գաւական տիրապետ գառնալ, բայց Տուգորը  
 դորան չհամաձայնեց: Այդ պատճառով նա Տու-  
 գորին չըջապատեց զաւաճաններով, յուսալով,  
 որ երբ ժողովուրդը տեանի նորա անկումը, ա-  
 պա կանցնի իւր կողմը և ինքը կգառնայ Մօլ-  
 գաւախի թագաւոր: Բայց նա սխալւում էր: Չէնց  
 այնտեղ, կօլենտինեան բանակի հասաւ  
 Կիրջալուն և նորա անբաժան հանճար Միխայ-  
 լեակիմի գունդը: Յոյներն և Իզմայելի նախկին  
 փոխարքայ Իօրդակին եղբայրաբար ընդունե-  
 ցին նոցա: Բայց Տուգորը, լսելով որ Կիրջա-  
 լին գուրտ է եկել Բուզնիցից, խիստ տխրեց և  
 չգիտէր ինչպէս ընդունել նորան, և ինչպէս  
 պահել իրեն նորա մօտ. բայց երբ իմացաւ, որ  
 Կիրջալին միացել է Իսլամղու հետ, նորա  
 ուսերից կարծես սարը փեր ընկաւ: Այդ մի-  
 ջոցին նորա մէջ միտք յղացեց, որ եթէ նա  
 կտրելու լինի չարաբերութիւնը յոյների հետ և  
 ստիպւած լինի կուել նոցա հետ, ապա, կա-  
 րող է պատահել, նորան էլ փայլի բազկի աստ-  
 ղիկը:

Տուգորը գնաց կօլենտինեան բանակը,

բայց խոյս տուց Կիրջալուն հանդիպելուց, գէ-  
 Կիրջալին էլ չէր ուզում տեսնել նորա հետ: Մինչ  
 այդ Տուգորի թշնամիները քնած չէին և  
 մինչգեռ միւսները դատում ու պատապարտում  
 էին, Մաուրուսը, Իսլամղու լրտեսը, գրգռեց  
 Մօլգաւական իշխաններին Տուգորի գէմ: Գլտ-  
 նեցին թեթեամիտներ, որոնք հաւատացին,  
 թէ Տուգորը մտադիր է գաւաճանել իրենց: Տուգորը  
 գիտէր այդ թակարկները և ուշք չէր  
 դարձնում. բայց աչրի առաջ ունենալով այդ,  
 Կանիմօրա-Սափալին ուղարկեց Իսլամղու մօտ՝  
 առաջարկելով, որ նա ցրէ իւր զօրքերը, կամ  
 հեռանայ Գունայի այն կողմն և այնտեղ ձեռք  
 բերէ Յունաստանի աղաւթութիւնը:

Զուտով լուր ստացեց, որ Միխայիլայի  
 և Բրախիովի փաշաներն իրենց զօրքերը շար-  
 ժել են գէպի Փալաց և լցրել են Մօլգաւիան: Կիրջալուն  
 և Իօրդակուն ուղարկեցին պաշտ-  
 պանելու: Տուգորը, Բուխարեստում թողնելով  
 Կանիմօրին և Փարնակուն, շարժեց գէպի Պի-  
 տեշտ Վիգլինի փաշայի գէմ: Իսլամղին, եր-  
 կար տատանումներէր յետոյ, նոյնպէս գնաց  
 Տուգորի յետեից, իրր թէ նորան պաշտպանե-  
 լու. բայց խկապէս նա ուրիշ նպատակ ունէր,



աւելի մօտ լինել Սեմիգրադեան լեռներին, որ-  
պէսզի աւելի շուտ պոչ փախցնէ: ✓

Պիտեշտում Տուգորը յուր ստացաւ, որ  
մայրն ու Սարրան գալիս են նորա մօտ: Նա  
զուրս եկաւ նոցա դիմաւորելու Տրոյեանեան  
կամուրջի վերայ: Այդ գէպրից օգուտեց Իպ-  
ոլանդին և համոզեց մի քանի սպաների դառ-  
նալ իւր կողմը. նորա խոստացան դառնալ Տէնց  
անաջլին յարմար գէպրում: Նա ցանկանում էր  
իրան րաշել և Կիրջալուն, այդ պատճառով նա  
տեսնեց Միխայլեակիմի հետ, որպէսզի իմա-  
նայ նրանից թէ ինչ ճանապարհով կարելի էր  
գրաւել նորան իւր կողմը դառնալու. բայց  
արնաուտն զգոյշ էր և չընկաւ նորա ցանցի մէջ:  
Միմիայն նա ակնարկեց Կիրջալու փառասիրու-  
թեան վերայ. այդ պատճառով Իպոլանդին  
մի անգամ խօսեց Կիրջալու հետ, որպէսզի  
նորան օգնէ Տուգորին ոչնչացնելու: Բայց Կիր-  
ջալին կտրական հրաժարեց դորանից ասելով.

— Ես չեմ հետեւում տիրապետութեան, և  
եթէ այստեղ եմ հիկի, ապա միայն նրա հա-  
մար, որ թուրքերին կոտորեն, և եթէ բազմը  
կժպտայ ինձ, ես դորան կհասնեմ առաջ օրիւ  
օգնութեան:

Գալով Պիտեշտ իշխանուհին հարցրեց որ-  
դուն, մտեղէ Կիրջալին, ինչո՞ւ նորա հետ չէ:  
Տուգորը չպատասխանեց. միայն ծածուկ  
նայեց Սարրային, որը կարծես թէ փախում  
էր նորա հետ խօսելուց, ըստ երեւոյթին նա-  
խապուշակելով, թէ ինչո՞ւ ամուսինն այնտեղ չէ:

Իպոլանդին չհանգստացաւ և Կիրջալուց  
յետոյ գիմեց ալբան Իօրպախուն և ասաց նո-  
րան, որ Տուգորը գաւազրութիւն սարքելով  
բանակցութիւն է միարում թուրքերի հետ: Իօր-  
պալին ստուգեց այդ, հակառակը համոզեց և  
խորհուրդ տուց նորան հեռանալ Գունայի միւս  
կողմը, որովհետեւ Տուգորը չի ցանկանում նո-  
րա հետ բնդհանուր գործ ունենալ:

Հետեւալ օրը Կիրջալին նամակ ստացաւ  
իշխանուհուց, որը խնդրում էր անյապաղ գալ  
Պիտեշտ:

Մի անգամ էլ կարգալով նամակը, հրա-  
մայեց Միխայլեակիմին երեկոյեան պատրաստ  
լինել, իսկ ինքը գնաց զինուորական խորհրդին:  
Տեղգովեցեան ամրոցի մեծ զահրիճում արդէն  
հաւարել էին բոլոր առաջնորդներն և լուծ  
էին Իպոլանդու ճառը, որը մեղադրում էր Տու-  
գորին պատճանութեան մէջ: Կիրջալին միա-



ցաւ ունենդիրներին և միայն մռայլում ու  
կնճռուտում էր, տեսնելով թէ ինչպէս նա ան-  
ամօթ կերպով զրպարտում էր Տուգորին: Նորա  
յետևից խորհրդի պահիճը ներս մտան Տուգո-  
րի զեղաններն և յայտնեցին Իսլանդուն,  
թէ Վլադիմիրեօկոն իրենց ուղարկել է ասելու,  
«Այն տասը սպաներին, որոնց դու կաշառել  
էիր Տուգորին գաւաճանելու համար, ժողո-  
վուրդը պատապարտեց կախաղանի»:

— Ինչպէս տեսնում ես իշխան, շարու-  
նակեցին նրանք, քո հնարները ոչ մի յաջողու-  
թիւն չունեցան և մեր տիրապետը վերջին  
անգամ առաջարկում է քեզ հեռանալ Գունայի  
միւս կողմը, կամ ցրել զօրքը:

— Թակարդներ լարովն ես չեմ, պատաս-  
խանեց Իսլանդին գունատւած, — բայց յայտ-  
նեցէր ձեր տիրապետին, որ կամտանք և նո-  
րան պատասխան կտամ:

Տեսնելով որ Իսլանդին արդար չէ, Կիր-  
ջալին յայտնեց, որ դուրս է գալիս պահիճից,  
բայց Իսլանդին կանգնեցրեց նորան, որպէս-  
զի ապացուցէ Տուգորի գաւաճանութիւնը. և  
նա հրամայեց կանչել Մաուրուսին: Դահլիճ  
մտաւ ինչ որ ալանդակի մէկը, կնճռոտ գեմ-

բով, փոքրիկ ճակատով և փսն ընկած աչքե-  
րով, բարակ շրթունքներով, սուր դնչով, ձեռ-  
քի ծուռ մատներով և դուրս ցցւած ոտքերով:  
Նա դուրս հանեց պարկից երկու նամակ և  
տուեց Իսլանդուն:

— Ահա ապացոյցները նորա գաւաճանու-  
թեան, ասաց Իսլանդին: — Մի նամակը նա  
ստացել է Զիֆուտից, Մահամեդի լրտեսից, միւ-  
սը Սալվայի սահանդակից:

Մահամեդ փաշային ուղղւած նամակում,  
որը կարգաց Իօրդակին, ասւած էր, որ Կանի-  
մօրա-Սալվան խոտտանում է Մահամեդին Տու-  
գորին պարձնել Սուլթանի հպատակութեան,  
եթէ նա կազատէ Մօլլաւիան և Տուգորին  
տիրապետ կանէ: Երկրորդում, — որ նա բոլոր  
յոյների վրախները կլանձնէ, կկտրէ նոյա գե-  
պի լեռները փախչելու ճանապարհը և կլանձնէ  
Իսլանդուն, կենդանի կամ մեռած, մարդա-  
րէի ուղղափառ օրդոց ձեռքը: Այնուհետեւ աս-  
ւած էր, «Քո գաւաճան Կիրջալին և նորա փախ-  
ցրած դուստրդ մօտ օրերս կլինին Պիտեշ-  
տում և Սելիման ու Կիրջալին կլինեն քո ձեռ-  
քում»:

Այդ նամակներն ստիպեցին Կիրջալուն



գողայ. Իսպախանգին ժողտաց, մինչդեռ ժողովում լսեցին ձայներ.

—Մահ գաւաճանին...

—Իշխան, խօսեց Կիրճային, ես չեմ հաւատում, որ Տոգորը գաւաճանէ: Այնուամենայնիւ, ես ինքս կզնամ եւ նրանից հաշիւ կպահանջեմ: Ուղարկիր ինձ հետ քս մարդոցը եւ եթէ նա մեղաւոր է եւ խիստ վրէժ կառնեմ նրանից. իսկ եթէ ոչ, ապա այն ժամանակ դու էլ մի պահանջի:

—Լաւ, պատառխանեց Իսպախանգին, քեզ հետ կգան Խորգակին, Կօրափիան, Մաուրուան եւ Օղամբուրկը... Աստուած տեսնում է, որ ես նորա բարիքն եմ ցանկանում եւ նորա պաշինքն եմ որոնում:

Զինուորական խորհուրդը վերջացաւ. բոլորը ցրեցին. մնացին միայն Օղամբուրկը, Կօրափիան եւ Մաուրուան, որոնց հետ Իսպախանգին ժաբուն խօսում էր:

Յետ գալով, Կիրճային հրամայեց Միխայիլակիմին թողնել Բեշերովիչին սերբիական հետեակի հետ նոյն տեղում, իսկ ինքը գայիր հետ:

Մի ժամից յետոյ Իսպախանգու լրտեսները,

Կիրճային եւ Խորգակին իրենց խմբերով Պիտեշտի ճանապարհին էին... Տուգորը քաղաքավարի ընդունեց զեսպաններին եւ թէ եւ անբաւական էր Կիրճայու հանգիպումից, այնուամենայնիւ սիրովիր էր եւ տոտց:

—Ո՛րքան ուրախ կլինի Սարբան քս դալուն... Ես խոյոյն կկանչեմ նորան...

—Հարկաւոր չէ, պատառխանեց Կիրճային. աւելի լաւ է կարգաւ այն նամակները, որ մենք բերել ենք քեզ:

Խորգակին տեց Տուգորին, որը աչքէ անցնելով կատաղեց.

—Կանխմօրան է գաւաճանում ինձ եւ ոչ ես ձեզ. դորա համար ժողովուրդը դատապարտեց միւս գաւաճաններին... Դուք ինքներդ այդ լաւ գիտէք, եւ ես մտաղիւր չեմ արդարանայ: Իսկ ինչ վերաբերում է Իսպախանգուն, ապա եթէ նա ինձ հանգիտե չի թողնի եւ չի զնայ Դունայի միւս կողմը, եւ կգործադրեմ զէնքը, սրովհետեւ նա անգործ է մնում, երբ սլաւոնների արխներ հոռում է դեռի պէս...

—Իշխան, խօսեց Կօրափիան, —դու յանգիմանում ես մեզ անգործութեան համար, իսկ ինքը գաւաճանում ես մեզ:



—Անպիտան, բացականչեց Տուգորը, մօտենալով նորան, դու համարձակուում ես ինձ դաւաճան անւանել...

Օգամբուրին և Մաուրուսը քաշեցին դաշոյններն և շամփրեցին Տուգորին:

—Գործանիր, դաւաճան, գոռացին նորա: Նոյն վայրկեանին Կիրջալին տեղնուտեղը թողեց Մաուրուսին. Օգամբուրիը փախաւ: Իօրդակին բռնեց ընկնող Տուգորին: Այդ վայրկեանին, նախասենեակից ազմուկ լսելով, ներս մտան իշխանուհին և Սարբան. Կիրջալին կանգնած էր մերկ եաթաղանով Տուգորի դիակի վերայ... Նա աղչած էր պատահմունքից: Տեսնելով իւր սրդուն արեան մէջ, իշխանուհին ընկաւ նորա վերայ:

—Թշուռակա՛ն, ճշաց նա Կիրջալուն, գո՛ւ ես իմ սրդու սպանողը:

—Եզրայր... Տուգոր... կոշեց Սարբան, ընկնելով իշխանի դիակի վերայ. բայց Կիրջալին աջնպէս ուժով հրեց նորան, որ նա թռաւ դէպի պատը:

—Մարդասպան, հեկեկաց նա:

—Դուստանուհի՛... փշռաց Կիրջալին և ուզում էր հաւածել եաթաղանով, բայց երե-

խան, տեսնելով մօր ընկնելը, վազեց նրա մօտ և թաթիկներով փաթաթեց նորա պարանոցին: Նսրա ձեռները թուլացան և նա յուսահատ հեկեկաց:

—Տէր, սրպիտի գժբազգութիւն է ծանրանում ինձ վերայ:

Եւ նա նայեց անմիտ հայեացքով սենեակին Տուգորի դիակին, որի մօտ ծնկաշոր մնացել էր իշխանուհին:

Մինչ այդ Օգամբուրիը յայտարարեց Մօլզաւներին, թէ Կիրջալին և Իօրդակին սպանեցին Տուգորին: Բոլորն իրար խառնեցին և սկսեցին եռանդով վրէժ լուծել: Սկսեց խիստ բնդհարում Մօլզաւների, Ալրանների և րուզարների մէջ: Կիրջալին և Իօրդակին դուրս վազեցին, նստան ձիերն և սկսեցին պաշտպանուի: Զնորհիւ ճարպիկութեան նոցա յաջողեց հասնել քաղաքադռների և նահանջել դէպի Տերգավեց: Մօլզաւները խիստ ճնշեցին նրանց. Կիակներն ընկնում էին երկու կողմերից: Բայց լանկարմ մօլզաւների միջից ճշոյններ լուեցին. «Թուրքերը Պիտեշումն են»: Կիրջալին պահեց ձին և հրամայողաբար գոռաց.

—Յետ... դէպի Պիտեշտ...



Միմեանց հետ կուտոյ սլաւոնները դադարեցին և Կիրջալու յետեից թռան գէպի Պիտեշտ, կարծես նոցա մէջ ոչինչ չէր պատահել: Նորա Տերգսվեցի և Պիտեշտի կէտ ճանապարհին էին և մինչդեռ տեղ կհասնէին, այնտեղ արգէն կուում էին: Չունենալով հոսեգուն առաջնորդ, Մօլլաւները ստիպւած էին նահանջել, որովհետեւ Ահմեդի սպագները խիտ յարձակեցին նրանց վերայ: Իմանալով այդ, Կիրջալին հասկացաւ, որ նորա կինն արգէն թըշնամու ձեռումն էր և, հասնելով Պիտեշտ նա կատաղած խուկեց թշնամու շարքերում, որպէս զի ազատէ Սարրալին: Բայց այդտեղ նորան յայտնեցին, որ Մահմեդի գունդը լցել էր Տերգսվեցի և ջարդում էր յոյներին: Վանտակուղէն և Իպտանդին փախել էին Աւոտրիա: Նա թռաւ այնտեղ Խօրգակու հետ, բայց մինչ նորա կհասնէին, ամբողջ քաղաքն արգէն բացերի մէջ էր, իսկ չկտտարած յոյները փախչում էին թուրքերից հալածւելով... Տեսնելով որ ամեն ինչ կորած է, Կիրջալին դռն լաց եղաւ. նորա մարդիկը ջարդւած էին:

Մինչ այդ վրայ հասաւ մութ գիշերը, լուսաւորւած Տերգսվեցի և Պիտեշտի հրդեհների

բացերով: Կիրջալին և Խօրգակին գնացին գէպի Գրազնէշտ և կանգ առան բարձր լեռան վերայ, որտեղից տեսնում էր թշնամու բռնակը: Կիրջալին վշտով նայեց այդ ուղղութեամբ և ասաց.

—Այժմ թուրքերը քնած են. եկ քնայներ նրանց յախտեան:

—Եթէ միայն գործը մեր մասին լինէր, պատասխանեց Խօրգակին, այն ժամանակ ես էլ կհամաձայնէի քեզ հետ. բայց աշտուկ բանը որբացած գորքն է, որոնք կզրկեն իրենց զինուորներից:

—Այդ գէպում գնա Արջիրեան ամրացը, իսկ ես կերթամ Պիտեշտ... Եռանց քեզ էլ կարոյ եմ հօլա գնալ:

Եւ նա հրամայեց Միսայիեակիմին հաւարել մնացած մարդկանցը: Արնատար հաւարեց երեք հարիւր սերքեր և նոցա զինուորութիւնը յանձնեց Բեշերիշին. հարիւր ձիաւոր բուլղար և հարիւր հետեակ յոյներ յանձնեց Վանտօզոնու և Սաորիանոսի հրամանատարութեանը և նորա բոլորը ճանապարհւեցին գէպի Պիտեշտ, զուտն ունենալով Կիրջալուն:

Լուսաբացին նորա աշուղ քաղաքի կենդ-



բանումն էին: Հետեապէս մտածելն անդամ աւելորդ էր կնոջ աղատութեան մասին, ամբողջ ամբողջ մոխիր էր գարձել և ողջ քաղաքում չէր մնացել կենդանի չունչ: Գիտելով հրդեհմաները, Կիրճալին մտախոհեց, երբ յանկարծ նորան մօտեցաւ Միխայիլեակիմն և առաջ.

— Տէր... Ես մարդիկ ուղարկեցի լրտեսելու. նորա իմացել են, որ Ահմեդը գերիների հետ միասին գնացել է Բուխարեստ:

— Այդ ղէպը ում—մենք էլ այնտեղ:

Եւ նա ձին քշեց. գունդը նորա յետևից: Ճանապարհին հանդիպող Մօլլաւները գոռում էին նորա յետևից.

— Տուգորի սպանիչ...

Նա խում էր այդ ու լում:

Արշաւելով շատ վերստեր, Միխայիլեակիմը նորից մօտեցաւ նորան և փոփոսաց.

— Իզուր ես ընկել կնոջ յետևից... Նա քեզ հաւատարիմ չէ...

— Լռիր, գի', ֆշշաց նա և դուրս քաշեց գօտուց ատրճանակը: Միխայիլեակիմը բանդեց բաճկոնի կոճակները:

— Խփի՛ր... հանգիստ առաջ նա— եթէ չես հաւատում ինձ...

— Ասա բոլորն, ինչ որ գիտես, խօսեց սառչելով Կիրճալին: Միխայիլեակիմը պատմեց, ինչ որ տեսել էր Բուզնիցում:

— Բայց մի յուսահատիր, աւելացրեց նա, և եթէ կինդ գաւաճանել է քեզ, ապա փառքը չի գաւաճանի... գնանք լեռները...

Կիրճալին չհամաձայնեց:

Մօտենալով Բուխարեստի սահմանին և կանգ առնելով ճանապարհի կիսին, Կիրճալին յանկարծ դարձաւ ղէպի Փօկշաններն և ուղղեց ղէպի Պրուտ: Այդ արշաւով նա ուզում էր խաբել թուրքերի արթնութիւնը և մարքել ղէպի Ռուստաման նահանջելու ճանապարհը: Նա իսկապէս սկսեց երազել այն մասին, թէ միայն ինքն է կարող ազատել Բուլղարիան թուրքական լծից և այդ պատճառով իրեն հպարտ էր պահում միւսների վերաբերմամբ: Նա յոյս ունէր, որ եթէ իրեն չյաջողւի նստել բուլղարական և մօլդաւական գահը, ապա նա հովանաւորութիւն կգտնի ռուսների մօտ:

Համեմելով Պրուտ, որի միւս կողմում երեւում էին Ռուսիայի և Սկուլեանու սահմանապահ երկզքի տանի արծիւները, նա իրեն անվրտանգ էր համարում: Բայց գիւ Սիրետ գետի



մօտ սկսեցին նրան հանդիպել սպազներին փոր-  
րիկ խմբեր, որոնց նա հեշտով թեամբ յաղթում  
էր։ Սակայն Պիտեշտից դուրս գալու երրորդ  
օրը սկսեցին երևալ մեծ գնդեր, որոնք արշա-  
ւում էին գէպի Պրուտ։ Գետի ափին տեղի ու-  
նեցաւ ուժեղ ընդհարում բնաւարացիների և  
ուսւ գլխուորների աչրի առաջ, որոնք հետաքրք-  
րութեամբ նայում էին, թէ ինչով է վերջա-  
նալու այդ բոլորը։

Կիրջալին տմրացաւ հին հողաբուրներին  
մէջ և հերոսաբար պաշտպանւում էր, և այն  
ժամանակ, երբ նա գեռ չունէր համարեա ոչ  
մի կորուստ, թուրքերի գիտկներով լցւած էր  
ամբողջ հովիտը և յաղթով իւնը, թուում էր, նո-  
րա կողմն էր։ Բայց յանկարծ, որտեղից որ-  
տեղ, երեաց նոր հեծելաջօր, իսկ նորա յի-  
տիից և հետեակը։ Սորա և միւսները նման  
չէին առաջիններին, նոցա շարրերում երևում  
էին զազախների նիզակներ։ Կիրջալին հրամա-  
յեց շարձակել առանց հրամանի։ Հեծելազօրը  
յարձակեց հողաբուրի վերայ և մի քանի տառ-  
նեակներ ընկան ձիերից հողաբուրների խմբա-  
կան հրացանազարկից։ Այդ կրկնեց մի քանի  
անգամ. այնուամենայնիւ թշնամին խուժեց

հողաբուրն և տեղի ունեցաւ տար կռիւ պաղ  
զէնքով։ Սասրիանոսը, Կանտոգոնին և Բեշե-  
րիչը սպանւեցին. Կիրջալին և Միխայիլեակիմը  
բաջարար պաշտպանւում էին, բայց ընկեցին  
հողաբուրից։ Յանկարծ Կիրջալու գլխին լսեց  
մի սպառնալի ձայն.

—Ահ, չուն... վերջապէս ես քեզ գտայ։

Կիրջալին ճանաչեց Նեգոյին, զատարոժ-  
ների հրամանատարին և յիշեց Բաղդրադը։

Նոցա սրերը խաչեցին և Կիրջալին ընկաւ.

—Պաշտպանիր, Միխայիլեակիմ, — գոչեց նա  
թուլացած ձայնով. բայց արնատուն ինքն էլ  
վիրաւորւած էր։ Չնայելով դորան, նա խլեց  
Կիրջալուն և մի քանի մարդկանց պաշտպանու-  
թեամբ բաշ տեց նորան Պրուտի միւս կողմը,  
որտեղ ինքն էլ ցած ընկաւ ձիուց և մեռաւ։

Տեսնելով, որ Միխայիլեակիմը կենդանի  
չէ, Կիրջալին հեծեծաց.

—Քեզանից էլ զրկւեցի, իմ բարեկամ...

Կէն, որդէ... էլ չեմ տեսնելու ձեզ...

Նա ուշաթափւեց և պտտագորակի վերայ  
տարեց Սկուլեանի, իսկ այնտեղից Քիշնեան  
վանորը։



—Է՛հ, նրանց «այգը», լաւ կատարեցինք, առաց հրամանատար Նեղոյը կռիւց յետոյ, նըստած խարսիկի մօտ և բաշելով ծխամորճը: Վերջապէս, ձեռքս ընկաւ այգ զազան Կիրջալին:

—Բայց ի՛նչ վատ բան էր արել նա բեզ, որ դու չարացած ես նրա գէմ. հարցրեց ետառուր:

—Դու յիշմում ես Կորդակին:

—Ի՞նչպէս չյիշել—յիշում եմ: Է՛հ գորահից քիչ գուրս եկաւ:

—Իսկ յիշում ես ով էր նորա հետ բարեկամ:

—Նայնպէս յիշում եմ. զա բաշկար Իվանդին էր:

—Իսկ Տետերային:

—Էլի-հօ, չյիշեմ:

—Ա՛յ, ա՛յ, մենք նորա հետ միասին ծառայում էինք Նեկրասի մօտ: Մի անգամ մենք նորա հետ բուլղարական իշխանի Ստրիբօժի մօտն էինք: Նորան գուր եկաւ ջահիլ իշխանագլուխը: Այնտեղ էր և այգ Իվանդին, մի ինչ որ իշխանի որդին, բայց Տետերան նորան ճանաչել անգամ չէր ուզում և ուզողի առաց Ստրիբօժուն, որ խնդրում է գտեր ձեռքը:

Իշխանը համաձայնեց. հարսանիքը խաղացին\*) և Տետերան տարաւ կնոջը 25 կնիօփօզ, իսկ ես գնացի Բարազազ, որտեղ և ընդունեցի ինձ մօտ ալբան Կորդակուն: Վեց ամսից յետոյ ինձ մօտ եկաւ այգ Իվանդին և խնդրեց ինձ ուղեցոյց տալ Տետերայի մօտ. ես տւի Կորդակուն, իսկ կէսօրից յետոյ գնացի նոցա յետևից: Հասնելով Տետերայի մօտ, ես նորան գտայ արեան մէջ և մահամերձ: Տեսնելով ինձ, նա միայն կարողացաւ ասել. «սպանողներն Իվանդին և կինս են... վրէժ առ արեանս փոխարէն» և մեռաւ: Ես երգեցի վրէժ առնել: Իշխան Ստրիբօժը, լսելով գտեր փախուստը Իվանդու հետ և Տետերայի սպանելը մեռաւ զարտից... և միայն 25 տարուց յետոյ իմացայ Կորդակու մահը և ճանաչեցի Կիրջալուն... Է՛հ և վրէժս առայ... Հակիմը ճանաչում էր Կիրջալու մօրը: Նա Տետերայի կինն էր և մեռաւ ժանդալտի ժամանակ. տեսել էր մի անգամ և Իվանդուն, բայց չգիտէր, ո՞ւր կարաւ: Այժմ եթէ իմ սուրը օխալելի է, ապա Մահամեղը

\*) «Сыграть свадьбу» — հարսանիքը խաղալ — այս ոճը, որը խիստ համապատասխանում է ուսուականին, գործ է ածւում չեքակի բարբառում:



կվերջացնի իմ տեղը... Ռուսները կյանքն են տալով ինն և նա կմեռնի կախազանի վերայ:

Անցաւ մօտ երկու շաբաթ սկսականական կռիւից լիտոյ: Կիրջալին արդէն սկսել էր ուղղել. շնորհիւ վանական Պաւլի առանձին հագատարութեան—երբ բերին Կիրջալուն և նա տեսաւ նորա կրծքի պատկերիկը, չգիտես ինչո՞ւ, տրտաւեց և անձամբ սկսեց հոգ տանել նորան—նորա առողջութիւնը արագ վերականգնում էր:

Մի անգամ երեկոյեան, արեւ մայր մտնելուց առաջ, հայր Պաւելը և Կիրջալին դուրս եկան դուռը նստարանի վերայ նստելու: Կիրջալին շտապեց տխուր էր և, թուում էր, հագիւ չէր լաց լինում: Երեկան միտիթարում էր նորան: Զուտով հեռում, ճանապարհի վերայ բարձրացաւ փոշու ամպը և լուեց զանգակի ձայնը: Զիերը թռչում էին արագ քայլերով գէտի վանքի դռները և շուտով կանգ առան.

կառքից դուրս թաւ մի պնդակազմ զինւորական. գա կապիտան—ստրիկան էր:

—Բարե ձեզ, հայր Պաւել, ասաց նա, մօտենալով օրհնութիւն տոնելու... Ես ձեզ մօտ գործով եմ եկել... Զեզ մօտ է բուլղար Կիրջալին:

—Ես եմ Կիրջալին: Ի՞նչ էր կամենում:

—Այդ դէպքում սլաւոստաւիր, սիրելիս, հաշիւդ վերջացնել թուրքերի հետ, կորուկ ասաց ուստեղէն:—Քեզ պէտք էր գորան, աւելացրին ուշաթափութեան մէջ, և արհեստին:

Երբ, նա կատարեալ խեղացնորութեամբ մինչեւ և արտասանում էր անկապ խօսքեր. ընկալաւ էլ մնաց նա մինչև հօր հետ տեսակին առան վերջին բոլորին: Ոչ Կիրջալու անունն տուց թուրքին, ոչ մինչև անգամ Բուխարեստի նորան:

—Մի խնդրէր, ձայն տուց Կիրջալին մեծանկով վանականի ստերը և համբարելով նոցա: Օրհնիր, հայր, ներիր և ազօթիր ինձ համար:...

Եւ նա ցնցեց չղթաները. զինւորներն ահաբեկւած, լիտ փախան նրանից...

—Միք վախենայ, ասաց նա,—ես զինութեամբ եմ:



Ոստիկանը հրամայեց զինւորներին նստել  
նորա հետ սայլակը և տանել Սկուլեանի\*)։  
Սայլակը շարժւեց, հայր Պաւելը լացեց և ա-  
սաց արտասուքների միջոց։

— Ես կգնամ նորա յետեից խնդրելու մու-  
սուլմաններին չնորհել նորա կեանքը։

*Արա Կարապետի Գիրքը և Լուրեր։*  
... ամբար ամառներ

Ժեռո—երբ բերին Կիրճալուն և  
տեսաւ նորա կրծքի պատկերիկը, չգիտես ի՞նչ  
չնո, արտասուեց և անձամբ սկսեց հոգ տանելը,  
նորան—նորա առողջութիւնը արագ վերադառնալու  
կանգնում էր։

Մի անգամ երեկոյեան, առնաճիւղը կատաղեց  
լուց առաջ, հայր Պարթ, գիւղերն ու շէնքերը, մին-  
եկան քրտնաբերեցաւ գտաւ իւր աղջկան։ Երբ Սա-  
րան հասաւ Եաստի, բոլորը կարծում էին, թէ  
Մահամեղը կպատժէ նորան, հայրական զգաց-  
մունքները վիրաւորելու համար, կպատուհասէ։

\*) Այդ հերոսի ձերբակալութեանը ներկայ էր Ռուսաց  
մեծ քանադակը Վ. Ս. Պուշկինը, որի մասին մի հատուած  
ունի գրած իւր հեղինակութիւնների VI հատորում։

Ջուլյմային և գտաւ երեխան ջուրը կշարտե-  
րայց բոլորովին հակառակը դուրս եկաւ։

— Սեկիմա, իմ թանկագին, հանդիպեց նա  
նորան և գիրկն առնելով երեխային, սկսեց  
համբուրել նորան։ Մինչև անգամ Ջուլյմային  
էլ ներեց։ Տալով նորան երեխային, նա նորից  
դարձաւ գլպի դուստրը. բայց սա կանգնած էր  
լուս, ինչպէս մարմարէ արձան, չճանաչելով  
հօրը։ Խղճուկ, նա խելորը կորցրել էր։ Տուգո-  
րի սպանութեան գլպրից յետոյ նա բնկաւ  
խորին ուշաթափութեան մէջ, և երբ նորան ուշ-  
քի բերին, նա կատարեալ խելացնորութեան  
մէջ էր և արտասանում էր անկապ խօսքեր.  
այդպէս էլ մնաց նա մինչև հօր հետ տեսակ-  
ցութեան վերջին րոպէն։ Ոչ Կիրճալու անունն  
յիշելը ոչ սրբին, ոչ մինչև անգամ Բուխարես-  
տում մեռած իշխանուհու մահւան ներկայ  
գտնւելը, ոչ մի բան չէր կարողանում վերա-  
կանգնել նորա յիշողութիւնը։ Մահամեղը նա-  
յում էր նորան արտասուքով և ասում. «Ալտ-  
հը մե՛ծ է, պէտք է հպատակւել բաղդին»։ Հա-  
կիմն անիծում էր այն օրն և ժամը, երբ սար-  
եց նորա տեսակցութիւնը Կիրճալու հետ։

Մի բանի օրից յետոյ Եաստի հասաւ Նե-



գոյր, որը եկաւ Մահամեդի մօտ և պատմեց Սկուլեանի ընդհարման մասին:

—Է՛հ, իսկ ի՞նչ եղաւ այդ խմբի առաջնորդը, հարցրեց Մահամեդը:

—Կարծեմ ես նրան խնդրողեցի, պատասխանեց Նեգոյր, բայց եթէ ես սխալուել եմ, ապա Իւսուֆը կպահանջի նորան յանձնել և կրեւրէ այստեղ:

Մի քանի ժամանակից յետոյ Իւսուֆից սուրհանդակ եկաւ և յայտնեց, որ Ռուսները յանձնել են Կիրջալուն և նորան բերում է Շատուի: Այդ շափազանց տխրեցրեց փաշային, որովհետեւ նա պէտք է պատժէր այն մարդուն, որը իւր զօտեր ամուսինն էր և թուան հայրը: Բացի այդ, նա մտաբերում էր նորա ծառայութիւններն Իզմայլում և Սրիխտարիայում և որ ինքը նորան է պարտական իւր կեանքը...

Մինչ այդ հակիմը, լսելով, որ Կիրջալուն չուտով բերելու են և որ բացելու է իւր մասնակցութիւնը նորա Սեյիմի հետ տեսնելու մէջ, վճռեց խօստովանել Մահամեդին. և հէնց նոյն օրը երեկոյեան, երբ Մահամեդը, Նեգոյր և Ահմեդը խօսակցում էին միմեանց հետ, ներս փազեց սեննակն և ընկաւ փաշայի ոտքերը:

—Ներիր ինձ տէր, բացականչեց նա,— ես պէտք է մեղադրեմ այն մարդուն, որը հիւսէյինի մահաւն պատճառ եղաւ... Հափուրը թոյլ տեց իրեն կաշառելու և այգին մտցրեց Կիրջալուն, որը և սպանեց հիւսէյինին:

—Վերկաց և դուրս կորիր, ասաց Մահամեդը, և դառնալով Ահմեդին աւելացրեց.— Գաղելի—Ահմեդ, յանձնում եմ քեզ յանցաւորին. նա արժանի է քս վրէժին:

—Իմ վրէժը չի վերադարձնի ինձ որդիներին, պատասխանեց Ահմեդը,—այդպէս էր հաճելի Ալլահին... Ես ներում եմ նորան և քեզ էլ նոյնն եմ խորհուրդ տալիս:

—Ես ուրախ կլինեմ, բայց իմ պարտականութիւնը թոյլ չի տալիս:

Այդ իսկ վայրկեանին ներս մտաւ Արզալին և ասաց թէ Կիրջալին բերւած է:

—Ի՞նչպէս վարւեմ նորա հետ, հարցրեց նա:

—Նստեցնել բուրգում, և դնել վեց մարդ պահապան, պատասխանեց Մահամեդը:

Արզալին գնաց զէպի գուռը, որտեղ կանգնած էր սայլակը:

—Կիրջալի, ասաց նա, դու ոչ վաղուց



չնորհեցիր ինձ իմ կեանքը, բայց ես ոչինչ  
չեմ կարող անել քեզ համար... Եկ իմ յետևից։

Եւ Կիրճալին ուղղեց գէպի բանդը։ Ար-  
դալին գիտէր, որ Կիրճալին մեղաւոր չէր  
Տուգորի սպանութեան մէջ. նորանից իմացան  
և բոլոր մնացածները. այդ պատճառով նորա  
վերայ նայում էին մեծ կարեկցութեամբ։ Հա-  
կիմն և Զույլման, երբ Կիրճալուն տարան  
բուրգը, սխեցին փափալ, բայց գործին օժան-  
դակել գեռ չէին կարող։

Մինչ այդ մուլթ և օտուր բուրգում Կիր-  
ճալին ընկաւ յարգի վերայ և դառը լաց եղաւ։  
Մի քիչ ժամանակից յետոյ արգելանի դուռը  
բացեց և բուրգը մտաւ ներքիններէից մէկը,  
յապտեքը ձեռքին. նա գրեց ջուր և մի կտոր  
հաց. իսկ յետոյ, նայելով կալանաւորին, հառա-  
չեց և գնաց։ Կիրճալին յուսահատութեան մէջ  
ընկաւ, և ցանկաւորելով իւր բաղդից շուտով  
ընեց։



Անցաւ մի րանի օր։ Մահամեղը յետա-  
ձգում էր պատիժը մինչև Ստամբուլից պատառ-  
խան օտանալը։ Մի անգամ երեկոյեան նա  
մտաւ գտեր սենեակը, որը անգաղար աղօ-  
թում էր, նայելով նորան, խորը հառաչեց և  
գրկեց իւր թոռին, որը մօտ վազեց նորան։

— Սելիմա, լսում ես արդեօք ինձ, բացա-  
կանչեց նա,—բայց Սարրան ոչ միայն չէր  
լսում այլ և չէր տեսնում ոչ որի. առաւօտից  
մինչև ուշ գիշեր նա շարունակ աղօթում էր սե-  
նեակի անկիւնում եղած սուրբ պատկերի առաջ  
և ոչ որի հետ չէր խօսում. և եթէ խելքը  
գլուխն էր գալիս, ապա խիտ լալիս էր։

Մի րանի ժամանակից յետոյ փաշային  
յայտնեցին, որ Ստամբուլից սուրհանգակ է  
եկել։ Փաշան դուրս եկաւ, վերցրեց նրանից  
նամակն և կարգալով գտնաւուեց։

— Վաղը պատառխան կտանաւ, ասաց  
նա սուրհանգակին և յետոյ աւելացրեց ներքի-  
նուն. — ասա Ահմեդ փաշային և ատաման Նե-  
գոյին, որ ես սպասում եմ նոցա երեկոյեան  
նամաղից յետոյ։



Բայց տճա հասաւ և երեկոն. արդէն փաշայի սենեակներում հանգել էին կրակներն, խոկ Կիրջալին, իւր մութ միայնութեան մէջ վշտից կտորւած, ազօթում էր և լալիս, շիմահալով ցերեկ էր թէ գիշեր: Յանկարծ բուրգում, սենեակի առաջ ազմուկ լսեց, բանալին փականքի մէջ շրխկաց, դուռը բացեց և ամբողջ ներս մտան, լաղտերը ձեռներին, երկու ներքինի գիմակներով. դրան մէջ կանգնած էր Արգալին: Կիրջալին կարծեց թէ գահիճներն են եկել, բայց երբ ներքինիներից մէկը վերցրեց գիմակը, նա զարմացած բացականչեց:

— Զուլլմա... Ի՞նչ ես ուզում ինձանից... Գուցէ եկել ես դաւաճանուհու հրամանով ծաղրել իմ թշուառութիւնը:

— Քո Սարրան երբէք չի՞ դաւաճանել քեզ... Այդ թշուառութեան մէջ ծիծաղելի բան չկայ... Նա խելացիորէլ է քո սիրուց:

— Խելագարուել է... Սարրան խելագարուել է... Ռ՛հ Ատուած, ի՞նչ է նշանակում այդ... Առա, տտա, ի՛նչպէս այդ պատահեց...

Զուլլման պատմեց, ինչ որ պատահել էր Պիտեշտում, Սերրիայում և Նաոոայում: Կիր-

ջալին լալիս էր, ատամները կրճտացնում և վեղկեղացնում շղթաները:

— Ապրել եմ ուզում, ապրե՛լ, որպէսզի բաւեմ նորա դէմ գործած յանցանքս:

— Գու կապրես, բացականչեց Հակիմը, եթէ չես մատնի ինձ փաշային, որ ես քեզ ներս թողի հարկը:

— Կիրջալին չի մատնի, փշշացրեց նա:

— Այդ գէպրում դու ազատ կլինես... Գնանք Զուլլմա:

Եւ նորա գուրս եկան: Արգալին չգիտէր Զուլլմայի և Հակիմի մտադրութիւնը, ապառել կալանաւորին, այլ կերպ, լինելով հեծելազօրի գլխաւոր, նա նոցա ներս չէր թողնի ամբողջ, թէպէտ նոցա ձեռքում կար Մահամեզի մատանին, իբրեւ նշան, որ նոքա եկել են նորա կողմից: Բայց Հակիմը խորամանկ էր և իւր խոստումով ուզում էր միայն հանգստացնել Զուլլմային:

Հետեւեալ օրը Կիրջալու մօտն եկաւ Ահմեզ փաշան և ասաց նորան.

— Ես եկել եմ Մահամեզի կողմից. նա կշնորհէ քեզ քո ազատութիւնը, եթէ կմատնես մեզ Իօրգալուն... Նա կարձակի քեզ խօս-



քիզ հաւատացած և դու կերթաս Արշիրեան վանքը, դուրս կըսես նորան տփանդից և կտաս մեր ձեռքը... Վազն տռաւօտեան սպասում է քեզ պատիժը. ուրեմն ընտրիր:

— Ես արգէն ընտրել եմ, — մահ:

— Իզուր... փաշան քեզ աւելի է սիրում, քան երբեքիցէ սիրել է... Բայց եթէ դու մահ ես կամենում, ապա կստանաս:

Եւ նա դուրս եկաւ, դուրս բաց թողնելով: Մահմեդականների սովորութեամբ, մահւան գատապարտւածը պէտք է օգտուէր մարդկանց ընկերութիւնից և այդ պատճառով Ահմեդը հրամայեց պահապաններին խօսակցել կալանաւորի հետ: Զինուորներն սկզբում խօսում էին աղամայ, բայց յետոյ կենդանացան և նոցա ու կալանաւորի մէջ խօսակցութիւնը տաքացաւ, որի միջոցին Յիրջալին մի ինչ որ քան գլխի ընկաւ և յանկարծ հարցրեց.

— Բարեկամներ, կարելի է արդեօք յոյս դնել ձեր ազնւութեան վերայ:

— Ինչո՞ւ ես հարցնում այդ:

— Հա՛, դէ մտիկ տւէր. ինձ մի քանի ժամ է մնացել ապրելու, մինչգեւ ես փողեր ունեմ, որոնց կէսը ես ձեզ կտայի, եթէ դուր բարե-

խղճաբար կատարէիք իմ յանձնարարութիւնը մահիցս յետոյ:

— Երբեւում ենք մարդարէով, որ կկատարենք քո բոլոր ցանկութիւնները:

— Հաւատում եմ ձեզ: Բայց դրանք թաղւած են գետնի տակ. ընդամենը շորս կարաս օտկէ դրամներ են. երկու կարասը տւէր Արշիրեան վանքը հայր Եւզինին, մէկը Յիրջինեան վանքը, հայր Պաւլին իմ որդու կրթութեան համար, իսկ մէկը բաժանէր ձեր մէջ. այդ փողը բաւական է ոչ միայն ձեզ, այլ և ձեր թոռան թոռներին... Որպէսզի գտնէր տեղը, դուր կգնար Եասսից ոչ հեռու ճանապարհով, այնտեղ կտեսնէք մի քանի տանձենիներ. դոցանից մէկը հէնց ճանապարհի մօտն է կանգնած, դորանից դուր կգնար գէպի արեւմուտք, կհամարէր տասը տանձենի, մօտենալով տատնեմէկին, կծուէր գէպի հարաւ, գէպի մի մեծ քար, և այնտեղ կգտնէր փողերը:

— Է՛հ այդ մեզ անհասկանալի է... աւելի լաւ է դու զիշերը մեզ տար այնտեղ, ասաց մէկը:

— Հա՛, հա՛, տար, ասացին մնացած վեցը: Մենք բոլորս կգանք քեզ հետ:



—Դէ, ես ինչպէս կարող եմ շղթաների մէջ:

—Մենք կհանենք շղթաներն և միայն պարանոյ կկապենք քեզ:

—Իսկ եթէ փաշան իմանայ... 2է որ գրա տեղ ունեւորիցդ կթռչեն ձեր յիմար գող-րաները:

—Այդ մասին անհոգ կաց... Մենք բա-նալի ունենք և դուրս կգանք աննկատելի:

—Էաւ դիտար:

Կիրջալուն աղատեցին շղթաներից, և երբ ամբողջում ամենքը պարկեցին քնելու, բո-յսրը դուրս եկան բուրգից: Դուրս գալով բա-ղաքից, Կիրջալին տարաւ զինուորներին Կոտ-մարեան ճանապարհով և, հասնելով մինչև յայտնի տանձենին, սկսեց տանել նոցա գաշ-տով, մինչև որ վերջապէս հասցրեց բարին:

—Փորեցէր այստեղ, ասաց նա, իսկ ին-քը թինգ տեց բարին:

Զինուորները սկսեցին փորել հաթաղան-ներով: Երկար փորում էին նորա, բրանելով ու տնրտնրալով: Կիրջալին դուրս եկաւ համ-բերութիւնից:

—Դէ, շուտ էր պրծնելու, գրողի տա-րածներ, գոռաց նոցա վերայ:

—Ապա ինքդ փորձիր փորել, այն ժամա-նակ կիմանաս թե՞ թե՞ գործ է:

Մտածելով, որ իրենք եթէ են և հետե-ւապէս վախենալու բան չկայ, նորան բանդե-ցին և հաթաղան տւին: Կիրջալին սկսեց փո-րել. յանկարծ հաթաղանի բերանը զննող և ենիշերկները վրայ ընկան փոսին. Կիրջալին մի ակնթարթում խրեց հաթաղանը մէկին և միւսին, իսկ յետոյ դուրս բաշելով երրորդի գոտիկից ատրճանակը, թռաւ բարի վերայ, կանգնեց պաշտպանողական զիւրթով և բարձր շւացրեց:

—Փորձեցէր այժմ մօտենալ ինձ, անպի-տաններ, ասաց նա, մի ձեռքում բռնած հաթա-ղանը, միւսում ատրճանակը:

Մենիշերկները շշկուեցին և վախենալով, որ նորա շուրջը կարող էր նշան լինել միւսնե-րի համար, սկսեցին փախչել:

—Վաղուց էր պէտք այդպէս, վախկոտ-ներ, ասաց նա և ինքը թռաւ ամբողջ ուժով իրեն ծանօթ ճանապարհով դէպի լեռները: Ազատ զգալով նա համարում էր իրեն հերոս,



և ոչորից չէր վախենում: Հասնելով մի մօլ-  
գաւական գիւղիկ, նա գտաւ բարեկամներից  
մէկին, աւագակին և վերցնելով նորանից լաւ  
ձի, դամասկեան սուր և ուրիշ զէնքեր, գնաց  
արջերեան վանքը. երկու օր գնալով, նա յան-  
կարժ տեսաւ անտառում սպապների և արնա-  
ուտների կռիւր և, ձիուն խթելով, թռաւ  
արագութեամբ գէպի արնաուտները. վերջին-  
ներս ճանաչեցին և ծածկեցին նորան սպապ-  
ներից, որոնք յարձակեցին նորա վերայ. մի  
ժամից յետոյ սպապներէ խումբը ոչնչացած  
էր և հազիւ մի քանի մարդիկ ազատեցին  
փախչելով:

— Դէ, թողէր գրանց փախչի, առաց  
նա, և լուր տանեն իրենց յաղթելու մօտին  
Մահամեդին, իսկ մենք գնանք Երջիր:

Չորրորդ օրը նա արդէն հայր եւզենի  
և Իօրգալու գրկումն էր, որոնց պատմեց բո-  
լոր իւր գլխին եկածը. նա զգուշացրեց Իօր-  
գալուն, որովհետև Մահամեդը խոստացել էր  
նորա գլխի համար մեծ գումար:

Զինուորական խորհրդում վճռեց գնալ  
Նասսի վերայ և յետ առնել Մահամեդից: Կիր-  
ջալին հրաւիրեց առաջից գնալ, և հետեւալ

առաւօտ զօրքն արդէն պատրաստ էր ճանա-  
պարհ ընկնելու:

Անցել էր արդէն հինգ օր Կիրջալու փա-  
խուստից. Մահամեդն իմանալով այդ գլխի-  
կոր վերադարձած յանցաւոր ենիշերինեբից,  
նրանց նոցա և հրամայեց Կիրջալու փողերը  
տանել իւր գանձարանը: Ահմեդն և Նեգոյը  
ճառապարհեցին խռովարարներին խաղաղա-  
ցեալու, իսկ Մահամեդը մնաց Նասսում: Այդ  
ժամաակ Նասսի եկաւ մի ինչ որ արեգայ. լուր  
տարածեց, որ նա գիտէ հիւանդներ առող-  
ջացնել. փաշան հրամայեց կանչել նորան  
գոտեր և առ: Սարրան երբէք չէր տեսել նորան,  
բայց եր, նա ներս մտաւ, իսկոյն թռաւ նրա  
մօտ բաց ցականչելով՝ «Կիրջալի» . բայց յետոյ  
յետ թռաւ տեսնելով որ սխալւած է և նորից  
ընկաւ մի անսակ մոռացութեան մէջ: Զույլ-  
ման և երեխան նոյնպէս մօտեցան նորան,  
բայց դա Կիրջալին չէր: Արեգան, խոստովա-  
նելով Զույլմային, թէ եկել է միջնորդելու  
Կիրջալու համար, մնաց Սարրայի մօտ:

— Թող գայ Կիրջալին, առաց Մահամեդը,  
երբ նորան յայտնեցին արեգայի այցելութեան  
նպատակը. — և թող իմանայ փաղիշահի գլխա-



սրտուլթիւնը... թող վերցնի իւր և իմ սրտուս...  
ես ներում եմ նորան...

Նոր լուր հասաւ, որ խռովարարները ջարդել են փաղիշահի զօրքերին և ապստամբութիւնը իւրարանշիւր ժամ մեծանում է: Փաշան հրամայեց նահանջել գէպի Շասսի և Ահմեդը Նեղոյի հետ յետ դարձան: Մահամեդը նոցա օգնութեան ուղարկեց Արզալուն, հրամայելով՝ դրանել խռովարարներին Շասսին մօտիկ: Քայց լսելով, որ խռովարարների առաջնորդն էլի նոյն Կիրջալին է, վճռեց ինքն էլ մասնակցել կռիւն:

Ուրբաթ օրն էր: Այդ օրը Սարրան սովորականից վաղ վերկացաւ. սաղմոսներ երգելը արեղայի հետ, նորա նմանութիւնը Կիրջալուն և ընթոյշ խօսակցութիւնները, սկսել էին նորան ուշրի բերել: Զույլման նկատելով, որ նորա Սարրան անհամեմատ լաւ է, վաղեցայդ մասին Մահամեդին հաղորդելու:

— Փառք Ալլահին, պատասխանեց նա և, հանգստացած գնաց բանակը, որը կազմւած էր սպաններից, ենիշերիներից, և զապարօթեան կուրէններից: Այստեղ նա սպասում էր ընդհարելու բաղմաթիւ խռովարարների հետ,

այդ իսկ պատճառով հրամայեց զօրքին կանգնել պատերազմական դիրքով: Ամեն բան պատրաստ էր, երբ սուրհանդակն եկաւ հաղորդելու, որ ապստամբների գունդն արդէն մօտ է:

— Մեծ ոյժ է արդեօր, հարցրեց Մահամեդը:

— Միայն հեծեալներ են, որոնց առաջնորդում է Կիրջալին:

— Ով նորան կենդանի կրճնի — հարիւր բաւի ոսկի և ամենալաւ նժոյգն իմ ախոռից, կանչեց Մահամեդն և հրամայեց սպաններին յառաջ շարժել:

Հազիւ թէ սպանները ճանապարհ էին լինել, երբ հեռւից երևաց Արզալու զօրքի ահագին կոյտը, որին հալածում էին Կիրջալու արնաուաներն, անխնայ ջարդելով աջ ու ձախ: Դաշտն սկսեց ծածկւել գիւղիներով. Կիրջալու եամիշին փոշոփոցում էր բամուց և նա թռչում էր զօրքերի մէջ, կարծես թեք առած: Օգնութեան հասած սպանները նոյնպէս ջարդեցին և սկսեցին փախչել: Մահամեդը ցուելով նայում էր կռուողներին:

— Եւ այդ ոգորմելի թշուա չներբ կտորում են իմ զինւորների, բացականչեց նա, և



հրամայեց միասին արձակել, իսկ Նեգոյին իւր  
զապարոյթիներէ հետ առաջ շարժեց: Արնա-  
ուաները յետ կանգնեցին, բայց Կիրճալին,  
նկատելով իւր սկուզեանական ախոյեանին,  
ընկաւ Նեգոյի վերայ և վերաւորեց նորա ձեռ-  
քը, բայց վերջինս դուրս բաշեց ատրճանակը  
և արձակեց Կիրճալու վերայ, որը թերեց  
թամբի վերայից և վայր ընկաւ: Մահամեզը  
տեսնելով, որ Նեգոյն ընդհարեց Կիրճալուն  
հասաւ նոցա մօտ, բայց արդէն ուշ էր:

— Ներիր ինձ, սիրասիկ, հառաչեց Կիր-  
ճալին— Իօրդակին արջիբեան վանքումն է...  
արա ինձ ինչ որ կամենում ես:

Մահամեզը ցած թռաւ ձիուց և վերքը  
անվտանգ գտնելով, հրամայեց խնայն տանել  
նորան ամբողջը, իսկ ինքը գնում էր նորա կող-  
քից: Նորա ներկայութիւնը դաշտում պէտք  
չէր, որսման տեղ արնաուաները յագթուցին:

Կիրճալուն դրին յատակի վերայ. հայր  
Պաւէլը ցանկացաւ հետապօտել վերքը, քանդեց  
բաճկոնակն և, գտնելով կրծքի վերայ այն տե-  
ղը, սրտեղից արիւնն էր հոսում, և իսկ դուրս  
ծնել գնդակը. Կիրճալին ուշաթափ էր, բայց

էրբ արեղան դուրս ծծեց արիւնը, նա բացեց  
աչքերը:

— Հայր Պաւէլ... Մահամեզ փաշա... Նե-  
րէր... թող տէր տեսնել... Սարրային...

Փաշան հրամայեց բերել դստերը. հայր  
Պաւէլն այնքան զբաղւած էր, որ չլսեց այդ  
հրամանը. Զույլման ներս բերեց խելագարին,  
որը տեսնելով ծանօթ դէմքն, ընկաւ նորա  
վերայ ճշալով.

— Նա է, նա է:

— Սարրա... թանկագինս... ներէր... հե-  
ծեծում էր Կիրճալին:— Ես մեղաւոր չեմ:

— Գիտե՞մ, գիտե՞մ... պատասխանեց նա,  
և սկսեց ծածկել նորան կատաղի համբոյրնե-  
րով: Փոքրիկ Կիրճալին, որի ձեռքից բռնել  
էր Զույլման, դուրս թռաւ նրանից, և մօտ  
վազելով հօրը, թոթուցեց:

— Հայրէկ, հայրէկ...

— Որդեակ իմ... Սարրա... հայր Պաւէլ...  
Մահամեզ... ներեցէր... մե... ու... ն... ու... մ...  
եմ...

— Ո՛չ, դու չես մեռնի. բացականչեց Սար-  
րան: Մենք գեռ էին բաղդաւոր կլինենք...



Հայրս ներում է րեզ... Ես սիրում եմ, սիրում րեզ, Կիրճալի:

Եւ նա սեղմեց նորա կրծքին, բայց նա արդէն մեռած էր: Զուլման յետ քաշեց նորան...

—Հանգստացիր, իմ թանկագին... ասաց նա.—նա մեռաւ...

—Մե... ա՜մ... և նա զրթկաց ամուսնու գիտիլի վերայ... մի վայրկեան... և նա նոյնպէս չկար, ինչպէս և Կիրճալին:

Մահամեղը լացեց և ուզում էր կռանալ գէպի դուստրը, բայց երեխան պահեց նորան.

—Ձեռ մի տայ դրանց, պապիկ... նորա հաշաւեցին:

Փաշան գլուխը բռնեց և յուսահատ բացականչեց.

—Ո՛հ դժբաղդս... երկուսից էլ զրկեցի... նա բռնեց երեխայի ձեռքը և սկսեց համբուրել նորան.—միմիայն դու մնացիր ինձ մօտ... լալով աւելացրեց նա:

Այդ րոպէին ներս մտան Ահմեդը, Արդալին և Նեզուրը: Մահամեղ փաշան լուռ... ցոյց տուեց նոցա գիտիները:

—Ա՛հ, վերջապէս Տեաերու մահան վրէժն առա՛յ, բացականչեց Նեզուրը:

Հայր Պաւլը, որը կանգնած էր գլուխը կախ, յանկարծ ուշքի եկաւ և, պատառելով հագի վերարկուն բարձր ասաց.

—Ես եմ Տեաերու սպանողը... Ես իշխան Իլվանդին եմ և Կիրճալին իմ որդին է... Գու ուղանեցիր անմեղին, դէ սպանիր և մեղաւորին...

Նեզուրն արհամարհանելով նայեց նորան:

—Ահա քո ոճրագործութեան վրէժն, առաց նա ցոյց տալով գիտիները:

Արեղան ծունկ չորեց:

—Մեծդ Աստուծ, բացականչեց նա սիրտ կորտոյ ձայնով: Պատժիր ոճրագործիս, և հանգստացրու այս անմեղների հոգիները, որոնց ես, անպիտան ստրուկս, քցեցի յանցանքի մէջ:

Մահամեղը հեկեկում էր երեխին զրկած: Նորան մօտեցաւ Ահմեդը:

—Հանգստացիր, ասաց նա.—երեխ այսպէս էր գրւած բազմի գրքում... Ալլահը մե՛ծ է:






Handwritten text in Cyrillic script, likely a name or address.

12. 3. 49 p. L. D. L.







ՀՀ Ազգային գրադարան



NL0166098



121

8

F-43